

# ԱՐԴԻՇ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա Գ Ի Բ

№ 8 1895

Օ Գ Ո Ս Թ Ո Ւ

1895 № 8

Ե Օ Թ Ե Ր Ո Ր Ո Տ Տ Տ Ա Ր Ի

Երիս

1 Գ. Յ Ա Պ Ա Ա Ա Ն, Գ. Խ. . . . .	1051	Լուսնկալ գիշեր (պատմւածք):
2 ՄԱՏՈՒՐԵՍՆ, ԱԼԵՔՍԱՆԴՐ . . . . .	1058	***-ի ալբոմում (բանաստ.):
3 " " " " "	1059	Ետա և վափազում (բանաստ.):
4 ԼԵՐՄՈՆՏՈՎԻՑ, ՏԵՐ-ԳԵՂՈՐԻԵՍՆ . . . . .	1060	Փախստական (պոէմա):
5 Ա. Շ. (ԹԱՐԳՄ.): . . . . .	1066	Զութմակ (պատմւածք):
6 ԿՐՈՏԿԻՑ Թ. . . . .	1074	Համոզմունքի մարդ (պատմւածք):
7 ՄՈՒՐԱԴԵՍՆՑ Յ. . . . .	1079	Փոթիից-Յութմակու (ճանապ. նկատողութիւններ):
8 ԲԱՀԱԹՐԵԱՆՑ, ՍԱՐԴԻՍ . . . . .	1093	Հողալին և անձն, իրաւ. Հին-Հայաստանում Հրէական իրաւունքը:
9 ՎԱՐԴՈՒՆԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ . . . . .	1116	Ալֆոնս Գոդէի «Փոքրիկ ծալիւ»:
10 ԱՐԱՄԻՆԱՆԵԱՆՑ, ԱԻԵՏԻՔ. . . . .	1121	Ճամանակակից տեսութիւն — Նիւթեր հայկական խնդրի: Նորազոյն զարգացման պատմ. համար: Խնդրի զրութիւնը: Զեստէրի միախնդը և Գլադմատոն: Ռոզբերի և Սոլսբրի: Քննիչ լանձնաժողովը: Այլ նիւթեր: Յուցակ Սասունի աւելած դիսղերի:
11 Ա. Ա. . . . .	1156	Թիվլ. քաղաք. դպր. խնդիրը:
12 ԱԵՒԵԱՆ, Հ. . . . .	1161	Թատրոնի շուրջը V.
13 ՓԱՓԱՋԵԱՆ, Վ. . . . .	1165	Կամակներ Անգլիակից IV.
14 ԽՄԲ. . . . .	1174	Զանազան լուրեր:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐՈՒ. Մ. Գ. Ա-ԾԻՆԵԱՆՑԻ

Գիորգի Ա. Շ. Ռունիանա, Շուկա, 1 Ն 41.

1895



# ՄՈՒՐԾ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

## ԱՄՍԱԳԻՐ

№ 8 1895

ՕԳՈՍՏՈՒ

1895 № 8

ԵՐԵՎԱՐԴ ՏԱՐԻ

~~~~~

ԹԻՖԼԻՍ

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. Ա-0ՏԻՒԵԱՑԻ

Տիգրաֆիա Մ. Դ. Ռոտինանց, Գօլ. պր. ճ. № 41.

1895

Дозволено цензурою. Тифлисъ, 23 Августа, 1895 г.

## ԼՈՒՍՆՎԱՅ ԳԻՇԵՐ

ԳԻՒՑԻ ԴՐ ՄՈՊԱՍԱՆԻ

Թարգմանութիւն ֆրանսերէնից Թաղէռս Զաքարեանի

Աբբա Մարինիանին շատ սազ էր գալիս այդ զինւորական անունը։ Նա մի բարձրահասակ, չոր-չոր, մոլեւանդ, չափազանց յափշտակլող բայց միևնոյն ժամանակ ուղղամիտ և ճշմարտախօս մարդ էր։ Նորա բոլոր հաւատալիքները անխախտ և ամուր էին։ Նա անկեղծօրէն երեակայում էր որ ճանաչում է իւր Տէր Ասոծուն, գիտակ է նորա նախասահմանութեան, նորա մաքերին և նորա կամքին։

Երբոր նա մեծ-մեծ քայլերով ճեմում էր իւր գիւղական տան ծառուղիներում, նորա մոքի մէջ երբեմն ծաղում էր այսպիսի հարց. «ինչու համար է Ասուած այդ ստեղծել»։ Եւ նա յամա կերպով սկսում էր վճռել այդ հարցը, երեակայելով ինքն իրեն Ասոծոյ տեղ և համարեա միշտ հասնում էր իւր ցանկացած վըճռուին։ Ուրիշների նման նա չէր բաւականանում երկիւղած հնազանդութեամբ և չերմեռանդ բացականչութեամբ։ «Տէր, անիմանեալի են գործք քո, անհասանելի են կամք քո»։ Նա այսպէս էր գտում. «Ես Տիրոջ պաշտօնեաց եմ, հետեւաբար ես ոկտոք է իմանամ նորա խորհուրդները. և եթէ չեմ հասկանում՝ պէտք է աշխատեմ հասկանալ»։

Նա համոզւած էր որ բնութեան մէջ ամեն ինչ ստեղծւած է սքանչելի և անպայման հետեւողականութեամբ. «ինչուն և «որով-

հետեւ-ը միշտ հաւասարակշիռ էին նորա ուղեղում։ Առաւօտեան արշալոյսը ստեղծւած է նորա համար որպէս զի ուրախացնի զարթ-նողներին։ ցորեկը—արտերը հասցնելու, անձրեկը—նրանց ցողելու համար։ Երեկոն—նինջ բերելու, իսկ գիշերը քնելու համար։ Տար-ւայ չորս եղանակները միանդաման համապատասխանում են երկա-գործութեան պահանջներին։ Աբբացի սրտում երբէք կասկած չէր ծնում որ բնութիւնը չունի ոչ մի նպատակ և նախասահմանու-թիւն, որ ընդհակառակը արարածները իրենք են ստիպւած են-թարկւել տարւայ եղանակների, կլիմացի և նիւթի անողոք պայ-մաններին։

Բայց նա ատում էր կանանց։ Նա անգիտակցաբար ատում և բնագլմամբ արհամարհում էր նրանց։ Նա յաճախ կրկնում էր Քրիստոսի խօսքերը։ Կին գու, զի՞նչ կայ իմ և ընդ քոյ և աւելց-նում էր Վարձեմ նոյն ինքը Արարէլ անբաւական է կին արարածից։ Նորա համար կինը այն «երիցս անսուրբ» արարածն էր, որի մա-սին լիշում է բանաստեղծը։ Կինն էր առաջին մարդուն խաբող և գայթակղեցնողը և այդ թոյլ, այդ մոլորիչ ու վտանգաւոր էակը ոչ մի ժամանակ չէ դադարել իւր անիծած գործից։ Նա ատում էր կնոջ մեղսալից մարմինը, բայց աւելի ևս ատում էր նրանց սի-րող հոգին։

Նա ինքը շատ անգամ զգացել էր իւր անձի վրայ կանանց անխուսափելի քնքշութիւնը և, չնայելով իւր կառարեալ սառնա-սրտութեան, նա միշտ վրդովում էր սիրոյ այն անընդհատ պա-հանջի դէմ, առանց որի չէ կարողանում ապրել կանացի սիրտը։

Նորա կարծիքով Աստուած ստեղծել է կնոջ միմիացն տղամար-դիկներին գայթակղեցնելու և փորձելու համար։ Առանց նախա-զդուշութեան և առանց վտանգի անկարելի է մօտենալ նրանց։ Եւ մի՛թէ կինը նման չէ իսկական որոգայթի, երբ որ նա պարզում է իւր բազուկները գրկախառնելու համար, երբ որ նա ցցում է իւր շրթունքները դէպի տղամարդը համբուրելու համար։

Նա ներողամիտ էր միմիացն դէպի կրօնաւոր կոյսերը, որոնք, իրենց ուխտի զօրութեամբ, անվտանգ էին թւում նորան։ Սակայն նրանց հետ ևս նա խիստ էր վարւում որովհետեւ նրանց փակ և հնազանդ սրտերի մէջ ևս նա զգում էր այն կանացի քնքշութեան

հետքերը, որը նրանք արտայայտում էին նոյն իսկ դէպի ինքը, դէպի Աստծոյ պաշտօնեան: Նա զգում էր այդ քնքշութիւնը նրանց հնագանդ հայւածքների մէջ, որից զուրկ էին աբեղաների հայւածքները, նրանց յափշտակութեան մէջ, որը յատուկ է կանանց սեռին, նրանց չափազանց ջերմեռանդ սիրոյ մէջ դէպի Քրիստոսը. այդ սիրոյ մէջ նա նկատում էր կնոջ սիրտը, նորա մարմնական սէրը: Նա զգում էր այդ անիծած քնքշութիւնը նոյն իսկ նրանց հնագանդութեան, նրանց խօսակցութեան եղանակի մէջ. նրանց կախ ձգած աչքերի, նրանց արտասուքների և նրանց կատարեալ խոնարհութեան մէջ՝ երբ որ նա խստութեամբ յանդիմանում էր նրանց: Եւ երբոր նա զուրս էր գալիս կուսանոցից, թոթափում էր իւր վերարկուի քղանցքը և արագացնում էր իւր քայլերը կարծես փախուստ տալով վտանգից:

Նա ունէր մի քրոջ-աղջիկ, որը իւր մօր հետ միասին ապրում էր մերձակայ փոքրիկ տան մէջ: Նորա ցանկութիւնն էր որ այդ աղջիկը կրօնաւոր դառնայ:

Դա մի սիրուն, վառվուն ու ծիծաղկոտ աղջիկ էր: Երբ որ աբբան նորա գլխին խրատներ էր կարդում, նա չէր դադարում ծիծաղելուց. երբ նա բարկանում էր, նա սկսում էր համբուրել աբբային, սղմում էր կրծքին և աբբան ակամայ աշխատում էր խոյս տալ նորա գրկախառնութիւնից, զգալով մի տեսակ խաղաղ ցնծութիւն այն հայրական զգացման, որը ծածկւած է ամեն մի տղամարդի մէջ: Նա յանախ խօսում էր նորա հետ Աստծոյ մասին, իւր ճանաչած Աստծոյ մասին: Աղջիկը, փոխանակ նորա խօսքերին ականջ գնելու, աչքերը ձգում էր երկնքին կամ նայում էր դաշտի խոտերին, ծաղիկներին և կեանքի խնդութիւնը առկայծւում էր նորա աչքերի մէջ: Երբեմն նա վազում էր թիթեռնիկների եաւից և, բռնելով որ և իցէ թւշող, բզեզ ուրախ-ուրախ վերագաւնում էր աբբայի մօտ և ասում էր.

—Ախ, քեուի, ինչ սիրուն բգէզ է. ես ուրախութեամբ կը համբուրէի նորան:

Այդ համբուրելու պահանջը յուզում, վրդովում էր աբբային. այլտեղ նա աեսնում էր նոյն անխորտակելի քնքշութիւնը, որը բնածին է կանանց սրտերի մէջ:

Եւ ահա մի անգամ ժամկոչի կինը, որը միւնոյն ժամանակ աբբայի տնտեսուհին էր, զգոյշ կերպով հաղորդեց որ նորա քրոջ աղջիկը սիրական ունի. Աբբան սարսափելի կերպով յուզւեց: Այդ ըստէին նա երեսը սապոնած պատրաստում էր ածիւել. այդպէ էլ սապոնաթաթախ նա մնաց տեղնուտեղը արձանացած: Եւ երբ վերջապէս ուշքի եկաւ, բարկացած ձայնով բացականչեց՝

—Այդ անկարելի է, դու սուռ ես ասում, Մելանի:

—Աստւած վկայ որ սուռ չեմ ասում, պատասխանեց կինը: — Ամեն օր, երբ որ ձեր քոյզը պառկում է քնելու, աղջիկը գնում է իւր սիրեկանի հետ ժամագրութեան: Նրանք ժամագրում են գետի ափի մօտ: Եթէ կամենում էք ժամը տասի և տասներկուսի մէջ ինքն երդ գնացէք և կը գտնեք նրանց այնաեղ:

Նա ածելին վայր դրաւ և սկսեց մեծ մեծ քայլերով շրջել սենեակի մէջ, ինչպէս որ սովոր էր անել խրթին խորհրդածութիւն-ների ժամանակ: Երբոր նա կրկին ածելին ձեռք առաւ սակրելու՝ երեք տեղից երեսի կաշին կտրատեց:

Ամբողջ օրը նա լուռ էր և յուզւած. նա յուզւում էր ոչ մի- այն ինչպէս կրօնաւոր, որին ատելի էր մարմնական սիրոց զգաց- մունքը, այլ և ինչպէս հոգեւոր հայր, ինչպէս հոգաբարձու, որին այդ աղջիկը խարում, յիմարեցնում էր: Նորա բարկութիւնը և տանջանքը նման էին այն ծնողների բարկութեան, որոնց աղջիկը մարդու է գնում առանց նրանց լնտրութեան և համաձայնութեան:

Ճաշից յետոյ նա փորձեց զբաղել ընթերցանութեամբ, բայց իզուր. նա աւելի և աւելի յուզւում ու բորբքում էր... վերջա- պէս ժամը տասին նա վերցրեց իւր գաւազանը, իւր հաստ կաղ- նեաց գաւազանը, որը նա վերցնում էր միայն այն դէպքերում, երբոր գիշերները հարկաւոր էր լինում այցելել հիւանդներին — պտալով ու հաճութեամբ նայում էր նա այդ գաւազանին, ամուր սղմելով իւր երկաթեայ բռունցքներում և թափահարելով օդի մէջ: Այնուհետեւ նա արագութեամբ տեղից վեր թռաւ և ագամ- ները պինդ սղմելով՝ բռոր ոյժով խփեց գաւազանը աթոռին, որի մէջը կտոր կտոր եղաւ: Նա մօտեցաւ գուան և, երբոր դուռը բաց արեց որ դուրս գայ, յանկարծ կանդ առաւ շեմքի վրայ, սքանչա- ցած լուսնի տարօրինակ գեղեցկութեամբ, որը կարծես նա կեանքի

մէջ առաջին անգամն էր տեսնում: Իբնէ յափշտակւող բնաւորութեան տէր լինելով, ինչպէս և շատերը եկեղեցոյ հայքերից—այդ տխրազգեաց բանաստեղծներից—նա ամբողջապէս անձնատուր եղաւ լուսնկայ գիշերւայ փառահեղ և անարատ գեղեցկութեան:

Նորա փոքրիկ այգու մէջ, որը թաթախւած էր լուսնի մեղմ ճառագայթներով, պտղատու ծառերը իրենց նուրբ ճիւղերից արձակում էին մաքուր սոււերներ ճեմելիքների վրայ, իսկ հսկայական մորենին բարձրանալով տան պատի վրա, տարածում էր քաղցր, արբեցնող բուրմունք, որը անուշահոտ հոգու նման սաւառնում էր այդ տաք պայծառ գիշերւայ արանքում:

Նա ագահութեամբ շնչում էր այդ օդը. նա ծծում էր նորան, հարբեցողը՝ ինչպէս գինին. նա հանդարտ քայլերով առաջ էր ընթանում աւելի և աւելի խորասուզւելով հիացման և սքանչացման մէջ. նա համարեա մոռացել էր իւր քրոջ աղջկան:

Մտնելով գիւղը, նա կանգ առաւ որպէս զի իւր հայեացքը ձգի ամբողջ հովիաի վրայ, որը լողում էր այդ փաղաքշիչ լոյսի մէջ. հովիտը կարծես թաղւած էր պայծառ գիշերւայ տարփալից և քնքոյց մեղկութեան գրկում Տարածութեան մէջ այստեղ և այն. տեղ լսւում էր ճպուսների մետաղեայ ձայնը, իսկ աւելի հեռուն. լուսնի կախարդիչ շողերի հետ խառնում էր սոխակի դայլայլիկը, այդ թափանցիկ, այդ դողդողան դայլայլիկը՝ որը խորասուզում է մարդուն անխորհուրդ մոտածմունքների մէջ և որը կարծես ստեղծած է համբոյրների համար:

Արեղան աւելի ևս առաջ գնաց. բայց նորա սիրութ կարծես կանգ էր առել. նորան թւում էր որ նա միանգամայն թուլացել, ուժասպառ է էղել. նա կամենում էր նստել, արձանանալ այդտեղ, յափշտակւել և հիանալ Աստծոյ և նորա արարչագործութեան վրայ:

Աւելի հեռուն, գետի ողոր մողոր ընթացքով տարածւում էր բարձրուղեց բարդիների երկայն շարքը: Նոգիների սպիտակ և թեթև շամանդաղը թափանցիկ և նուրբ բամբակի նման բարձրանում էր ջրի ոլորապտոյտ մակերևոյթի վրայ և ինչպէս մաքուր արծաթ փայլիլում էր լուսնի շողերի տակ: Արեղան կրկին կանգ առաւ. յափշտակութիւնը և հիացումը աւելի և աւելի խոր էին թափանցում նորա հոգու մէջ:

Եւ ահա մի ինչոր կասկած, մի ինչոր անորոշ յուզմունք տիրապետեց նորան. նա զգում էր որ նորա հոգու մէջ բարձրանումէ այն մարդերից մէկը, որոնք երբեմն երբեմն ամբոխում էին նորան:

Ինչու համար է Աստած ստեղծել լուսնկայ գիշերը: Քանի որ գիշերը նշանակւած է քնի, հանգստութեան և մռացման համար, ինչու համար նա աւելի սիրուն է քան ցերեկը, աւելի կախարդիչ է քան առաւտեան արշալոյսը և երեկոյեան վերջալոյսը: Ինչու համար այդ նազելի լուսաւորը, որ աւելի բանաստեղծական է քան արեգակը, այգուիս լուսաւորում է այն ամենը՝ ինչոր պէտքէ ծածկւած մնար մթութեան մէջ. ինչու համար նա այդքան պայծառ կերպով բանում է՝ գիշերային քօղի տակ ամփոփած բնութեան գաղղնի հրաշալիքը:

Ինչու համար երգեցիկ թռչուններից ամենաճարտարը այդ րոպէին չէ հանգստանում ուրիշ թռչունների նման. ինչու է նա իւր դաշլայիկը բարձրացնում այդ յուզիչ խաւարի մէջ:

Ի՞նչ նպատակով է այդ թափանցիկ շամանդաղը սփուած աշխարհի վրա: Ինչու համար է այդ սրտի թրթռումը, այդ հոգեկան յուզմունքը, ամբողջ մարմնի այդ անսովոր մեղկացումը:

Ինչու համար է շրայլած այդ բոլոր հրաշալիքը, քանի որ մարդիկ չեն կարող տեսնել նորան, քանի որ այդ գիշերը քնելու համար է սահմանւած: Առմ համար է այդ հրաշալի տեսարանը, այդ առատազեղ բանաստեղծութիւնը, որը սփուում է երկնքից երկի վրայ:

Արեղան ընկղմած էր խորին խոկման մէջ:

Բայց ահա հեռում, արծաթափայլ շամանդաղի մէջ փաթաթւած բարդիների արանքից, երկացին երկու ստուերներ. ստուերները կողք կողքի տւած առաջ էին սահում:

Տղամարդը, որ հասակով աւելի բարձր էր, ձեռքը փաթաթել էր իւր ընկերունու վզով և երբեմն-երբեմն գլուխը կռացնում ու համբուրում էր նորա ճակատը: Նրանք կենդանացնում էին այդ հրաշալի գիշերային տեսարաննը, որը կարծես շրջանակ էր կազմում այդ կենդանի պատկերի համար: Նրանք երկուսը թւում էին ինչպէս մի էակ, և այդ միացեալ էակի համար կարծես սահմանւած լինէր այդ լուս և հանդարտ գիշերը: Նրանք թւում էին ինչպէս

կենդանի պատասխան, որը Արարիչ Ասուածը ուղարկում էր աբեղացին, իրեն ուղղւած հարցի փոխարէն:

Աբեղան անշարժ կանգնած էր. նորա սիրով սաստիկ արոփում էր. նորան այնպէս էր թւում, որպէս թէ նորա աչքերի առաջ կատարում է հին կտակարանի դիպւածներից մէկը, Հռութիւ հօօզի սէրը, Արարիչ Ասածոյ կամքի կատարումը այն փառայեղ պայմաններում, ոնոնք նկարագրւած են սուրբ զբքի մէջ: Նորա գլխի մէջ յեղյեղւում էին Երգ երգոցի տողերը, այդ տարփախց բանաստեղծութեան կըքու յափշտակութիւնները, բուռն զգացմունքները: Եւ աբեղան վճռեց. «Երեխ Աստւած նրա համար է ստեղծել լուսնկայ գիշերները, որպէս զի սէրը աւելի սուրբ լինի մարդիկների համար»:

Եւ նա սկսեց տեղի տալ այդ դրկախառնւած զոյզի առաջ, որը աւելի և աւելի առաջ է սահում: Ճշմարիտ է, գրկախառնւողը նորա քրոջ աղջիկն էր, բայց նա ինքն իրեն հարցնում էր «արդեօք անհնազանդութիւն չի լինիլ Տիրոջ առաջ, եթէ նա նրանց առաջը կտրի: Արդեօք ինքը Աստւած չէ որ հաւանութիւն է տալիս այդ սիրոյն, շրջապատելով նորան այդպիսի հրաշալի փառայեղութեամբ»:

Եւ աբեղան յետ դարձաւ տուն յուղւած և ամօթապարտ. իրաւունք ունէր նա արդեօք թափանցել այն տաճարի մէջ, որտեղ արգելւած էր նորան ոոռք դնել:

## \*\*\* Ի ԱԼԲՈՄՈՒՄ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՏՈՒԽԻՉԵԱՆԻ

Անօթևան ճամբորդի պէս վաստակած,  
Ես շատ անգամ իմ ոգելից երգերում  
Դժբախտ սիրոյս մի անկիւն եմ աղերսած,  
Բայց չեմ գտել ես այն կանանց սրտերում...

Գրիտեմ, հոգեեակ, որ և' այժմ չը կոչւած,  
Պատահական ես մի հիւր եմ քո աչքում,  
Բայց կ'ուզեի գէլթ անունըս անմոռաց  
Մընար այստեղ--քո ալբոսի էջերում...

10 մարտի, 1895 թ.

Մոսկով:

## ՅԱՏ ԵՍ ՓԱՓԱԳՈՒՄ...

Սիհլիկ ՊՐԻՒԴՈՒՐԻՑ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՇԱՏՈՒՐԵԱՆԻ

Կատ ես փափագում, որ պատմեմ շուտով՝  
Ի՞նչու եմ սիրում քեզ բուռըն սիրով.  
Ահա թէ ինչու, մանուկ իմ անդին—  
Դու շատ նման ես իմ մատաղ կեանքին:

Քո թուխ աչքերում այնքան խանգալից  
Փայլում են մերթ յոյս, մերթ խորին թախիծ.  
Վառ ցնորքների ծով է քո հոգին—  
Դու շատ նման ես իմ մատաղ կեանքին:

Ծամերըդ երկայն, դէմքըդ նազելի,  
Ասես, զարդ լինես դու Հելլադայի.  
Պայծառ եղեմ է ծաղկում քո կըրծքին—  
Դու շատ նման ես իմ մատաղ կեանքին:

Եւ սէր եմ ինդրում՝ քո սիրուց այրւած,  
Բայց դու աղերսիս ականջ չդրած  
Առաջ ես գլուխում, ով ընկեր անդին—  
Դու շատ նման ես իմ մատաղ կեանքին...

## ՓԱԽՍՏԱԿԱՆ

(Լեռնակին լեզենդա)

Մ. Ի. ԼԵՐՄՈՒՏՈՎԻ Թարգմ. Յակ. Տէր-Գէորգևանցի

Փախստում էր Հարունն այծեամից արադ,  
Արագինչպէս որ արծւից նապաստակ.  
Փախստում էր կռւի դաշտից սարսափով,  
Ուր չէրքեզների արիւնն էր հոսում:  
Երկու եղբայրներն ու հայրը դաշտում  
Զոհ գնացին պատուին և ազատ կեանքին —  
Նոցա գլխները ընկած են թողում  
Իրենց թշնամու ոտների տակին:  
Նոցա արիւնը խնդրում է վըրէժ:  
Պարոքն ու ամօթը Հորունը մոռցաւ,  
Ամեն բան կորցրեց այն տաք կռւի մէջ —  
Հրացանը, սուրը, — և արագ փախաւ:  
Եւ օրը մթնեց:  
Ինչպէս մի պաստառ-սպիտակ և լայն  
Խաւար ձորերը մէզով ծածկւեցան:  
Արևելքիցը ցուրտ էր տարածւում:  
Եւ մարգարէի անապատի վրայ  
Ոսկէ լուսինը հանգարտիկ ելաւ,  
Անգութ ծառաւից յոգնած ու տանջւած,  
Արիւն, քրտինքը դէմքից սրբելով,  
Ժայռերի միջին, լուսնեակի դիմաց  
Նա իւր հարազատ առւն է տեսնում:

Առանց տեսնելու, գաղանի մօտեցաւ.  
 Ողջ շրջակացքը լուռ էր և հանգիստ.  
 Անվնաս, առողջ, սոսկալի կռւից  
 Միայն Հարունը տուն վերադարձաւ,  
 Եւ դէպի ծանօթ խրճիթն է շտապում։  
 Այնուհեղ ճըրազի լոյս էր երես։ մ.  
 Տանտէրը տանն է. նա ամրապնդեց  
 Հոգին և իսկոցն շէմքը ոտ դրեց։  
 Նա բարեկամ էր առաջ Սէլիմին,  
 Բայց չը ճանաչեց ծերը եկո որին։  
 Յաւից տանջւելով, պատկած գետնի վրան,  
 Մեռնում էր խեղճը, լոիկ և միայն.  
 «Մեծ է Ալլահը. նա հրաման ուեց  
 Իւր հրեշտակներին, որ պահպանեն քեզ  
 Այլ փառքի համար չարանենք մահից։  
 «Ի՞նչ նորութիւն կայ...» Սէլիմը հարցրեց,  
 Հանգչող աչքերը բարձրացնելով։  
 «Նա ոսքի կանգնեց,  
 Եւ դէմքը փայլեց յոյսի կըրակով։  
 Եւ մարտնչողի արխնը կրկին  
 Համարձակ խաղաց իւր մահւան ժամին։  
 «Երկու օր կրծում մենք կուռում էինք,  
 Իմ եղբայրները հօրս հետ ընկան,  
 Եւ անապատում ես միայն անհետ  
 Ծածկւեցի։ Ինչպէս հալածւած դաղան,  
 Սուր-սուր քարերից, փշոս թփերից  
 Արիւնաշաղախ, բորիկ ոտներով,  
 Վարազների և դայլերի հետքից  
 Գնում էի անյատ, նեղ շաւիղերով։  
 Կորան չերքեղներն ուր կողմն էլ նայես,  
 Մեր թշնամիքը կանգնած կը տեսնես.  
 Ապաստան տուր ինձ, իմ հին բարեկամ.  
 Ծառայութիւնդ — Մարգարէն վկայ,  
 Մինչև իմ մահը ես չեմ մոռանայ։»

Եւ մահամերձը տւեց պատասխան.  
«Գնան, արժանդ արհամարհանքի.  
Վախկոտի համար Սէլիմը չունի  
Ո՞չ օրհնութիւն և ոչ ապաստան։  
Քաղաքնի տանջանքով և ամօթով լի,  
Այն նախառինքը առանց բարկութեան  
Հարունը լսեց. և նա վերստին  
Այդ անհիւրասէր շէմքից դուրս ելաւ։  
Եւ մօտենալով մի այլ խրճիթին

Մի վայրկեան կանգնեց։

Թռուցիկ երազն անցած օրերի  
Ինչպէս կըրակը մի ջերմ՝ համբոցը  
Նորա սառն ծնօտը յանկարծ պատեց.  
Բոցավառ աչեր նրա առաջ կարծես  
Քաղցր շողացին գիշերւայ մթնում։  
— «Նա սիրում է ինձ, ահա մտածեց,  
Ինձնով է միայն շնչում և ապրում։  
Յանկարծ վաղեմի երգի հնչիւններ

Հասան ականջին,

Եւ նա գունատւեց լուսնից աւելի։

«Հանգիստ և խաղաղ

Լուսինն է լողում,

Զինւորը մատաղ

Կուի է զընում։

Զիգիթը արագ

Լցնում է հրացան,

Եւ չքնաղ կոյսը

Ասում է նորան։

«Սիրելիս, վստահ,

Ցոյսդ դիր բազդին,

Եւ աղօթք արա

Դու արեելքին։

Եւ մի ուրանայ

Մեծ մարգարէին։

Ու հաւատարիմ  
 Եղիր դու վառքին:  
 Դաւաճանողը  
 Արեան վըրէժի,  
 Զը հանած վրէժը  
 Անփառք կը կորչի:  
 Անձրևները չեն սրբի  
 Նորա վէրքերը,  
 Գազանները չեն թաղի  
 Նրա ոսկրները:  
 Լեռներում չկաց  
 Ո՛չ ոք, որ տանի  
 Այս նախառինքը,  
 Եւ կը դուրս անի  
 Վախկութին— սարի  
 Զքնաղ աղջիկը:  
 Գլուխը քաշ գցած, Հարունը արագ  
 Նարունակում է իւր ճանապարհը.  
 Եւ մերժ աշքերից, կրծքի վերայ, տաք  
 Թափւում են խոշոր արտասուքները:  
 Բայց փոթորիկից ահա խոնարհած,  
 Դէմը հարազատ տունն է կանգնած,  
 Եւ դարձեալ յուսով նա սիրտ առնելով  
 Պատուհանը մեղմ բաղիսում էր ցածրից:  
 Այստեղ երևի աղօթքներ հոգով  
 Նրա համար դէպի երկինք են ուղղւում:  
 Ծեր մայրը որդուն սպասում է կուից。  
 Սպասում է նորան,  
 Բայց ոչ թէ միայն:  
 «Մայրիկ, դուռը բաց: Ես խեղճ ճամբորդ եմ,  
 Քո կրտսեր որդին, ես քո Հարունն եմ  
 Անվեսա, ոռւսաց սւինների միջից  
 Ես եկաց քեզ մօտ...»  
 — Եւ միայն:

— «Միան»:  
 — Եսկ եղբայրներդ և հայրդ:  
 — «Ընկան».

Մարգարէն նոցա վախճանը օրհնեց  
 Եւ հրեշտակները հոգիքը առան:  
 — Վրէժդդ հանեցիր:  
 — «Ո՛չ, վրէժդը չառայ...  
 Բայց դէպի լեռներն թռայ նետի պէս,  
 Օտարի երկրում թռղի իմ սուրը.  
 Որպէս զի հայեացքդ դէթ սփոփեմ ես  
 Եւ սրբեմ աչքիցդ արտասուքները»:  
 — Լութիր, դու, լուիր, զեառւր խորամանկ,  
 Դու փառքով մեռնել չը կարողացար.  
 Հեռացիր ուրեմն, ապէիր միայնակ

Դու, ազատութեան  
 Սաոր փախստական».

Ես քո ամօթով չեմ խաւարեցնի  
 Իմ թոյլ ծերութեան տարիքը վերջին.  
 Դու ստրուկ ես, վախկոտ... բայց ոչ իմ որդինա:  
 Լուց մերժող ձայնն, ամեն ինչ շուտով  
 Նուրջը նիրհում էր խիստ խորին քնով:  
 Դառւն անէծքներ, հառաչ, աղերսանք  
 Երկար լսւում էր պատուհանի տակ.  
 Վերջը դաշոյնի հարւածը ուժգին  
 Վերջ զրեց նորա այն նախասոինքին:  
 Եւ առաւօտեան իւր մայրը տեսաւ.  
 Բայց նա սառնութեամբ երեսը դարձրեց  
 Եւ արդարներից արտաքսածի գին  
 Գերեզմանատուն ոչ ոք չը տարաւ:  
 Նորա խոր վէրքից հոսող արիւնը  
 Ունալով լիզում էր բակի շունը,  
 Եւ երեխաները հայհոյեցին  
 Եառն մարմինը թշւառ մեռածի.  
 Եւ աւանդութիւնն ազատ լեռների

Պատմում է մահը և նախառինքը  
Փախստականի.  
Եւ մարգարելի աշքից նրա հողին  
Հեռացաւ վախով,  
Եւ արեելքի լեռների միջին  
Նրա ուրւականն է այժմ թափառում  
Մթին գիշերով:  
Եւ պատուհանի տակ, լուսադէմին  
Խրճիթի դուռն է բաղնինում, աղերսում:  
Բայց երբ հասնում է նորա ականջին  
Բարձր աղօթքի ձայներ Դուրանից,  
Փախչում է դարձեալ խաւարի միջին  
Բնչպէս որ առաջ փախչում էր կռւից:

---

## Զ ՈՒԹ Ա Կ

(Պատմածք)

Թարգմ. ռուսերէնից Ա. Շ.

—Գէորգ, որքան լաւ էք ածում ջութակի վերայ, տւէք ինձ  
ես էլ փորձեմ նորա վրայ ածել: Այս գիշեր երազումս ինձ թւում  
էր, թէ ես այնքան լաւ էի ածում, այնքան լաւ, որ բոլորովին  
թմրեցի և մեռայ: Դէ, տւէք ինձ, մի քիչ ածեմ, ինդրում էր  
հարուստ աղայի որդուն, 19 տարեկան երիտասարդին, նրանց խո-  
հարարուհու որդին, որը աւելի երիտասարդ էր. նա ունէր սե,  
փայլող, մոտախոհ աչքեր, մելամաղձոս զէմք, և շատ քնում էր:  
Տալով ջութակը Սիմէօնին (նրան այսպէս էին կանչում), աղայի  
որդին խսկոյն խլեց վերջինի ձեռքերով, ծաղրելով, որ ջութակը  
բռնել անդամ չգիտէ. —Մի մտնիր այնտեղ, որտեղ քո տեղը չէ.  
հեռացիր այստեղից. —ասաց աղայի որդին կոպոութեամբ:

Սիմէօնը գլուխը քարշ գտեց, շուռ եկաւ և լուռ, դանդաղ  
քայլերով գուրս եկաւ Գէորգի սենեակից: Մեքենայաբար ուղղելով  
իր քայլերը զէպի խոհանոց և մոտնելով այնտեղ, նա պառկեց իր  
մահճակալի վրայ և երեսը թաղեց բարձի մէջ: —Ե'լի մահճակալի  
վրայ, ելի քնել, գետինը մտնես, գոնէ, ինձ մի փոքր օգնէիր,  
փայտ բերէիր: Բողըրը, բողըրը ես պիտի անեմ, արդէն բոլորովին  
ուժից ընկայ. զեռ Աստւած էլ ինձ այսպիսի որդի ընծացեց. սատ-  
կես դու, այս ինչ կրակ է.. Ախ, ախ, ախ, ինչ բանի համար  
Աստւած ինձ տանջում է: —Այսպիսի խօսքերով հանդիպեց Սիմէ-  
օնին մի բարձրահասակ, բարակ, ջղոտ ձեռքերով կին: Սիմէ-  
օնի մայրն էր: Նա կանգնած էր վառարանի մօտ ծնօտով ձեռքին

յենւած: Սեմէօնը արդէն վաղուց խոմփում էր, իսկ մայրը դեռ շարունակում էր ամեն տեսակ հայհոյանք և անէծք թափել որդու գլխին:

Այն օրից անցել էր մի քանի ամիս, երբ մի օր, երեկոյեան, Սիմէօնը խոհանոցում իր մահճակալի վերայ նստած ժամանակ, յանկարծ լսեց իւր սիրած հնչիւնները. եղանակները, որ Գեորգը ածում էր ջութակի վերայ, ուղղակի Սիմէօնի հոգին դուրս էին քաշում և նորա մէջ աւելի ու աւելի սաստկացնում սէրը դէպի ածելը:... Յենւելով բարձի վերայ և ուղելով իր հայեացքը դէպի հեռուն, նա ընկաւ խորը մտածմունքի մէջ: Նորա, թէպէտ զեռ մանուկ, բայց խեղճութիւնից և անյաջողութիւններից յոգնած, վշտացած հոգին հանգստութիւն էր որոնում. նորա հոգին կարօտ էր քաղցը հնչիւնների, որոնք կարողանացին նորան օրօրել քնացնել: Նա իր կեանքում չէ ունեցել ոչ մի սրտակից ընկեր, չէ գտնուել ոչ ոք, ոչ ոք, որ երբեւիցէ նորան փաղաքշէր, մխիթարէր, յնու տար....

Ամենքը արդէն վաղուց քնել էին, իսկ Սիմէօնը դեռ շարունակ նստած էր մահճակալի վերայ, ընկղմած խոր մտածմունքի մէջ: Յանկարծ, նորա գլխում ծագեց մի տարօրինակ միոք. սիրտը ըսկեց բարսմել. նայեց չորս կողմ՝ բոլորը քնած են: Եռորջը մութ և խաղաղ էր: Նա սկսեց դանդաղ տեղից բարձրանալ, մահճակալից ցած իջաւ, դուրս եկաւ խոհանոցից և երկար ու նեղ կորրիգորի միջով գնաց դէպի Գէորգի սենեակի դուռը: Կամաց բաց անելով դուռը, նա մատների ծայրի վերայ առանց աղմուկի մօտեցաւ այն սեղանին, որի վերայ դրած էր ջութակը. վեր առաւ և էլի նոյն զգուշութեամբ դուրս եկաւ գաւիթը. այստեղ մի քիչ խորհելուց յետոց, նա իր քայլերը ուղղեց դէպի այգին, ծակող մացառների վրայից թռաւ միւս կողմը, բորիկ ոտներով կոխելով այրող հաղարջը չզգալով ոչ այրոց, ոչ ծակոց: Նա գնում էր շտապով, թռչկոտելով ամեն տեսակ արգելքների վերայով, որոնք առհասարակ պատահում են կիսաթող այգիներում: Վեր շապէս նա կանգ առաւ: Նրա առջև կանգնած էր մի մեծ թանթրւենու թռւփի. նա մօտեցաւ և նստեց քարի վերայ, որ ընկած էր նորա քնի մօտ.... Խաղաղ զիշեր էր. օդը լի էր

անուշահոս բուրմունքով. լուսինը ժպառում էր, ուղղած իր հայեցքը երկրի վերայ:

Ինչպէս որ սիրահարւած երիտասարդը պարկի մութ ալլէի մէջ, զուզմունքից դողդողացող ձեռքերով նա վեր առաւ ջութակը և կնոնտոցը:

Նա ամեն ջանք գործ էր զնում մի բան ածել: Մի քանի բոպէից յետոյ, արդէն լսում էին անկանոն հնչիւններ: Ինչպէս երեւում էր, նա աշխատում էր դուրս բերել ինչ-որ իրան ծանօթ եղանակներ... Երկար Սիմէօնը աշխատեց ջութակի վերայ և վերշապէս յոգնած ու անբաւական՝ վերադարձաւ տուն: Նոյն զգուշութեամբ՝ նա ջութակը դրեց իր առաջւան տեղը և մտնելով խոհանոց, պատկեց: Երկար նա չէր կարողանում քնել. նա մոտածում էր զանազան միջոցներ, ածել սովորելու համար: Նորա սիրած եղանակները\*\*\* Մոցարտից էին, որոնցից նա երբէք չէր բաժանում և որոնց շնորհիւ իր տպաւորութեան ու հարուստ լսողութեան շատ շուտ էր ըմբռնել և սովորել բերանացի երգել: Նա պատրաստ էր ամեն ինչ զոհել, միայն թէ կարողանար այդ բոլորը ածել ջութակի վերայ... Վերջապէս՝ լի յուսով դէպի ապագան՝ քնեց... Միւս օրը նա վեր կացաւ բաւականին ուշ: Առաջին նորա լսածը եղաւ մօր սովորական հայնոցանքը, բայց նա այնպէս էր զբաղւած ջութակով, որ բոլորովին ուշադրութիւն չգարձրեց: Այդ օրւանից նա սկսեց սառչիլ գործից. ամբողջ օրերով գլուխը քարշ գցած ման էր գալիս անկիւնից անկիւն, իսկ երեկոները պառկում և սպասում էր, մինչև բոլորը կը քնէին և երբ բոլորը քնում էին, նա վեր էր կենում, մտնում Գեորգի սենեակը, վեր առնում ջութակը, և սլանում դէպի իր ուխտեալ թուփը... Երկար ժամանակ Սիմէօնը շարունակում էր այդ ձեռվ ածել սովորել: Մայրը շատ անգամ էր նկատել, որ որդին դիշերները իր անկողնում չի լինում և վճռեց իմանալ, թէ ուր է զնում նա: Նա դնաց որդուն որոնելու: Երկար որոնեց հայեաթում, գոմերում, փետանոցներում և չգտնելով նորան վերադարձաւ: Նա ուզում էր խոհանոցի դուռը բաց անել, որպէս զի ներս մտնի, բայց անվճռողաբար կանգ առաւ. մայրական զգացմունքը յաղթեց. սիրով սաստիկ տիրեց և արտասուքի կաթիլները սկսեցին մէկը միւսի յետեւից թափւել երեսի վե-

բայով: — Ասուած իմ, Ասուած իմ, համարեա լսելի ձայնով բացականչեց նա, — ինչ բանի համար այդպէս սաստիկ տանջում ես ինձ, մեղաւորիս և ինչ մեղք գործեցի Քո առջե... Ախ, դառը վիճակ. — և արտասուքի կաթիները նորից սկսեցին հոսել նորա աչքերից: Նա բարձրացրեց իր հազուստի փէշը, սրբեց աչքերը և նորից գնաց որոնելու որդուն: Ուշադրութեամբ զննելով ամեն մի անկիւն, — կարելի է նա մի որևէ է տեղ պառկած էր և ես չնկատեցի. — մտածում էր նա, և հայեաթում չգտնելով որդուն, նա իր քայլերը ուղղեց դէպի այգին: Ուշի ուշով նայում էր ամեն մի թփի տակ, դիտում էր ամեն մի ծառ, ամեն մի ձայն, մինչև անդամ տերեւների շշուկը ստիպում էր նրան կանգ առնել և լարւած ականջ դնել: Յանկարծ նա կանգնեց. ջութակի հնչիւնները որ համում էին նորա ականջին, զարմացրին նորան: Միթէ Գէորգն է ածողը. — մտածեց նա, բաց տեսնելով, որ հնչիւնները լսում էին ոչ թէ աղի տանից, այլ այգու խորքից, վճռեց իմանալ, թէ գիշերւայ այս ժամանակին, այն էլ այգում ածողը ով էր: Սարսափը պատեց նորան, երբ նա հասաւ մինչև թանթրւենու թուփը և տեսաւ, որ ածողը իր որդին է: Նորա բորբիկ ոտքերը դրած էին մելը միւսի վրայ, իսկ գգգլւած մազերով պատած դլուխը՝ քարշ էր ընկել: Մի քանի վայրկեան կանգ առնելուց յետոյ, մայրը շնոր եկաւ և գնաց: Դառը արցունքների փոխարէն, որ նա մի քիչ առաջ թափում էր, նորա աչքերում երեացին գթութեան արցունքների Վերադառնալով խոհանոց, նա պառկեց և անհամբի սպասում էր Ախմէօնի վերադարձին: Նա տեսաւ, թէ ինչպէս իր որդին ջութակը ձեռքը մտաւ Գէորգի սենեակը, ինչպէս այնտեղից դուրս եկաւ առանց նորան և ինչպէս եկաւ իր տեղը պառկեց: Այն օրւանից նա սկսեց իր որդուն փաղաքշանքով վերաբերւել, այլ ևս նորա վերայ չեր բարկանում, և եթէ մի որևէ իցէ բանում հարկաւոր էր լինում որդու ծառայութիւնը, նա աւելի շատ խնդրում էր, քան թէ ստիպում:

Սուրբ Գէորգի տօնի նախընթաց օրն էր, բոլով զբաղւած էին առաջիկայ տօնի պատրաստութիւններով: Գէորգը նստած էր իր երաժշտութեան ուսուցչի հետ սենեակում և մինչև կէս գիշեր զբաղւած էր ածելով: Նա ուղում էր իւր անւանակոչութեան տօնի

հանդիսին առանձնապէս աշքի ընկնել; Վերջապէս հասաւ որախութեան օւր: Երեկոյեան շքեղ զարդարւած և լուսաւորւած դահլիճում սկսեցին հաւաքւել հրաւիրւածները: Օրիորդները հագել էին մետաքսեայ դեյրաներ, իսկ երիտասարդները թխագոյն շորեր: Ամենքը շնորհաւորում էին Գէորգին իր անւանակոչութիւնը, շատերից՝ նա ստացաւ թանկագին ընծաներ: Հրաւիրւածները գնացին սեղանատուն, որտեղ սարգւած էր ամեն տեսակ խմիչքներով, ուտելեցիներով և քաղցրաւենիներով լի սեղան: Խկսեցին ածել դաշնամուրի վերայ, ձայնակցութեամբ ջութակի, որի վերայ ածում էր Գէորգը, երիտասարդները պարում էին, իսկ աւելի հասակաւորները և ծերերը հաւաքւեցին մի առանձին սենեակ և նստելով թղթախաղի սեղանի շուրջը, սկսեցին խաղալ իրանց սովորական պրեֆերանսը:...

Յանկարծ դահլիճում՝ տիրեց լուսութիւն: Հիւրերի խնդրանօք Գէորգը ածում էր ջութակի վերայ Տօլո: Մինչեւ անգամ ծերելը ընդմիջեցին իրանց խաղը և եկան դահլիճ: Գէորգի տէխնիկան և հմտութիւնը զարմացնում էին բոլորին:

Դեռ սա չէր վերջացրել, որ դահլիճը թնդաց ծափահարութիւնից: Շատերը մօտենում էին նորան և սեղմում ձեռը: Նորածնողները ման էին գալիս գժւածի նման՝ ուրախութիւնից.— «Հա, ասում էր հայրը իր ծանօթներին», ևա՛ իմ կեանքիս միակ հրճւանքն է, բաղդը՝ միանգամայն բաւականացրել է ինձ:...

Իսկ մացրը, որ մի լզար, բարձբահասակ, երեսի խոշոր գծագրութիւններով կին էր, պտուելով գէս-դէն, ամենին պատմում էր իր որդու «Գէորգիկի», ինչպէս ինք էր անւանում, ընդունակութիւնների մասին և մօտենալով նորան, համբուրեց որդու ճակատից:

Դոների մօտ կանգնած էր խոհարարուհին և դառը հոգւոց էր քաշում: «Ո՛հ, Հայր մեր երկնաւոր, համարեա լսելի ձայնով բացականչեց նա, որին Դու բաղդը տալիս ես աւելի, քան հարկաւոր է, իսկ որին էլ բոլորովին մոռանում ես և ինչի համար այդպիսի անարդարութիւն:»

Երիտասարդներից մէկը հետաքրքրւելով խոհարարուհու խօսքերով, հարցրեց՝ ինչի մասին էր նա այդպէս դարդ անում: «Այս ինչպէս դարդ չանեմ, պատասխանեց նա, «Քանի որ իմ Սիմեօնն

Էլ այդպէս լաւ է ածում և ոչ ոքի մտքից չի անց կենում նորան ասել. ևապրես Սիմէօն։ որովհետև նա անբաղջա է, ոչինչ չունի և դորա համար էլ ոչ ոք նորան ոչ մի բարի խօսք չի ասիլ. Է՛ս, Ասուած նորա հետո։ Արտասուքի կաթիներ երևացին նորա աշքերում. նա շտապով գնաց խոհանոց։ Մանելով այնոնզ, նա Սիմէօնին գուաւ պառկած. «Դու զիտես միայն պառկել, անիծւած հոգի» բարկացաւ նա խեղճ Սիմէօնի վերայ։ Բայց նա առանց ուշադրութիւն դարձնելու մօր խօսքերի վերայ, դառձաւ միւս կողքին և պատրաստեց քնել… Այն ինչ այդ միջոցին այն երիտասարդը, մօտենալով Գէորգին, պատմեց նորան այդ մասին։ Գէորգը հեգնօրէն ժապաց և նոքա երկուսն էլ վճռեցին ծիծաղեցնել հիւրերին։ Ամենաաչքի ընկնող տեղում դրին մի բազկաթոռ, կողքին էլ մի կլոր սեղան, որի վերայ դրին ջութակն ու կնոնտոցը, յայտնեցին բոլորին՝ պատրաստել լսելու յայտնի ջութակահարին։ Բոլորը հէնց առաջուց սկսեցին բարձրաձայն ծիծաղել…

Այդ միջոցին զահիճում երեաց Սիմէօնը՝ մի թևից բռնած Գէորգը, միւս թևից այն միւս երիտասարդը։ Նոքա սովիպմամբ քարշ էին տալիս նորան բազկաթոռի մօտ, թէև դժւարութեամբ, բայց այնու ամենայնիւ նստեցրին ու ջութակը տւին ձեռքը։ Երիտասարդները և օրիորդները ծիծաղում էին նորա բորիկ, կեղտու ոտների վերայ, նորա բաց կրծքի և գզզուած մազերով ծածկւած գլխի վերայ…

Դանդաղ՝ նա վերառաւ ջութակը և կնոնտոցը մի սուր հայեացք զցեց չորս կողմը, և սաստիկ յուգւած սկսեց ածել։ Ճիշդ է, թէպէտ նա տեխնիկա չունէր, բայց նորան լսողը զգում էր մի ինչ որ անսովոր բան։ Նորա դուրս բերած հնչիւնները՝ ոչ թէ հասարակ ջութակի հնչիւններ էին, այլ այրող արցունքներ, որոնք թափանցելով լսողի սրտի խորքերը, ացրում էին նորան մի անհասկանալի կրակով։ Հիմա այլ ևս ոչ ոքի ծաղրը չէր դալիս, ընդհակառը շատերին արտասուքը խողլում էր։

Յանկարծ՝ նա գետին շպրտեց ջութակն ու կնոնտոցը և դահիճից դուրս վազեց։ Նա փախչում էր ինքն էլ չգիտենալով ուր և ինչու։ Քայլերը մեքենայաբար ուզզելով դէպի այդին և մօտենալով թանթրւենու թփին, նա նստեց բարի վերայ։

Նա՝ յուսահատւած էր. կատաղութեամբ պոկում էր գլուխ մազերը. պատառոտում էր առանց այն էլ զղղգւած շապիկը... մնչի համար ես ածեցի. ինձ խելազարի տեղ են դնում. ինձ ծաղրում են... Եւ ինչի համար եմ ես ապրում...»

Այդ սարսափելի հարցը, որ իր կեսնքում առաջին անգամն էր ծագում նորա գլխում, ցաւ տալով դուրս թռաւ նորա կրծքից։ Նա ձեռքերով ծածկեց աչքերը և դառը կերպով լաց եղաւ։ Լացը երբեմն ընդմիջւում էր հեծկոտանքներով։ Բաւականին ժամանակ այդ դրութեան մէջ մնաց. յանկարծ նա խայթւածի նման վեր թռաւ տեղից՝ «Հ, այդ չի լինիլ. բացականչեց նա. որ տանջւելուեմ, թող տանջւեմ։ Ես, հէնց էգուց, անպատճառ էգուց կը փախչեմ այսուղից, համ... մօրս... թեթևութիւն, համ էլ ինձ՝ դուցէ։ Եւ բաւական իր վճռով, նա իր քայլերը ուղղեց դէպի տան կողմը...»

Այն ինչ, այսուղ, դահլիճում, հիւրերը գեռ շւարած մնացել էին։ Գէորգը սարսափելի վրդով ած և զայրացած էր, որովհետեւ նա նկատեց, որ իր ածածը բոլորովին այն տպաւորութիւնը չգործեց հիւրերի վերաց, ինչ որ Սիմեօնի ածածը. թէպէտ ինքը իգուր էր աշխատում թագցնել իր վրդովմունքը։ «Պետքն, վաղը մեզ հարկաւոր կը լինի դուրս անել մեր անպիտան խոհարարուհուն իր որդու հետ», խստիւ պահանջում էր ամուսնուց Գէորգից ոչ պակաս զայրացած մայրը։ «Ահա մօտ երեք տարի է նոքա մեզ մօտ ձրիակերութիւն են անում. անպատճառ վաղը, լսում ես»։ — «Այո, հարկաւոր էս պատասխանեց ամուսինը, մի քիչ խորհելուց յետոց, ուժեղ քաշելով իր թշւառ առանց այն էլ նօսր միրուքից...»

Ամեն ինչ հանդարաւեց։ Կրակները արդէն հանդցրած են։ Բոլորն էլ յոգնած ցերեկւաց չարչարանքից, վաղուց արդէն քնած էին խորը քնով։ Մինչև անգամ Սիմեօնը, որ միշտ այդ ժամանակ գործելիս էր լինում, այս գիշեր մեռածի նման էր քնել։

Քնած չէր միայն Գէորգը։ Ատամները փակած, բռունցքը սեղմած, նա պառկած էր մահճակալի վերաց և սաստիկ բարկութիւնից, ամբողջ մարմնով դողում էր։ «Ես նորան... շշնջաց նա ինքն իրան և կատաղութեամբ վեր թռաւ անկողնից։ Բաց անելով գրասեղանի արկղը, նա սկսեց խառնշտորել նորա մէջ, բայց որոնածը չգտնելով, նա սկսեց մթութեան մէջ շօշափել սեղանի վրաց գոտ-

ւած առարկաները, կատաղութեամբ շպրտելով ամեն ինչ, առանց որոշելու։ «Ահա նա. և ցնցւելով վեր առաւ զրչահատը, բայց մեծ բերանը, ու գանդաղ կերպով, գուլպաները հագին, առանց աղմուկի, քայլերը ուղղեց դէպի խոհանոցը։ Բաց անելով դուռը և մօտենալով այն մահակալին, որի վերաց քնած էր Սիմեօնը, այսպէս, ինչպէս երբէք չէր եղել քնած, Գէորգը կանգ առաւ։ Բաւականին ժամանակ նա անշարժ կանգնած էր մահակալի գլխի վերեւ, զրչահատը սեղմած ձեռքում։ Նորա աչքերը ուղղւած էին Սիմեօնի գունատ գէմքին, որը լուսաւորւած էր լուսնի աղօտ լուսով։ Մէկ, միայն մէ՛կ հարւած, և գու, բազմաչարչար խեղճ արարած, մնաս բարեւ կ'ասես բոլոր երինացիններին... Դու, կը մեռնես և քեզ հետ էլ քո տաղանդը, որի համար կը հատուցանես կեանքովդ... Ահարկու հարւածը կատարւեց... Տեղն էր քեզ, գժբաղդ Սիմեօն... նայիր չորս կողմդ և գու կը տեսնես, թէ իրաւունք ունէիր լինել տաղանդաւոր և Գէորգից խլել այն գովասանքները, որոնք նշանակւած էին նրա և միայն նրա համար... Իսկ քո վիճակը, քո յանդուզն քայլի համար, սառչիլն է, և տեղդ—կամ խոհանոցի մի որ և է անկիւնը, կամ այս խոնաւ, ցնւրտ գերեզմանը։

Դեռ արշալոյսը բոլորովին չէր ներս թափանցել լուսամուտից, որ մի ուրիշ դիմակ, թշւառ մօր անշնչացած դիմակը, գրկած միակ որդուն, ընկած էր նորա արեան լճի մէջ։

## ՀԱՄՈՁՄՈՒՆՔԻ ՄԱՐԴ

(Խոր Աէ մշմարիտ է)

Թ. ԿՐՈՏԿԻՅ (Թ. КРОТКИЙ)

Թարգմ. Մկր. Նաևասարւեանի

Խալոյսկ քաղաքում լուր էր տարածւել թէ հասարակական դրամատան գանձապահը անսպասելի կերպով գողութիւն է արել: Ի՞նչպէս պատահեց այս, ոչ ոք չէր կարողանում ասել: Պենտեֆրի Բոմբոշկինը հոչակւած էր իբրև անպայման ազնիւ մարդ և Արիստիդի համբաւն էր վայելում: Բայց յանկարծ... արտակարգ վերաքննութեան շնորհով յայտնւեց, որ բանկի դրամարկղից անհետացել են քանի մի տասնեակ հազարներ: Երբ դրամարկղը բացին, նրա մէջ գտան կլէկի երկու կոճակ և մի հին, ժամանակի ազդեցութիւնից ժանդուած խցահան և ուրիշ ոչինչ: Դարձեալ որոնեցին, բայց ոչինչ չգտան: Գործը լաւ էր կատարւած:

Հետաքրքիր դատ էր ընդնշմարւում. փաստաբան Լիւբոդէնը արդէն պատրաստում էր: Խօսք չկայ, որ Բոմբոշկինի պաշտպանը նա կը նշանակւի, հապա ուրիշ մվ կը լինի: Զկայ ուրիշ այնպիսի ճարտարախօս, ինչպէս նա, և որ զլիսաւորն է՝ նրա նման բաղդաւոր. նա համարեա թէ միշտ իր ստանձնած դործերը վաստակում է: Նա տաղանդ ունի, նրա ճառախօսութիւնները մեծ հետաքրքրութեամբ են լսում: Ճշմարիտն ասած՝ նա ոչ թէ Խալոյսկում պէտք է լինի, այլ որ և է մայրաքաղաքում, այնտեղ, որտեղ Սպասովիչներ, Գերարդներ, Պլեակօններ դափնիներ են հնձում: Նա մի

անգամ՝ Անդրեևսկու դէմ դուրս եկաւ և նսեմացրեց նրան։ Ամենքըն էլ այս էին կրկնում։ Եւ ինքն էլ է զգում այս։ Նա ոյժ է... նա համոզմունքի տէր է...»

Եւ փառքի յոյսեր տածելով՝ Լիւբոյէկը վերցրեց մատիան ու սկսեց, յամ են այն դէպս, իր ապագայ ճառի ուրւագիծը ծրագրել։ Յափշտակւած ներշնչման հոսանքից՝ նա ուրւագծեց.

—Պարոն դատաւորներ, պարոն երդւեալ բազմականներ։ Միք զարմանայ վրդովմունքիս պատճառով, ես յանձն եմ առել մի դժուարին խնդիր լուծելու։ Ես պարտաւոր եմ մի մարդու անպարտութեան մէջ ամենքը համոզած են։ Միմիայն գործի արդարութեան մէջ խորին համոզմունքն է ինձ յուսագրում։ Ես համաձայն չեմ մեղադրողի կարծիքին։ Պարոն դատախազը խիստ մութը գոյներով նկարագրեց ամբատանեալի բարյական պատկերը։ Բոմբոշկինը—շիտակ մարդ է։ Եթէ նա դրամատան փողերը գողանալ ու զէր, նա վաղուց կ'անէր այդ. բայց նա չգողցաւ, որովհետեւ խիղճը չէր թոյլ տալիս նրան։ Խիղճը, պարոններ, ամենալին խթանն է։ Զուր չէ ասել բանաստեղծը. ևսիրիիր ճշմարտութիւնը—և դու սուրբ կը դառնաս։ Գիտութիւնն էլ է միւնոյնը հաստատում։ Այս բանում ժառանգականութեան մասին խօսք չի կարող լինել։ Բոմբոշկինի հայրը իբրև գլխաւոր գործակատար ծառայում էր Խասպունով վաճառականի մօտ և գործը միշտ ազնիւ կերպով էր կատարում։ Այս փաստերով է ապացուցւած. վաճառականական գրքերը ձեր առաջն են դրած, քննեցէք և համոզւեցէք։ Բոմբոշկինի մայրն էլ ամենայն օր ժամ էր գնում, նա շատ կրօնասէր կինմարդ էր և որդուն էլ դաստիարակում էր հաւատի օրէնքների համեմատ։ Անհրաժեշտ է աւելի խորունկ կերպով ուսումնասիրել երևոյթները։ Ներկայ դարում, երբ մարդկայն հանճարը, այսպէս ասած, հասել է իր գագաթնակէտին զիւտեր անելու մէջ, անհրաժեշտ է զիտական մեթոդները ձեռքին բռնած՝ մերձենալ այն բանին, որը առաջին հայեացքից անհասկանալի է թւում։ Եւ այն ժամանակ մեր առաջ կը սպարզւի միտքը,—ցանկալի, բազմախորհուրդ միտքը, պարոններ—այն բազմաթիւ վարւողութիւնների, որոնք օրէնքով լնդունւած են իբրև դատապարտելի. բայց իսկապէս զուրկ են յանցագործութեան գըլ-

խաւոր տարրներից — չար գիտաւորութիւնից։ Զէր կարող Բոմբոշ-կինը բանկի դրամարկղից զողնալ, չէր կարող խսկապէս այն պատճառով, որ նա բնութիւնով բարի մարդէ, որի հետ չէ հաշտում՝ չարի և չարակամութեան մասին գոյութիւնն ունեցող գաղափարը։ Ժամանակակից հոգեբանական գիտութիւնը, միջամտելով քրէական երեսյթների մէջ, պահանջում է զեկավարւել պատճառի ու հետեւանքի մէջ եղած ճակատագրական կապի տիեզերական օրէնքներով։ Եթէ պատճառը անկարող է վատ հետևանք ունենալ, այն ժամանակ այն վարժունքը, նայելով քրէական օրէնքների տեսակէտից, անպատճելի պէտք է համարել։

Այժմ փաստերի մասին ասենք։ Որտեղ են, հարցնում են ինձ, փողերը, ինչ եղան։

Պարոններ երգւ եալ բազմականներ։ Ես հասկանում եմ, որ ինձ այսպիսի հարց կառաջարկեն, որը շատ տեղին է։ Սակայն, ով Արարի՛, մի՛թէ անկարելի է ենթադրել, որ ականահատութիւն լինի կատարւած։ Դէ՞ն իմացել են, որ բանկ կայ, դրամարկղումն էլ փող ու ական են կտրել, և գտել են և փողերը տարել են։ իսկ իրանց հետքը կարողացել են թաղցնել։ Այսպիսի բաներ չեն պատահում միթէ։ Կամ ընդունենք թէ փողերը վատնել են։ Նա սիրում էր խեղճերին օգնել, նրա բնութիւնը շատ զեղուն է։ Միթէ նա սրանով մեղաւոր է։ շարժառիթն արդարացնում է վարժունքը և բարձր բարյականութեան կանոնների զէմ կը լինի դատապարտել մարդուն՝ մտնել կալանաւորների վաշտը միայն այն պատճառով, որ նա բարեգործութիւն է կատարել։ «Տուր և տացցի քեզ», բարբառում է Աստւածային խօսքը։ Վճռաշինջ սենատն էլ է ունեցել իր առանձին կարծիքը այս մասին։ Դարձնում եմ ձեր ուշադրութիւնը 1832 թւականին ընդ № 11457 և 1811 թւականին ընդ № 19 կայացած վճիռների վրա։ Այնուեղ պարզ կերպով ձեւակերպւած է այն հայեացքը վատնելու մասին այն տեսակէտով, որ եթէ չկայ չար գիտաւորութիւն, հետևապէս չի կարող քրէական պատիժ տեղի ունենալ։

Աերջապէս նայեցէք, պարոն դատաւորներ այս խեղճ, չարգարժան, ալեզարդ ամբասանեալի վրա։ Ընդունմակ է սա միթէ յանցանք գործելու։ Ինչպիսի հրեշտակային բարութիւն է արտա-

յայտում սրա հայեացքը: Որպիսի աղնւահոգութեան դրոշմն է կնքւած նրա դէմքի վրա:

Եւ այսպիսի մարդուն, — օ, ոչ, ես չեմ կարծում, չեմ կարող հաւատուլ... այսպիսի մարդու ճակտին չէք դրոշմի անարգ գատավմիու: Նա դատի բովից անարատ դուրս կը դայ: Նա կը վերադառնայ՝ իր նախկին պատւաւոր կենցազը վարելու:

Ես իմ սրբազն պարտաւորութիւնս կատարեցի:

Ես վերջացրի, պարոններ: Խորին կերպով համոզւած լինելով արդարադատութեան մէջ ես ամբաստանեալի ճակատագիրը ձեզ եմ յանձնում: Դուք արդարացի կը վերաբերէք նրան. ո, ես չեմ կասկածում այս բանում: Հանգիստ խղճով նստում եմ տեղս...

Սակայն այսուեղ յանկարծ Լիւրոդէւի մոքովը կասկած անցաւ. հասկա եթէ Բոմբոշկինը նրան շտայ իր պաշտպանութեան գործը, այլ այն անշնորհք Լոխմատինսկուն յանձնի: Հարկաւոր է պատրաստ լինել ամեն բանին: Փորձառու փաստաբանը պարտաւոր է միշտ հնարագէտ լինել: Այն ժամանակ, Էլ ի՞նչ ասել կուզի, Լիւրոդէւին կը հրաւիրեն իրեւ քաղաքացիական պահանջողի հաւատարմատար: Դրամատան վարչութիւնը արդէն մի անգամ դիմեց նրան: Եւ, իսկապէս, միւնչոյնն է. չէ որ բանին էլ մի այնպիսի ոչխար է, որին կարելի է կրտել: Անհրաժեշտ է միայն նոր ատենաբանութեան ուրւագիծը պատրաստել. օրինակի համար, այս, այսպէս:

—Պարոն դատաւորիներ. պարոն երգւեալ բազմականներ: Եթէ ես յանձնառաջ ներկայ գործում դրամատան շահերը պաշտպանել, միմիայն այն պատճառով, որ ես խորին կերպով համոզւած եմ գործի իրաւացիութեան մէջ: Բոլոր կամացանքները ամբաստանեալի դէմ են: Նա գողցել է վացսուն հազար մանէթ—այս կարելի է ճշմարտութիւն համարել: Ոչ ոք, բացի դրանից, չէր կարող գողնալ: Դատախազը շատ ուզիղ նկատեց, որ Բոմբոշկինը հէնց փոքր հասկից արդէն պատրաստած էր դրամատունը կողոպտելու նպատակով: Նրա հայրը Խապունով վաճառականի մօտ գործակատարի պաշտոն վարելով՝ դրամարկղից փողեր էր վերցնում երբեմն քիչ, երբեմն շատ: Նրա մայրը յայտնի էր իր սուտ կրօնասիրութեամբ: Հետեւապէս ձեր առաջ գտնեւում է ժառանգականութեան օրէնքի մի ամենապարզ երեսոյից: Ագահ ու անկշտում, Բոմբոշկինը շատ խեղ-

ճերի օջաղը քանդեց, որոնք այժմ յանձնւած են ճակատագրի կամացականութեան: Նա չարահոգի սարդ էր, միայն իր մեզսալից անձի վրայ մոտածող, բնականապէս ոճագործ, որի տեսակներին գիտութիւնը ճանաչում է ականաւոր զիտնական Չեղարէ Լոմբրոզոի արած նշանաւոր գիւտերի վրա հիմնելով: Եւ Ֆեռին, և Գառովալօն, և մարզագիտական շկոլան առ բողջովին՝ այս է հաստատում: Նորանոր հորիզոններ են բացւել քրէական օրէնսգիտութեան համար և անհրաժեշտ է նրանց համեմատ վերլուծել ոճագործական երևոյթները: Վճռաշինջ սենատն էլ նոյնպէս շատ անգամ յայսնեց, որ գողութիւնը, վատնումն՝ պատժական կանոնների հիման վրա կոչում է պատժելու արժանի վարմունք: Ես հիմնում եմ՝ 1853 թւականի, № 2711 և 1799 թւականի վճռանիրի վրա. այն տեղ պարզ կերպով ասւած է—300 բուբուց աւելին գողցողին դատապարտել կալանաւորների վաշտում մնալ և իրաւունքներից զրկել:

Պարոն երդւեալ բազմականներ: Զեզ եմ՝ գիմում յանուն արդարագատութեան. խիստ շատավճռով միայն գուք կը կարողանաք անդորրել հասարակութեան վրդովւած խիզճը: Խիզճն է, պարոններ, մեծագոյն խթաննը: Նրա մէջն է ալլում արդարազատութեան զրաւականը: Թող մեղադարտի զլսին իջնի նկազիդի սուրը:

Նայեցէք, վերջապէս, պարոններ, այս ծերունի չարագործի վրա, որ այսպէս անամօթաբար և հանգիստ կերպով դիտում է թէ ինչ տեսակ վճիռ է կայսնալու իր մասին: Ո՞ր աստիճանի չար, կարծրացած տաժանակրի կամք է կարդացում նրա աչքերում: Խ'նշպիսի յանդգնութեան դրոշմն է դրւած նրա դէմքի վրա:

Եւ այսպիսի մարդու համար,—օ, ոչ, ես չեմ հաւատում, չէ, չեմ կարող հաւատալ, —որ այսպիսի մարդու համար արդարացնող վճիռ կը կայացնէք: Այդ սարասպելի կը լինի. նա պարուառ է դատարանից բանտն անցնել, նա պէտք է մտնի այն հասարակութեան մէջ, որի անդամները այնպիսի բարոյապէս ընկած մարդիկ են, ինչպէս ինքը:

Ես կատարեցի իմ սրբազն պարուառութիւնս, պարոն դատաւորներ: Համոզւած եմ, որ արդարադատութիւնը, յանձին ձեր, կը տօնախմբէ իր յաղթանակը: Հանդիսա խղճով նստում եմ տեղու

Ես վերջացրի, պարոններ...

Եւ «համոզմունքի մարդը» անուշ կերպով յօրանջեց...

# ՓՈԹԻՒՑ-ՔՈՒԹԱՅԻՍ

Ծանապարհորդական տպաւորութիւններ

## Յ. ՄՈՒՐԱԴԵԱՆՑԻ

Այս վերջին երկու տարին ինձ լիճակւեց մի քանի անգամ ճանապարհորդել գէպի Քութայիս։ Առաջին անգամ աղդ քաղաքը ես տեսել եմ 1893 թի ամառը, իսկ վերջին անգամ ներկայ տարւաւ լուսարին։ Ամենից երկար մնացել եմ առաջին անգամ գնացած ժամանակս, այն է՝ մի ամբողջ ամիս, իսկ միւս անգամներին միան շաբաթներով եմ մնացել։ Այն անգամ գնացած ժամանակ աշխատել եմ դրի առնել այն բոլոր բաները, որ ես տեսել ու լսել եմ թէ այդ քաղաքում և թէ այն ճանապարհին, որով գնացել եմ ալղտեղ։

Խնչպէս չափոնի է՝ մեր կողմերից, այն է՝ Սուխումից՝ Քութայիս գնալու համար—երկու ճանապարհ կաէ, երկուսն էլ ծովով, մէկը Բաթումի վրացով, միւսը՝ Փոթիով։ Երկու գծերն էլ միանում են Սամարէդի կալարանում, որտեղից երկաթուղու ճանապարհը շարունակելով՝ հասնում է մինչև Ռիօն կապարանը, ալղտեղից էլ երկաթուղու մի առանձին ճիւղ գնում է մինչև Քութայիս։

Տպաւորութիւններս ես սկսում եմ ճանապարհից և այն էլ Փոթիից, որովհետեւ այդ գիծը թէ աւելի ծանօթ է ինձ և թէ աւելի լաւ դիտել եմ, քան Բաթումի գիծը։ Իսկ աւելի մանրամասն կանգնելու և խօսելու եմ զլխաւորապէս Քութայիսի վրայ, ուր համեմատաբար թէ աւելի երկար եմ մնացել և թէ ճանապարհորդութեանս նպատակն էլ աղդ քաղաքն է եղել։

Փոթի, որ մի ժամանակ Մինդինիալի մալբաթաղաքն էր, ալսօր Բաթումի և Նովորոսիլսկի հետ Սև-ծովի Կովկասեան ափերի ամենանշանաւոր և վաճառաշահ քաղաքներից մէկն է։ Գտնում է Սև-ծովի արեւելահարաւային եզերքում, Բաթումից գէպի հիւսիս և ծովով մօտ 50 վերստ նրանից հեռու իսկ ալղտեղից մինչև Սուխում՝ երկու այդքան կը լինի։

Դրսից նա բաւական մեծ, ընդարձակ և փուած քաղաք է երեսում և ահագին տեղ է բռնում, թէե հազիւ միայն հինգ հազար բնակիչ ունի և, իր տարածութեան համեմատ, շատ ցրւած և անդրդ տպաւորութիւն է թողնում. Քաղաքի դիրքը մի անծալը, լազնատարած հարթութեան վրաց է, որ բոլորովին ծովին հաւասար է և չորս կողմից անպիսի զարհութեան վրաց է, որ անպիսի անվերջ ու տազտկալի կուկուց է լսում մարդկանց թմրութեան մէջ, որ մի բոտէ կարծում էք, թէ ալդտեղ գորտերի թագաւորութիւն է, նրանց աշխարհն էք մտել էլի ձմեռը մի քիչ աշխովք է երեսում քաղաքը. Բոլորովին քաղաքի մէջ համարեա դեռ մինչեւ ալսօր էլ մնացել են ալդպիսի ճահճապին մացառներ ու անտառներ, ան էլ ջրասէր լաստենիների (օլլա) անտառներ, որոնք սկսւելով քաղաքից, տաճնաւոր վերստեր տարածում են դէպի երկրի խորքը. Նոչ խօսք որ ջերմը ալդտեղ մեծ զրհեր կ'անէ. ալդ կողմից գուցէ ալս աշխարհը ամբողջ Սև-ծովի կովկասեան ափերում առաջինը կը լինի.

Քաղաքի միջից անցնում է Ռիօնը, բաւական մեծ գետ, որ ալդտեղ համարեա միշտ պղտոր ու գանդաղ եմ տեսել. Գեղեցիկ է այն տեղը, ուր Ռիօն ու ծովը խառնւում են իրար. Ծովի անհուն և լազնատարած կապուտակութեան մէջ բաց-կանաչին խփող Ռիօնի աղմուս ու պղտոր ալիքքները դանդաղ ընկնում են ծովի գիրկը և, կաքծէք, երկար ժամանակ ծովը չէ ուզում նրանց իր մէջ ընդունել. անքան պարզ և որոշ է երեսում այն դիմք, որ բաժանում է գետի բերանը ծովից. Գետի վրան շինւած է (1873 թւից) երկաթէ մի երկան կամուրջ, որի վրակով անցնող թէ սակլից և թէ մարդուց վճար են վերցնում:

Քաղաքը կենդանի տպաւորութիւն չէ թողնում տեսնողի վրաց, գոնէ ալդպիսի տպաւորութիւն է արել իմ վրաց, թէե ես նրան ամառն էլ եմ տեսել, ձմեռն էլ. Եւ միթէ ալդպիսի թաց, ճահճապին և զարհութելի ջերմուս և ապականւած կլիմացում էլ մարդու վրաց աշխովք ու եռանդ կը մնաց որ երեաւ, թէի աբէտք է առեմ, որ բաւական տներ ու խանութներ կան ալդտեղ. ունի լաւ բազար, կան հարուստ վաճառանոցներ, բաց և անպէս դեռ էլի տների մեծ մասը փալտից են շինւած. քարէ տներ քիչ են, իմ վերջին գնացած ժամանակ նոր շինւող տներ կավին. նրանք էլ փալտից էին,

Բնակիչների մեծ մասը մինքրէլ ու վրացի են, թէե կան ալդտեղ նոնպէս և հակեր, տնով հազիւ մի քսանընդ, մեծ մասով վաճառական, բաց պանդուխտ մշակներ՝ գլխաւորապէս Թիւրքա-Հաղաստանի զանազան կողմերից, շատ կան, մօտաւորապէս մինչեւ 300. Հակերն ունին իրանց համար եկեղեցի ու քահանա:

Քաղաքի ամենամեծ և կենդանի բանը նաւահանգիստն է, որ վեր-

Չին տարիներս արհեստական կերպով շինւեց և հիմա հիանալի նաւամատուց է շինւած ալղտեղը. Առաջւան պէս շոգենաւը վերստերով հեռու չէ կանգնում ափից, այլ ուղղակի մտնում է ծոցը և բոլորովին ափն է գալիս՝ թէն ոչ միշտ. Դեռ հիմա էլ մեծ ալեկոծութիւնների ժամանակ, շոգենաւը երբեմն բոլորովին չէ էլ հանդիպում ալղտեղ. նաւամատուցը շինւած է, բայց դեռ վերջնականապէս չէ աւարտած. ասում էին, որ դեռ պէտք է շինեն, որքան որ՝ նաւահանգիստը բոլորովին ապահով ու անվտանգ դառնաբ. Ծոցը չորս կողմից քարէ պատնէշ ունի, որի վրայ բէլմներ են ձգւած՝ երկաթուղուց վագոններով ապրանքը ուղղակի շոգենաւը տալու համար:

Փոթին կովկասեան ափերում արտահանութեան մեծ կենտրոն է: Աւելի մեծ կը լինէր նա, եթէ կողքին վլինէր առեստի և արտահանութեան մէջ մի անգիտի ուժեղ կոնկուրէնտ, ինչպիսին Բաթումն է: Ամեն շաբաթ երկու անգամ կանոնաւորապէս ալղտեղ գնում-գալիս են «նաւագնացութեան և առեստի ուսուական ընկերութեան» մարդատար շոգենաւերը, իսկ ապրանքակիրները թէ նոյն ընկերութեան, թէ ուրիշ և թէ նոյնպէս արտասահմանից, անգիտական և ամերիկական շոգենաւերը համարեա ամեն • որ գալիս են և շատ անգամ օրերով մնում են ալղտեղ. Երբեմն նոյն իսկ մարդատար շոգենաւերը ժամերով կանգնում են ալղտեղ. անքան շատ է լինում բեռը. մարդատարը որ ալղպէս, ինչ կը լինի ապրանքակիրը: Փոթիի արտահանութեան գլխաւոր բերքը սիմինդրն է. զրանով նա ամբողջ կովկասեան ափերում առաջին տեղն է բռնում և, եթէ չեմ սխալւում, ալղ բանում Սեծովի վրայ նա միմիան Օդէսսից մես կը մնակ Երբեմն միմիան մի շոգենաւ հարիւրաւոր ջւալներով սիմինդր է ընդունում: Այսօր մօտաւոր հաշով՝ Փոթիի նաւահանգստից արտահանւած սիմինդրի քանակութիւնը կարելի էր ընդունել չորս միլիոն պուղից աւելի: Դեռ 1890 թւին արդէն 4 միլիոն պուղի էր հասնում և, ինչպէս երեսում է վիճակադրական թւերից, հետզետէ ալղ բերքի արտահանութիւնը աւելացել է և մեծ չափեր է ստացել. Այդտեղից արտահանւած սիմինդրը գնում է թէ Ռուսիա և թէ արտասահման: Այդ նաւահանգստից արտահանում են նոյնպէս Կովկասեան շատ ապրանքներ, ալղպէս՝ ցորեն, բամբակ, բրինձ, կովկասեան մարդանէց, գինի, Թիֆլիսի Տուլէլի գործարանից ձէթ և ալղն:

Աւելորդ չէ լիչել ալղտեղ, որ նաւահանգիստը շատ հեռու է քաղաքի կենդրոնից, անգիտ որ մինչեւ ալղտեղ մօտ 3 վերստի չափ ճանապարհ է քաշում:

Բացի նաւահանգստից քաղաքի կենդանութեան և ծաղկելուն քիչ չէ նապաստում և երկաթուղու գիծը, որ բացւած է եօթանւասնական թւականներից և կապում է նրան Թիֆլիսի հետ:

Փոթիից մինչև Քութալիս 98 վերատ է. երկաթուղիով՝ մօս 5 ժամեր ճանապարհ է, նրկաթուղին՝ քաղաքից ակսած մինչև համարեա Նոր-Սէ-Նակի կալարանը՝ ամբողջապէս ճահճապին անտառների միջամին է անցնում. ճանապարհի երկու կողմում համարեա միմիայն ջրասէր լաստենիներն են երեւմ. Անտառը բաւական նոր է, ջահիլ անտառ է, ծառերը մոծ չեն, բայց միենոյն ժամանակ սաստիկ անմասէլի՝ անանցանելի չցամաքող ճահճների ու ջրի պատճառով և պատառուկ ու գերելուկ թփերով ու փշերով խճճւած լինելու. համար. Ազդ տեղերից ես անցել եմ ամենաչոր ժամանակը, բայց էլի կանգնած մեծ-մեծ ջրեր եմ տեսել, իսկ չորացած եղէզը միշտ էլ անպատճառ է եղել. Եղէզն արդէն լաւ նշան է՝ այդ կողմերի որ աստիճան թաց լինելուն. Համարձակ կարելի է ասել, որ անտառի ամբողջ տարածութիւնը մինչև աչքի կտրած տեղը ազգիսի փթած ու կանգնած ճահճների բուն է: Չորս կողմը ուր որ նայում ես, լաստենիների անտառն է երեւմ իր կանգնած ու տեղ-տեղ նոյն խոկ բաւական խոր ընկած ջրերով ու հորերով և եղեղնոտ բուժերով.

Տեսքով՝ հողը թուլ անգոյն ու մոխրի պէս է. աւելի ցամաք, քան ծանր կաւալին. Մէկ օր, երբ այդ անտառները կը ոչնչանան, մի լայնատարած գեղեցիկ դաշտ կը բացւի տեղը:

Վերջապէս գնացքը կանգ է առնում. հասել ենք առաջին կալարանը՝ Ճալագիգի, որ բոլորովին անտառի մէջ է և չորս կողմը ոչ տուն է երեւմ, ոչ գիւղ. Ացտեղ աչքը մի բան չի տեսնում, էլի առաջւան լաստենիներն են իրանց կանգնած ու հոտած ջրերով և դրանցից անբաժան եղեղն ու փշերը:

Ազգպէս չէ երկրորդ կալարանը՝ Նոր-Սէնակի: Ճշմարիտ է՝ դրան մօսիկ էլ կան ճահճոտ անտառներ, բայց ալղտեղ արդէն մարդու աչքը ախպիսի գեղեցկութիւններ է տեսնում, որ ալղտեղը անցածի մօտ՝ զբախտի չափ գեղեցիկ է թւում: Նոր-Սէնակի աւան է (ԹԵՇԵՎՔ). այդտեղ է Մէնակի գաւառի վարչական կենտրոնը, ունի պոստ և հեռագրատուն, ռուսաց նորմալ ուսումնարան և գաւառական գանձարան: Աւանը գեղեցիկ դիրք անի, շինւած լինելով բարձունքների ու բարձունքների սոսորատում, ընդարձակ ու լանջածաւալ հարթութիւնը առաջներ: Տները դրսից բաւական կոկ ու գեղեցիկ էին երեւմ, կանոնաւոր փողոցներով: Ականեղ չորս կողմը, աւանին մօտիկ, միան սիմինդրի արտեր էին երեւմ, այն ինչ անցած ճանապարհի վրայ, դէպի Թօթիի կողմը, սիմինդրի արտեր պատահում են շատ քիչ, ինչպէս երեւմ էր, անտառներից բացւած տեղերում, այն էլ ուր որ մի քիչ աւելի չոր է եղել Ափերում մեացած ծղոտներից արդէն երեւմ էր, որ հողը անքան բերին ուժով չէ. ցողունները շատ նիհար էին, խակ բարձրերն էլ հեռաւից քարտ, մաշւած ու ջրից տարւած էին երեւմ: Ակստեղ էլ մօտակալ անտառներում ու

ծառնոցներում զլիսաւորապէս լաստենիներ էին երեսւմ. միւս տեսակ ծառեր քիչ էին: Տեղ-տեղ սիմինդրի արտերում թողած ծառերի վրայ երիսում էին բարձրացող խաղողի որթեր, բաց շատ քիչ: Դաշտում և անտառում արածող մալերի մէջ պատահում էին կով, եղ, իսկ գամէշը՝ Փօթից սկսած մինչև ալդտեղ, ամբողջ ձանապարհի վրայ, ոչ մի տեղ չպատահեց, թէն ալդ տեղերը բակ և իսկ գոմիչի տեղեր են, տաք ու ձանձափին կլիմա արածելու տեղ չատ, անչափ ու անժիռ ձահիճներ: Պատահում էին նոյնպէս և խոզ, սազ, բաղ, հաւ և հնդուհաւ: Վատ տեղեր չեին և հաւեղինի համար, ընդամակ հարթութիւն, սիմինդրի առատութիւն և ամեն անդ չուր ու ճաճին: Խմ տեսած եղջիւրաւոր անատոնները շատ մտնոր տեսակից էին և, ինչպէս երեսում էր, դրանց վրայ շատ խնամք չէ տանւում: Հափից դուրս սիհար էին երեսում, մանաւանդ Փօթիում:

Նոր-Սէնակիից հետզետէ դէպի Ռիոն թէ անտառն է բացում ու քշանում և թէ ձահիճներն են պակասում, բաց բալրութին չեն անհետանում, տեղ-տեղ նրանք էլի պատահում են, նոյն իսկ տարւակ ամենաչոր ժամանակն էլ: Անփոփոխ շարունակում է էլի անծալը հարթութիւնը, որ կտրում է մրմիան հեռու հորիզոնում ձգւած անտառապատ շղթաներից:

Երրորդ կալարանն է Աբաշա, դրանից լեռոյ է Սամորէդի, որ չորրորդ կալարանն է Փօթից սկսած: Սամորէդի թէն զիւղ է, բաց մեծ կեսրոն է շրջակաչքի համար, ալդտեղ է միանում Փօթիի ճիւղը Բաթումի գծի հետ: Չնակելով որ ալդտեղ էլ առաջին անգամ մարդու աչքը ճահճափն հարթութիւն է տեսնում, չնակելով որ ոչ զիւրքն է լաւ, ոչ էլ տեսքով մի բան է, բաց և անչպէս ալդտեղ շատ աւելի աշխոց ու կենդանութիւն է տիրում, քան նախորդ կալարաններում: Կալարանին մօտիկ տասնաւոր խանութիւնը են շինւած, ուր՝ ինչպէս երեսում էր, մեծ շարժում ու առուտուր է լինում:

Փօթիից սկսած մինչև ալդտեղ ալմբողջ ձանապարհի վրայ երկաթուղու գու գծին մօտիկ, վերը լիշած Յ գիւղերն են տեսնուում՝ Նոր-Սէնակի, Աբաշա և Սամորէդի: ուրիշ մեծ գիւղեր չեն պատահում: Ձանապարհի երկու կողմը մեծ մասով հատ-հաստ տներ են երևում, կամ 2—3 աների փոքրիկ խմբեր, ցրւած անտառապատ հարթութեան վրայ Ացդ տների մեծ մասը փաչտից էին շինւած, տախտակով էլ ծածկւած: բաց տեղ պատահում էին և երկարկանի գեղեցիկ տներ պատշգամիներով ու կղմին-գրի ծածքի բով, և նոյնպէս մի-երկու տեղում՝ նոր-նոր ծառեր տնկած: Ինչքան Սամորէդին մօտենում էինք՝ տներին մօտիկ խաղողի որթեր այնքան շատանում էին: Նրանցից շատերը հին և մեծ որթեր էին՝ բարձրացող տեսակից և, ինչպէս երեսում էր, անխնամ թողնւած էին ծառերի վրայ:

Սամարէղից այն կողմը դէպի Ռիօն՝ դաշտերն աւելի են բացւում։ Խիտ անտառներ աչնքան չեն երեսում, տեղ տեղ միայն մաշառներ են պատահում, թէս նրանք էլ թաց ու ճահճու են, թէս ոչ առաջւան չափ։ Հողը քանի գնում՝ անդոխանում է. դեղին, խոզ հող է, բաց խորը։ Քար չէր երևում տակը։ Դաշտերի դիրքը գեղեցիկ է, բաց տեսքի չափ ոչ բերբի են և շատ տեղ էլ ոչ աչնքան ցամաք, որ ցորենի մշակութեան համար էարմար լինեն։ Երեխ ալդ էր պատճառը, որ երկաթուղու գծի եր։ Կու կողմի արտերի մեծ մասը սիմինդրին էր, ցորեն քիչ տեղ էր ցանւած։ տեղ-տեղ կավին և խաղողի ազգիներ. խակ ամառը ալդ կողմերից անցնելիս տեսնել եմ նոյնպէս և լոբիա ցանած՝ շարքերով և առաւներով, բաց ազդ էլ տեղ-տեղ էր և եղածն էլ մեծ տեղ չէր բանում։ Ցորենն ընդհանրապէս լաւ չէր եղել, չէր բարձրացել. սիմինդրին էլ նոսր էր եղել լաւ չէր. դաշտերի խան էլ շորցած ու խանձւած եմ տեսել։

Վերջին ճանապարհորդութեանս ժամանակ՝ լունւարի մէջ, Սամարէղից այն կողմը դէպի Քութավիս գիւղացիները հերկում էին արտերը թեթև մի լծկանի արօրով։ Երեխ ցորենի կամ գարու համար էր. սիմինդրի համար դեռ վազ էր։ Տեղ-տեղ հողը բոլորովին քարքարոտ կազմութիւն ունէր, ջրի մանր քարերով լիքը, ազգալիսի տեղերում էլ ալտ էին արել։ Նրանք հերկում էին, թէս քարը մի կողմից, հողի գժգոնութիւնը միւս կողմից պարզ ցուց էին տալիս հողի աղքատութիւնը։ Երեսում էր որ աւտեղիցն էլ հողի պակասութիւն կաէ, գիւղացու ձեռքին հող չկաէ. թէ չէ այն անծալը ու անվերջ դաշտավայրում էլ միթէ բանելու հող չկար, որ մարդ անպիսի քարքարոտներին կարօտ մնար։

Գիւղացին աչնքան տղետ չէ. գոնէ իւր գործի, հողի վերաբերմամբ աչնքան էլ տղետ չէ. նա լաւ տեղ թողած, վաստեղ չէր բանի, եթէ միացն լաւն ունենար. Զունենալու նշան է, որ մաքուր հողի տեղ՝ քիչ է մնում տաեմ, թէ մաքուր քար էր հերկում ու բանում. աչնքան քարոտ էին տեղ-տեղ իմ ասած արտերը։

Սամարէղից այն կողմը անցնում ենք էլի երկու կազարան, (Կոպիտնարի և Սուլսան), մինչև որ վեջապէս հասնում ենք Ռիօն, մի անմարդաբնակ կազարան, որտեղից երկաթուղու մի առանձին ճիւղ տանում է մեղ Քութավիս։

Դեռ ևս Ռիօն չհասած՝ արդէն երկութուղու ճանապարհից երեսում է Քութավիսը բարձունքների ստորոտին, հեռուից կարծէք մի քիչ վտու ընկած։ Ահադին, անծալը, լացնածաւալ դաշտավայրը վոււած է առաջը, որի ծալքերը կորչում են շատ հեռու հորիզոնին սմին տւող սարերի ստորոտներում։

Ռիօնից մինչև Քութավիս 8 վերտու է. Համարեա բոլորովին Ռիօնի մօտից երկաթուղու ճանապարհի մի կողմը ձգւած է կաղնու գեղեցիկ և

մատղաշ անոտառը, որ համարեա զուտ կազնուտ է, բաւական մաքուր է և ինամքով պահւած: Անտառի մի ծալրը վերջանում է Քութացիսի երկաթուղու կաւարանի մօտ: Քայցարդէն քաղաքն երևում է, ահա և ինքը կաւարանը:

Քութակիսը, Խմէրէթիալի ալդ հին մակրաքաղաքը աճօր Թիֆլիսից լեռու վրացիների ամենանշանաւոր քաղաքն է: Գտնւելով բոլորովին Խմէրէթիալի սրոտում, ալդ քաղաքը իր՝ համարեա զուտ, անխառն և զեռ ևս իր ինքնուրոջնութիւնը պահպանած վրացի ազգաբնակութիւնով կազմում է ալդ աշխարհի սիրութ, արտականական իր մէջ նրա ժողովրդի և վրացիների սոզգակին ողին: Ազդ կողմից նա գուցէ Թիֆլիսից էլ լաւ է արտականութ վրաց աշխարհը և վրաց ազգի ողին, թէս չէ կարելի մոռանալ որ Թիֆլիսը մեր երկրում ինչպէս մեզ համար, նոյնպէս և նրանց համար մոռքի և լուսաւորութեան ամենամեծ կենտրոնն է աճօր:

Քութակիսը առաջին անգամից արդէն գեղեցիկ տպաւորութիւն է թողնում տեսնողի վրա: Կարսող ևմ ասել, որ Անդրկովկասում իմ տեսած գեղեցիկ քաղաքներից մէկն էլ զա է: Կանաչ ու մացաւապատ բլուրների տառորսուն, անալին լանաձաւալ հարթութիւնը առաջին, որ դէպի Փօթի հաւասար հարթութիւնով անվերջ դնում է և կորչում է շատ հեռու, ոեին տւող հորիզոնում: Խակ արենելքում կտրւում է բարձր ձիւնապատ շղթաներուի ձշմարիա է քաղաքը շատ բարձր չէ ծովից, լեռնավին դիրք չունի, բայց նրա գեղեցկութիւնը հէնց ազդ լանաձաւալ հարթութեան մէջ է, որ սկսելով քաղաքի մօտից, գնում կորչում է հեռու, շատ հեռու, անպէս որ ոչ ծալր է երևում և ոչ վերջ:

Քաղաքի միջից անցնում է Ռիօնը, որ թէե աղդտեղ անպէս մեծ չէ՝ ինչպէս Փօթիում, բայց շատ արագաւազ է: Գետի վրաց շինւած են մի քանի կամուրջներ:

Քաղաքը իրեն նահանգական քաղաք՝ մեծ չէ, հաղիւ միան 23 հազարի չափ բնակիչ ունի, թէե իր բռնած տեղովը աչքին մի քիչ աւելի մեծ է երեսում: Տները հասարակ չենքեր են, թէե պատահում են նրանց մէջ և գեղեցիկ չենքեր: բաւական բաղմաթիւ են ալդանել քարէ տները, բայց ընդհանրապէս մեծ և ճարտարարւեստ չենքեր քիչ կան, անքան աչքի չեն ընկնում: Ունի բաւական մաքուր և տեղ-սեղ ծառաղարդ փողոցներ, թէե քիչ չեն և անպիսի փողոցներ, այն էլ զվարաւոր տեղերում, որոնք գեռ սալուկատակւած չեն: Բացի մօտիկ անտառապատ բլուրներից քիչ գեղեցկութիւն չեն տալիս քաղաքին և իր մէջ գտնուած խաղողի փոքրիկ աղջիներն ու պարտէդները, որոնք գտնուում են զվարապէս քաղաքի չորս կողմի ծալրերում և աւելի հիւմիս-արենելեան ու և արևմտեան

կողմերում։ Այդ պարտէզները ու ալգիները թէև խկապէս մեծ բաներ չեն, ծաղկոցների ու «ածուքների» (բանջարանոց) չափ տեղ էին բռնում, բայց թւով շատ էին։ Շատ տեղ էլ քաղաքի հեռաւոր ծալրիրում, տներին մօտիկ, աղդ ալգիների հետ կից կալին և սիմինդրի արտեր, տեղական թէ արտերի և թէ աղդ ալգիների շուրջը քարէ լաւ պարիսպներ էին քաշւած։

Երեսում էր որ քաղաքացիների մէկ մասը երկրագործութիւնով էլ էր զբաղւած։ Քաղաքի ծալրերում, ուր որ աներ կալին, համարեա մէկ խիզ բաց տեղ չը մնացել, բոլորը մշակւած էին, ուր ալգի չեին կարողացել գցել, արտ էին արել սիմինդր էին ցանել։ Դրան վկացում էին ոչ սիան արտերն ու նրանց մէջ մնացած ու կորցրած սիմինդրի առլորջները (ցողովները), ալ և աներին մօտիկ՝ ծառերի վրա կանգնած ածեղի (սիմինդրի տերեների) զէցերը։ Երեի աղդ երկրագործութիւնով պարագողները քաղաքի աղքատ դասի բնակիչներն էին, արդէն իրանք արտեղ ապրովներ, նրանց աղքատիկ, ցախով հիւսւած ու կաւով ծեփւած խըրձիթները, նրանց սարքը—ալգ խեղճութիւնն էին արտաւախում։

Այդ պարտէզներում բուսող ծառերի մէջ զլիստորապէս պատահում են նոնենի, թզենի, կեռասենին, թթենին ու բալենին, խնձորի ու տանձի ծառեր համարեա չեմ տեսել դրանց մէջ։ Խաղողը սպիտակ էլ կար, սև էլ. թէև կալին և բարձրացող տեսակից, ծառերի վրա վտողնւած, բայց դրանք շատ քիչ էին. աւելի ցիցերի ու նեցուկների վրա էին կապւած։

Քութացիսի օղը աճնքան խիստ ու չոր չէ, թէև համեմատած մեր Սև ծովի ափերի հետ, օղի չորսութիւնը բաւական զգալի է արդտեղ. ձմեռն էլ մի քիչ աւելի մեղմ է լինում, քան Թիֆլիսում։ Մասնաւորապէս ալս տարի նոյն խոկ լունւարի կէսին աղտաեղ ոչ ձիւն էր եկել և ոչ էլ աւելի ցուրտ կար. Խոկ և խոկ աշնանակին եղանակ էր անում. համարեա տարբերութիւն չունէր փոթիի օղից, աճնտեղ էլ նոյն միջոցներին աճնքան ցուրտ էր համարեա. Քութացիսի կլիմաէի ամենաաչքի ընկնող տարրերից մէկն է քամին, որ չաճախ լինում է աղտուվ, տարւալ ամեն ժամանակն էլ փշում է և անագին, շահսնւած փոշի է բարձրացնում փողոցներում. Թողի կողմից՝ մօտիկ տեղերից նրա հետ գուցէ միան փոթին կարող է, հաւասարւել. ուրիշ ոչ մի տեղ աղդքան թող չիմ տեսել։

Խմելու ջուրը անհամ և ծանր է. խմում են զետից, որ տարւալ մեծ մասը պղտոր է լինում։

Քութացիսը, ինչպէս ասեցի, ունի մօտ 23 հազար բնակիչ, դրանց մեծ մասը վրացիներ են, կամ ինչպէս նրանց ասում են՝ խմերէ։ Քաղաքը զուտ վրացական տիպ ունի, բաց թողնելով միան վերջին ժամանակները շինւած եւրոպական ձևի մի քանի մեծ չենքերը։ Ամեն տեղ վրացուն և

վրացերէնն էք տեսնում ու լսում ազդակ, քաղաքի որ վողոցում ասէք, վրացիների կը տեսնէք, արհետաւորների, վաճառականների, ամեն տեսակ աստիճանաւորների ու ծառալողների մեծ մասը—վրացի իմէրէլներն են:

Իմէրէլները զւարի, առողջ և ուրախ ժողովուրդ են, երգ, զինի ու խօսակցութիւն շատ սիրոց: Շատ անդամ է պատահել ինձ երկաթուղու ճանապարհով գնալիմ՝ տերնել իմէրէլներին, իրար մօտ խմբւած, խօսք և զրոյց ամսելիս, երգելիս և խմելիս՝ մօտերը զրած զինով լիքը տկնորից: Առհասարակ ազդ մօրդիկ իրանց տեսքով, չարժւածքով ու վարժունքով վերին աստիճանի զարթուն ու կենդանի ազգի տապաւորութիւն են թողնում տեսնողի վրաց Տեսքով՝ իմէրէլը մեծ մասամբ բարձր ու երկարահասակ է, գեղեցիկ, երկար ու մի քիչ թուփ դէմքով, վայելուչ կազմածքով և շատ շատել ը միրուքով: Հայուստը զլիխն՝ «գալիբանդր», վիճ՝ «բաշլըզ» վրան՝ երկար «չօխա» գոտիով ու «մասրներով». չխի վրադից՝ «եափընջի», ոտնիերին՝ ծտով կօշիկ կամ թեթև ոտնաման (ամառ): Գոտից անբաժան կախւած է լինում մշտապէս սուր, դաշտն կամ բէւոլէէր իմէրէլուհիներն էլ զեղեցիկ են, նունակէս բարձր ու բարակ հասակով, նուրբ ու քնքոյց կազմածքով, աշխով ու վառվուն համեացքով, բաց և անպէս չէ կարելի ծկասել, որ նրանց գեղեցկութիւնն աւելի է հոշակւած, քան տեսնւած: Նրանց մօտ ազգային տարազը հագուստի մէջ աշնքան չէ պահպանւած, ինչքան տղամարդկանց մօտ աւելի շատ պատում է մետաքսի ձեռագործ շալը, որ գցում են ուսերին, և երբեմն էլ՝ գուրիական ձեր զլիխ փաթթոցը, որ գեղեցիկ բան է և շատ սազում է նրանց զէմքի արտակարգութեանը:

Սկսանդ չեմ կարող չնկ ստել մի բան, որ ես շատ անդամ եմ զիսել իմ ճանապարհորդութիւնների ժամանակ: Առհասարակ վերը նկարագրածի պէս իմէրէլի տիպը՝ առողջ, բարձր, դաշելուչ զւարի ու աշխովը աւելի պատահում են իմէրէլ իշխանների ու ազնւականների մէջ և աշխատաւոր գասակարդի հետ համեմատած՝ ամեն կողմից բարձր և ասպահով դասակարդի մէջ: Վինչդեռ լուս աշխատաւոր զասակարդի մէջ, գիւղացիների, մշակների և քաղաքի աղքատ ու բանուր զասի մէջ—տիրապետում է աւելի կարծ, փոքր տիպը, զրանց մէջ բարձր, զւարի, չաղթանգամ զամ և զօտին զէնքերակ զարգարած մարդիկ հազիւ էին պատահում: Մասնաւորապէս գտին զէնքերով զարդարովները, սուր կամ զաշոչն կախողները մեծ մասով աւելի ազնւական ծագումից են լինում: Աչքի առաջ ու նենալով, որ ազգային առողջ զէմքերով ու զէնքերով մարդիկ շատ են պատահում առհասարակ իմէրէլների մէջ, պէտք է կարծել, որ ազնւականներն ընդհանրապէս բաւական մեծ տոկոս են զագմում զրանց մէջ:

Քութակիսը արդիւնաբերութեան ու առետրի մէջ մի առանձին կենտրոն չէ ներկայանում: Հնայելով, որ ազդ քաղաքը երկաթուղիով կատ-

ւած է առևտրական աճնալիսի նշանաւոր կ'նարառների հետ, ինչպիսին են Թիֆլիս, Բաթում և Փոթի, նոյնպէս և Տղիբուլի հանքերի հետ. խակ խճուղիով միացած է Խոնիի վրախով Սամարէզիի, Լէջխումի և Բաձափի գաւառների և Աբասթումանի հետ. Տեղական արդիւնաբերութեան մէջ ամենանշանաւոր բերքն է քարածուխը, որ ստացւում է Տղիբուլի գալունի հանքերից, որի հետ քաղաքը կապւած է երկաթուղու մի առանձին ճիւղով. Մնացած արտահանւող բերքերից լիշելու են՝ սիմինդրը, գինին և մեղքը. Տեղական գինիների մէջ ամենից աւելի անուն ունին Սփրի գինիները. Գիւղական մանր անդիւնաբերութեան նիւթերից ամենին աւելի արտահանութիւն ունին կաւէ ամանները, որոնց հոչակը ամեն տեղ տարածւմ է:

Քաղաքում եղած գործարաններից իմ տեսածներս որանք են. մէկ հատ՝ թութունի և պապիրոսի, մէկ հատ՝ կրի, մէկ հատ էլ՝ տեղական կոնհակի և ողելից խմիչքների. խոկ բոլոր գործարանների ու ամեն տեսակ գործառների թիւը քաղաքում պաշտօնական ազբիւրներին նաևելով՝ 25-ի չափ կը լինի.

Առնուուրը քաղաքում ընկած է. առևտրական մեծ տներ ու երեսլի վաճառատներ չատ քիչ են ազգտեղ, մանուֆակտուրափի հազիւ մի 4—5 խանութ կար, խոկ պատրաստի զգիստների համար ընդամենը միմիան 2 խանութ. մի քիչ աւելի հն գալանտէրիական նիւթերի խանութները. Թէլատներ ու սրճարաններ նոյնպէս քիչ են, բայց շատ են գինիտներն ու մանր-մունր բանների խանութները:

Վրացիք քաղաքում ունին հնգի չափ եկեղեցի, թէ ուզգավառ. եկեղեցիների թիւը պաշտօնապէս 12 է լիշում. բայց ես ալգքան չեմ տեսել և հաստատ էլ չգիտեմ, թէ ալզ բոլորը քաղաքում են, թէ քաղաքից դուրս, թէ անտեղ քաղաքի վրայ են լիշւած. բուն քաղաքում իմ տեսածներու ազգքան չկացն. չեմ կարծում, թէ նրանք 5 հատից աւելի լինէին. Դրանց մէջ ամենանշանաւորն է մազր-եկեղեցին, շնուած գեղեցիկ տեղում, քաղաքի կենտրոնում, քաղաքավն պարակի գէմը. Քաղաքն ունի կլասիքական գիմնազիա տղանց և թէ օրիորդաց համար, կան մի քանի ստորին կարգի ուսումնարաններ երկու սեռի համար, գլխաւորապէտ, սքրացիների համար. զբանց թւում՝ մի հոգերոր ուսումնաբան տղանց համար, մի հատ ձրի ուսումնարան օրիորդաց համար, մի 4—5 հատ էլ մասնաւոր գիշերօթիկ ուսումնարաններ. մի հատ էլ վերջին տարիներս շինւած գիւղատնտեսական ուսումնարան. Քաղաքի բոլոր զպրոցների թիւը 15-ի չափ կը լինի.

Գիւղատնտեսական ուսումնարանը շինւել է 1893 թվուն. գտնուում է քաղաքից մի քիչ դուրս, Ռիօնի աջ ափին, խճուղու ձանապարհի վրայ մացառու անտառին մօտիկ. Տեղը գեղեցիկ է և չարմար. չենքը ընդարձակ և փառաւոր. Մօտիկ ունի մի քանի գետեատին սեփական հող, որի

վրայ արդէն սկսել էին աշխատել Երկար՝ տարածութեան վրայ երկաթէ ցանկապատ էր քաշւած. հողի մի մասը հերկւած էր, մի մասի վրայ կողտ կողտ աղբ էր լցւած. մի մասը արմատներից ու փշերից բացել մաքրել էին. տեղ-տեղ էլ հարիւրաւոր մանր ծառեր էին անկել մեծացնելու համար. Ուսումնարանը ունէր 4—5 հատ փեթակ մեղու՝ Լէւիցկու, իտալական և այլ սիստեմի, փեթակների վրայ սիստեմի անունը գրած: Երեսում էր, որ այդ ուսումնարանին էր չատկացւած և թօնի աջ ափի մօտ գտնած մալրի ծառերի գեղեցիկ պարկը, ուր մալրի, եղնի և առնասարակ մշտականաչ ծառերի գեղեցիկ օրինակներ կան: Կարծում եմ, որ մեծ զամբը կ'արդարացնի: այդ ուսումնարանը՝ գտնելով մի աճնպիսի նահանգում, ուր, ինչպէս ասում են, հողի մեծ պակասութիւն է զգացւում:

1893 թվին, երբ ես առաջին անգամ տեսաչ ացր քաղաքը, հազիւ միան մի մասնաւոր գրադարան կար ազդտեղ (Տխորժեւակալի), ուր բոլոր գրքերն ու թերթերը ուսուերէն էին. մէկ հատ միան վրացերէն թերթ կար: Այս վերջին ճանապարհորդութեան ժամանակ՝ Քութաէլիսի մտաւոր աշխարհում մի մեծ ու միսիթարական հասառատութիւն էր աւելացել, դա էր քաղաքային հասարակական ձրի գրադարան-ընթերցարանը, որ զետեղւած էր քաղաքավին դումալի շինութեան մէջ և շատ լաւ տալաւորութիւն էր թողնում տեսնողի վրայ: Վշտաեղ ստացւում էին մալրաքաղաք-ների համարեա բոլոր լաւոնի թերթերը. բայց մի բան որ շատ աչքի էր ընկնում, այդ այն էր, որ վրացական այդ մեծ կենդրութում, աճնքան թերթերի մէջ հազիւ միան մի վրացերէն թերթ էր նկատում, իսկ հաջերէն հօ ոչ մի լրագիր չկար, չնայելով, որ ընթերցարանը կրում էր «քաղաքային հասարակական» փառաւոր և մեծանչչիւն անունը:

Որքան եռ կարողացաւ տեսնել՝ վրացերէն թերթեր «Խվերիա» և «Ալւալի» բաւական տարածւած էին քաղաքում, աւելի շատ առաջինը, որ համարեա ամեն հիւրանոցում ու պանդոկում կարելի էր տեսնել<sup>1)</sup>:

Քաղաքում կար երկու գրավաճառանոց, ուր մէկ մասով՝ վրացերէն գրքեր էին ծախում, ուսւմնին լեզուի՝ միան գասագրքեր և ոռու լաբանի գրողների մի քանի ժողովրդական հրատարակութիւններ կալին: Մէկում միան տեսաչ Դէւրիէնի գիւղատնտեսական հրատարակութիւններից մի քանիսը. Վերջին գնացած ժամանակս մի նոր գրավաճառանոց էլ էր բացւել որ միւսներից աւելի հարուստ էր:

Քանի անգամ որ Քութաէլիս եմ եղել, վրաց թատրոնական ներկացումները անպակաս եմ տեսել. թէ ամառ և թէ ձմեռ ներկաչացումներ

<sup>1)</sup> Քութաէլիսում, եթէ չեմ սխալւում, վրացերէն միան մի թերթ է հրատարակում, այն էլ կրօնական բովանդակութիւնով վրաց հոգեորականութեան ձեռքով, կէսը ոռուերէն («Մեծղեմսի»):

միշտ եղել են Կաչ ազգակաղ վրաց գրամատիքական մշտական խումբ։ Պատահել է ինձ տեսնել նոյն խոկ շաբաթը Յ անգամ ներկայացումներ, որ Թիֆլիսի համար էլ մեծ բան է, որ մեաց թէ Քութայիսի համար։ Մուտ չեն ասում, որ առհասարակ թատրոնը աւելի է տարածւած վրացիների մէջ, քան մեր մէջ. երեխ պահանջ կաչ, որ ազգան ներկայացումներ են տալիս 1893 թւին, ամառը 2 թատրոն կար ազգակաղ. աւելի շատ ներկայացումներ տալիս էին ազսպէս կոչւած «Նոր թատրոնում», որ գտնուում էր քաղաքային պարտէզի կենտրոնում, և թէն մի փոքրիկ, բայց գեղեցիկ չենք էր Այս վերջին գնալուն՝ այդ թատրոնը քանդել էին. ներկայացումները լինում էին միւս թատրոնում։

Աւելորդ չեմ համարում ներկայացնել ազգակաղ այն տպաւորութիւնները որ ես ստացել եմ վրաց ներկայացումներից՝ Քութայիսում գտնաւած ժամանակս, Ընդհանրապէս տպամարդկանց գերերի համար խմբի մէջ այնքան աչքի ընկնող ոչքեր քիչ էին. այն ինչ կանանց գերերի համար այդ պակասը չէր նկատուում։ Մասնաւորապէս իմ տեսած զողեւիլներում մասնակցող կանաչը խաղում էին շատ ազատ ու չնորհալի։ Այդ տպաւորութիւնը մի քիչ թուլանում էր պատմական սիէսում։ ինձ թւում էր, թէ հայուհին աւելի ուաք ու ազգու կարող էր արտականուել պիհով այն գրամատիքական տեղերը, ուր կինը պէտք է զոհի իրան, իր անձնութիւնն արտաքանիսի։ Ընդունուում եմ, որ կարծիքս կարող է բոլորավին սիսալ լինել մանաւանդ որ՝ դա հիմնած չէ երկար տարիների դիտողութիւնների ու բազմաթիւ Փակտերի վրայ, այլ պատմական տպաւորութեան արդիւնք է։ Տեսնել եմ Պէտօն նրանց մօս, կամ աւելի ուղիղը՝ այդ կոմեդիակի Ա-դ գործողութիւնը, ուր ծանօթանում ենք Յարութիւն աղայի հետ։ Չնայելով, որ պիէսը վերգրած է Թիֆլիսի կեանքից և իր բոլանդակութիւնով հաւասար մօտիկ պէտք է լինի թէ հայոց և թէ վրաց կեանքին, բայց կարծէք խաղացողները ցուց տւին, որ թէ Պէտօն և թէ Յարութիւն աղան աւելի հաչ են, քան վրացի, այնքան նրանց խոզի մէջ այդ երկու տիպերը կորցրել էին իրանց խոկական զոնը։ Յարութիւն աղայի դերը կատարում էր Թիֆլիսի վրաց բեմի լաւանի դերասան Վ. Արաշիձե, որ չնայելով ուրիշ տեղերում, բուն վրացի կեանքից վերցրած պիէսներում լաւ ու փորձւած դերասանի տպաւորութիւն էր թողնուում, այսակաղ կարծէք այն չէր, ինչ որ պէտք է լինէր. հայը աւելի լաւ աղա է լինուում, քան վրացին, վրացուն կարծէք չէ ուազում աղաւութիւնը. երեխ, զդրախտաբար, դա էլ հաչի բան է, թէն մի ցանկուի բան չէ։ Խոկ Պէտօնի դերը կատարողի մասին չարժէ անպամ խօսել, այնքան թող ու հեռու էր խոկական Պէտօնից։ Համարձակ կարելի է ասել, որ մեր գաւառական քաղաքներում դրանքից լաւ Պէտօն խաղացողներ շատ կան։

Ակսակաղ չեմ կարող չիշել այն գեղեցիկ տպաւորութիւնը, որ արել է

իմ վրաւ խոմբական երգը մի տեղ, ներկայացումների ժամանակ (Գունիալի «Քողու-եղբայր» պատմական պիէտում): Մութ, խաւարոչին բանտում, ոսներն ու ձեռքերը շղթալած, հազրենիքը աւերած ու թշնամու ձեռքին, մելամաղձիկ ու տխուր ողբում էին միասին հայրենիքի սև օրը և իրանց գերութիւնը—հալածւած աշխարհի կտրիճ ու անձնւէր որդիքը: Նրանց երգը անշքան սրտառուչ և հրաշալի էր, որ լսելիս՝ ցնցում, ալեկոծում էին մարդու սիրտը:

Խօսել Քութալիսի վրաւ և մի բան չասել ալդ քաղաքի վրաց ազնւականների բանկի մասին, կարծեմ որ անջարմար բան կը լինի, մանաւանդ որ, ինչպէս լաւանի է, ալդ բանկի անունը վերջին տարիներս շատ ելած է՝ չնորհիւ այն փոթորկալի ընտրութիւններին, որ ամեն տարի են ունենում աղյուղ ընտրութիւնների ժամանակ: Խնձ չաւանի չէ, թէ որ ժամանակից է գոյութիւն առել Քութալիսի Միքայէլեան աղնւականների կալւածական բանկը, գիտեմ միան, որ նա հիմա էլ կաչ և, բացի բան բանկալիս օպէրացիաներից, մի տեսակ բարեկործական հաստատութեան դեր էլ է կատարում վրացիների մէջ: Այսպէս նա նպաստում է ազնւականների համար ուսումնարաններ հիմնելով: Թոշակ է սահմանում վրաց ազգի լայտնի գործիչների չքաւոր որդոց կամ ազգականներին (ինչպէս՝ լայտնի Դ. Կապիանու թոռին և Միքայէլ որպուն), նրանց կրթութեան ժախսերը հոգալով: Նրան ևն զիմում մինչև անդամ արտասահման գնալու մլտք զնող վրացի երիտասարդներ՝ գիւղատնտեսական-տեխնիկական կը թութիւն ձեռք բերելու և զրանով իրանց երկրի սնական անկման առաջն առնելու համար: Ել չիմ չիշում, որ զանազան ժամանակիներում և զանազան անձերին ալդ բանկի կողմից արել են նպաստներ: ալսպէս՝ օգնութիւն է արւել սովորուկ կախէթցիների, հազար ուորլու չափ նպաստ է արւել անցած խոլերավի ժամանակի քաղաքի Թոփուրիակի հիւանդանունին՝ քաղաքի ազգաբնակութեանը ձրի օգնելու համար և ալյն:

Ալդ բոլորը իմ լսած ու իմացած բաներից են, զրանք իմ տեսածս չեն: Ահա և իմ տեսածը: 1893 թւի ամառն էր: Քութալիս իմ առաջին գնուլուս էր: բանկի համար նոր ընտրութիւններ էին նշանակւած: քաղաքը լիքն էր գաւառներից եկած վրացի աղնւականներով: Դրանց բոլորի զօտիից էլ կախւած էր իրանց անբաժան դաշտնը, սուր ու րէտրէրը: Եթէ միւաներն էլ չլինեն, դաշոնը գոնէ պէտք է անպատճառ լինի երկար «չօխի», «մասրների» և «գավախախի» հետ: Քաղաքը կենդանացել էր: Քաղաքալին պարտէզը ամեն օր լիքը լցում էր նրանցով: Ամեն տեղ՝ որտեղ ասեք՝ պարտէզում, փողոցներում—երիտում էին ալդ աղնւականների խմբերը, ուր՝ միտինգների նման՝ ճառախօսները տաք-տաք ու ոգեսրւած խօսուեւ էին օրւաւ հարցերի մասին: Անտեղ խօսում էր բանկի զործերի մասին, քննում էին իրանց հակառակորդներին, դատապարտում էին բանկի

այն ժամանակւալ վարչութեանը, որի նախագահը այն ժամանակ վաստաբան Զիկւահիձէն էր և ազն։ Երթիմն լոկները շատ էին բարձրանում։ բայց ամենամեծ իրարանցումն ու փոթորիկը սեղ ունեցաւ բուն ընտրութեանը, որի հետեանքն եղաւ ընտրութիւնների չետաճգելը անորոշ ժամանակով, որ գուցէ շատերի մաքին կը լինի, քանի որ այդ մասին շատ դրւեց ու խօսեց Թիֆլիսի մամուլի մէջ։

Վրացիներից չետո՛ք քաղաքի բնակիչների մէջ թւով ասենից աւելի են հրէաները, որոնք իրանց համար քաղաքում ունին սինագոպ։ Դրանց թիւը ալղտեղ մօս 3 հազարի է հասնում։ Դրանք բոլորն էլ խօսում են վրացերէն և, եթէ չինէր իրանց ցեղաշին բնորոշ գծագրութիւնը, դրանց ոչինչ չէին տարբերել անզացի խմէրէներից, թէե չէ կարելի չասել, որ դրանք, վրացիների հետ համեմատած, անհամեմատած աւելի դործունեալ ու խորամանկ ժողովուրդ են։ Համարեա դրանց մեծ մասը առետրով ու վաճառականութիւնով է պարապում։

Հրէաներից չետու գալիս են ոսուները, որոնց թիւը ալղտեղ հազարից շատ աւելի պէտք է լինի։ Խոկ դրանցից էլ չետու գալիս են հակերը Յովներ ու պարտիկներ շատ քիչ են քաղաքում։ Խոկ եւրոպացիք համարեա բոլորովին չեն պատահում քաղաքում։

(Հարունակելի)

# ՅՈՂԱՅԻՆ ԵՒ ԱԽՉԱԿԱՆ ԻՐԱԻՐԻՆՔԸ ՀԻՆ-ՀԱՅԱՍՏԱՆԻՒՄ

ՍԱՐԳԻՍ ԲԱՀԱԹՐԵԱՆՑԻ

## (ՀՐԷԱՆԵՐԻ ԻՐԱԻՐԻՆՔԸ)

1

Ինչպէս յիշել եմ «Հողացին և անձնական իրաւունքը հին Հայաստանում» գրւածքում՝<sup>1)</sup>, մեր և մեր դրացի հին ազգերի իրաւունքները ազգել են մէկը միւսի վերայ։ Աստւածաշունչը տալիս է մեզ հրէաների իրաւունքը քննելու համար հարուստ նիւ. Ծեր։ Դորանցից օգուտ քաղելով, կարող ենք լուսաբանել մեր երկու-մ ապրող հին ազգերի ստեղծած իրաւունքների քանի մի մուլժ կողմերը։

Վասնորոյ ես ինձ թոյլ եմ տալիս հարեանցի կերպով ձեռնարկել այդ ուսումնասիրութեանը այն չափով, ինչքան դա հարկաւոր է իմ նպատակներիս համար։

2

Հրէաների նախահայրերը ցեղովի ապրող ժողովուրդ էին։ Դորանց ազգաբանութիւնը Աստւածաշունչը դուրս է բերում նոյն Սեմ օրհնեած որդուց։

«Սեմի «Ճնունդները»<sup>2)</sup> ասոնքեն. Թարայ Ճնաւ «Աբրամը, Նա-

<sup>1)</sup> Տես «Մուրճ» 1894 թ. № 1, 2, 3, 4, 5 և առանձին արտատպւծաք։

<sup>2)</sup> Ազստեղ և թէ այս գրւածքիս միւս մասերում առաջ ենք բերում քաղւածքները 1870 թւականին Նոր-Եօրքում աշխարհիկ լեզուվ թարգմանած Աստւածաշունչից։

քովրը ու Առանը. և Առան ծնաւ Ղովտը: Եւ Առան մեռաւ իր հօրը Թարացին առջել՝ իր ծննդեան երկրին՝ քաղլէացւոց Ուր քաղաքին մէջ: Եւ Աբրամ ու Նաքովը իրենց կնիկներ առին. Աբրամին կնոջ անունը Սարայ էր, և Նաքովին կնոջ անունը Մեղքայ՝ Առանին աղջիկլ... (Գիր. ծննդ. եր. 12): Եւ Թարաչ իր որդին Աբրամը՝ ու իր Թոռը Առանին որդին Ղովտը՝ և որդւոյն Աբրամին կնիկը. իր հարսր Սարան առաւ, ու անոնց հետ քաղլէացւոց Ուր քաղաքէն ելաւ գէպի Փանանու երկիրը երթալու համար. ու եկաւ մինչև Խառանը, և հոն բնակեցաւ (գ. ծննդ. ժա. 27—31):

«Եւ Աբրամին հետ կացող Ղովտն ալ՝ ոչխարներ ու արջառներ, ու վրաններ ուներ: Եւ ան երկիրը բաւական չէր անոնց. ստացւածքը շատ ըլլալով՝ չէին կրնար մեկոեղ բնակիլ: Եւ Աբրամին անասուններուն հովիւներուն ու Ղովտին անասուններուն հովիւներուն մէջտեղը վէճ կար և ան ատենը քանանացիները ու ֆերեզացիները կը բնակէին ան երկրին մէջ: Եւ Աբրամ լսաւ Ղովտին. կ'աղաչեմ քեզի, իմ ու քու մէջտեղը՝ և իմ հովիւներուդ մէջտեղը վէճ չըլլաց. ինչու որ մենք եզբացը ենք... կ'աղաչեմ զատուէ ինձմէ (նոյն ժդ. 5—9): Այնուհետեւ Աբրամ Փանանու երկրին մէջ բնակեցաւ. Ղովտն ալ գաշտի քաղաքներուն մէջ բնակեցաւ (նոյն ժդ. 12):

Այսպիսով Թարացից ծագածները բաժանեցան երեք ծնունդների. ցեղական սովորութիւններից զրանց մէջ աչքի է ընկնում միմեանցից կին առնելու սովորութիւնը:

Աերեւում ցիշեցինք, թէ Նաքովրան իր Աւան եղրօր՝ Մեղքա աղջկանն էր իր համար կին առել: Սբրահամը պատիրում է իր տան երէց ծառացին որ «իր որդւոյն կնիկ չառնէ քանանացւոց աղջիկներէն, որոնց մէջը, որ ես կը բնակիմ: Հապա իմ երկիրս ու իմ որդւոյս Խառհակին, անկէ կնիկ առնես» (գ. ծննդ. իդ. 2—4):

Եւ Խառհակին համար կին են առնում իրանց հարազատ Խաքովրի սերունդից ծագած Աերէկան: Խառհակը պատիրում է Յակոբին Շանանու աղջիկներէն կնիկ չառնես: Ելիր գէպի Միջագետ քու մօրդ հօրը Բաթուելին տունը զնա՞ և անկից քու մօրդ եղբօրը Լաբանին աղջիկներէն քեզի կնիկ առ (նոյնը իւ. 1, 2):

Յակոբը 14 տարւայ ծառայութեան վարձք՝ իր հարազատարիւն ունեցող կիան և Ռաքելը իր համար կին առաւ (նոյն իթ. 23, 28):

Մասքերենք այստեղ, որ Դովորից ու իր երկու աղջկանցից ծագած Մովարը և Բեննամին այդ ցեղական սովորութեան պառաղներն են (գ. Ճննդ. ժթ. 37, 38):

### 3

Կար տագրութեան իրաւունք՝ եղբօր մահից յետոյ՝ մնացած եղբայրը պիտի առնէր նորա կինը:

Երբ Յուդայի Թամար հարսի էր ամուսինը մեռաւ և դորա եղբայրները տագրութեան պարտականութիւնը չկատարեցին, սա իր սկիսրայրին խարելով՝ նորանից սերունդ առաջացրեց (գ. Ճննդ. լը. 6—30):

Ժառանգութիւնը ցեղին մէջը պիտի մնար, և այդ պատճառով ցեղի աղջկերքը սովիստած էին իրանց ցեղի մէջ մարդու գնալ: Մովսէս, օր., ասաց Սալաբաղին աղջիներուն վրայով՝ «Անոնք, որոնց որ կը հաճին, թող անոնց կնիկ ըլլան. որպէս զի Խորացէլի որդւոցը ժառանգութիւնը մէկ ցեղէ ուրիշ ցեղ չանցնի. քանզի Խորացէլի որդւոցը ամենքն ալ՝ իրենց հայրերուն ցեղին ժառանգութեանը պիտի յարին. (գ. թւոց լզ. 1—9) և Սալաբաղին աղջկերքը իրենց հօրելքօր որդւոցը հետ ամուսնացան (նոյն 10):

Մովաբացի Հոռութը՝ Խորացէլացու մէկին մարդու էր գնացել: Մարդը մեռնելուց յետոյ, սա իր անձը կնութեան է տալիս իր Բոսը ազգականին: Բոսուը պատասխանում է «Ես քու ազգականդ եմ. բայց ինձմէ մօտ ուրիշ ազգական ալ կայ: Աս գիշեր հոս կեցիր, ու թէ որ անիկա առաւօտուն իր ազգականութեան պարտաւորութիւնը քեղի հասուցանել չուզէ, ան առենը ես կը հասուցանեմ»: (գ. Հոռութաչ եր. 265): Եւ Բոսու՝ Հոռութին իր համար կին առաւ, երբ դորաւելի մօտ բարեկամը այդ պարտականութիւնը կատարելուց հրաժարւեց:

Հին Հրէաները իրանց ժամանակին յատուկ սովորութիւններով էին ապրում: Նկատում է նախ՝ ցեղակիցների համերաշխութիւնը, ցեղակիցների իրանց տան գլուխ կանգնածին հնազանգութիլը և այլն: Հաւանական է, որ գորանց մէջ կար «Patria Potestas» անուանեալ հիմնարկութեան նման հաստատութիւնը, որով հայրը իր կնոջ, որդւոց, ստրուկների և տան բոլոր կարողութեան տէրն էր, և տան մէջ հօր կամքից ոչով չէր կարող ելնել: Մեր ասածները արդարանում են շատ օրինակներով: Աբրամը և Ղովար զատւած էին միմեանցից և ջոկ ծնունդներ էին կազմում, այնուամենայնիւ Ղովահն, իր ծննդակիցներով, Աբրամը գերութիւնից ազատեց:

Յովսեփին իր եղբայրները գերութեան ծախսեցին այնուամենայնիւ, մեծութեան համնելուց յետոց, զա վրիժառու չեղաւ, և ոչ միայն ներեց իր եղբայրներին, ալ և մեծ բարերարութիւն էլ արաւ գորանց:

Տան կամ ծնունդի և ընտանիքների մեծերը իշխում էին իրանց արիւնակիցների վերայ և մինչև անգամ հայրերը տարածում էին իրանց իշխանութիւնը որդոց կեանքի վերայ:

Սա երեսում է Յակոբի օրհնութիւնից: «Թող ժողովուրդները քեզ ծառացնեն, և ազգերը քեզի խոնարհութիւն ընեն»: «Քու եղբայրներուդ տէրը եղիր, և քու մօրդ որդիքը քեզի խոնարհութիւն ընեն» (գ. ծննդ.)

Ժառանգութիւնը անցնում է մեծին՝ Եսաւը ժառանգութիւնը ստացաւ, չնայած որ կրտսէր Յակոբն էր օրհնութիւն ստացել:

Յակոբը, իբրև փոքր եղբայր, խոնարհութիւն ցոյց տւաւ Եսաւին, ընծաներ տալով նորան:

Իսաքէլլ իր ծնողների հրամանով և առանց իր կամքը յայտնելու է Իսահակի կինը դառնում:

Ցեղական իրաւոններին տիրացնելու համար, Յակոբը Յովսէփի՝ նփրեմ ու Մանասէ որդւոցը իր որդւոց՝ շարքն է գցում: (գ. ծննդ. իւլ 5):

5

Խորայէլացոց մէջ թէև էնդօգամն այսինքն իրանց միջից կին առնելու սովորութիւնը յարդւած և տարածւած էր, բայց էլքսօգամն այսինք օտար; և կամ սորուկ կանանցից կին առնելու սովորութիւնն էլ կար:

Սկզբում աւելի տիրապետում էր էնդօգամիան և օտարներից կին առնելը բացառութիւն էր կազմում:

Խասհակի և Ռժբեկայի սրտերին ցաւ եղաւ, երբ Եսաւը կանայք առաւ Քանանացի աղջիկներից (գ. ծննդ. իզ, 34 35). Խասհակի՝ Հագար և Քեսոուրայ հարմերից եղած խաւնարիւն սերունդներն արտաքսուեցին իրանց ցեղից (նոյն իա 9—17. իե 1. 5):

Բայց վերջերում, մանաւանդ թագաւորների և դատաւորների օրով, էքսօգամիան նոյնպէս էր տարածւել, ինչպէս և էնդօգամիան:

6

Հրէից նախահայրերը վրանաբնակ, խաշնարած ժողովուրդ էին: Հնաանիքները ծնունդների վերածւելով, մէկը միւսից բաժանւում էին. մէկը մնում էր իրանց նստած տեղը, իսկ միւսները տեղափոխում էին այլ տեղեր:

Այսպիսի բաժանմունքներն առաջ էին դալիս, երբ հօտերը շատանում էին և տեղը նեղածք էր, կամ խառն արիւն ունեցողները չէին կարողանում կառավարւել իրանց ցեղի հարազատ սեւպէ ողների հետ և կամ երբ կախմունքի հարցեր էին լինում:

Այդպէս ջոկւեցին՝ Աբրամը՝ Ղովտից, Յակոբը՝ Եսաւից. նմանապէս Հագարից և Քեսոուրայից եղածները (գ. ծննդ. ժգ 7—14, իա. 9—17):

Այս ժամանակամիջոցում ազգերը, ցեղերը, ծնունդները և մանր թագաւորները տարածում էին իրանց իշխանութիւնները որոշ ժողովուրդների վերայ:

Թարայից գոյացած նոր ծնունդները պանդխտում էին օտար երկիրներում և գաշնակից էին լինում իրանց նոր գրացիների հետ (գ. ծննդ. գ.գ. 18.ի-1.):

Հողի վերաբերեալ՝ սեպհականութեան իրաւունքը բացակայում էր: Ուժեղ ցեղերը և ծնունդները ծառացեցնում էին թոյլերին:

Եղամի Քողողագոմոր թագաւորը ծառայեցնում էր շատերին։ Երբ վերջինները ապստամբեցան, Քողողագոմորն, իր դաշնակիցների հետ, գերեց ապստամբներին իրանց բոլոր գոցքով։ Դորանց մէջն էր և Աբրամի Ղովտեղար որդին։ Աբրամն իր մարդիկներով Փողողագոմորի յետելիցն է ընկնում, զարնում է նորան և յետ է դարձնում գերեալներին, որոնց թւումն էր և Ղովտը։

Այս յաղթութիւնը անելուց յետոց, Սաղեմի Մելիքսեղեկ թագաւորը Աբրամին ուժեղ է ճանաչում և իրա յօժար կամքով նորան իր ունեցածից տասանորդ է տալիս։

Առհասարակ այդ ժամանակամիջոցում մէկը միւսից հարկ էր ստանում որոշ քանակութեամբ, կամ տասանորդ էր ստանում և կամ մէկը միւսին որոշ ծառայութեան էր պարտաւորեցնում ոյժի զօրութեամբ։ Հողը՝ ցեղերի և ծնունդների համայնական տիրապետութեան տակն էր։ Մասնաւոր անձնաւորութիւնները միայն արտերն էին իրանց յատկացրել և կալւածքը կարող էր լինել միայն «արտի» վերայ և արտի» պատճառով։

Այդպէս Ենիրոնին արտը՝ որ Մաքփելայի մէջ Մամբրէին դիմացն է, արտը՝ ու հոն եղած բոլոր այլը՝ ու անոր բոլորովիքի սահմաններուն մէջ եղած արտին միջի բոլոր ծառերը՝ Աբրահամին ստացւածք ըլլալու համար հաստատւեցաւ (գ. ծննդ. իգ. 17)։

Նոյնպէս Յակոբ ծախու առաւ իր վրանը կանգնած արտին կալւածքը Սիւքէմին հօրը Եմովրին որդիէն» (Նոյն լգ. 18):

Արտը՝ խամը կտրողինն է համարւում։

Արտի տէրը կարող էր իր արտը ծախսել։

Նմանապէս ջրհորները՝ փորողինն էր։ Աբրամը 7 էգ գառներ է տալիս Աբրմէլիքին, որ դորանով վկացութիւն լինի, թէ նա է փորել ջրհորը Բերսարէ կոչւած տեղում (Նոյն իս 30—32)։

Այսաեղ հարց չկայ, թէ ումն է տեղը. հարցը նորանումն է, թէ ով է ջրհորը փորել և երեսում է, որ շէնցրած հողը՝ շէնցնողինն է համարւում։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ հրէից նախահայրերի ժամանակ և նրանց բնակւած երկրում, չկար ոչ հողի և ոչ էլ երկրի իրաւունք, պանդուխտը դաշնակցութեամբ էր ապրում բնիկի մօտ և կապած դաշինքն էր որոշում դորանց յարաբերութիւնը։

Կար արտի վերաբերեալ կալւածքի իրաւունք և այդպիսի եր-  
կիրը շէնցնողինն էր համարւում:

Եթէ մտաբերենք այսուեղ Յակոբի պանդխանելու ժամանակ,  
իր մտադրութիւնները յաջողեցնելու համար, Տիրոջը ռոտոսանոր դա-  
տալու արած ուխտը, մեզ հասկանալի կը լինի այդ՝ մեր երկրութիւն  
էլ մինչև այժմն տարածւած սովորութեան առաջ դալլ:

7

Ասուածաշունչը սրբագործում է մարդու պատկանելութեան  
իրաւունքը: Ընոյը ըսաւ. անիծեալ ըլլայ Քանանը, ծառաներու  
ծառայ ըլլայ իր եղբայրներուն: Օրհնեալ ըլլայ Սեմին Տէր Ասո-  
ւածը և Քանան անոր ծառան ըլլայ: Ասուած թող ընդարձակէ  
Յարեթը, ու Սեմին վրանները բնակի, և Քանան անոր ծառան  
ըլլայ: (գ. ծննդ. թ. 25—27): Աերեկան յղացաւ..., Եւ տղաքը  
անոր արգանդին մէջ կը կուէին, ու Տէրը ըսաւ. երկու ազգ կան  
արգանդիդ մէջ, և քու որովայնէդ երկու ժողովուրդ պիտի զատւի  
ու ժողովուրդին մէկը՝ մէկալէն զօրաւոր պիտի ըլլայ, և մեծը պի-  
տի ծառայէ սղտիկին: (գ. ծն. իե. 22, 24):

Ասուածաշունչը մարդը պատկանելութիւն դարձնելու համար  
մեզ լաւ օրինակ է տալիս. Թէ ինչպէս եղբայրները Յովսէփին 20  
կուր արծաթով իսրայէլացիններուն ծախեցին (նոյնը լէ. 28):

Ասուածաշունչը ակնարկում է մարդու վերայ ունենալու  
երեք տեսակ՝ իրաւունքների վերայ՝ կարող էին լինել ռժախու-  
առած, օտարական և վարձկան ծառաներ:

8

Յովսէսը իր ժողովրդի համար ստեղծեց մի տեսակ քա-  
հանայապետական-ազգապետութիւն: Յակոբը տեսիլքի մէջ հրեշ-  
տակի օրհնութիւնը ստանալուց յետոց, Խորայէլ էր կոչւել, և դորա  
սերունդներն Եղիպտոսում շատորցել էին (գ. ծն. լր. 24). Յա-  
կոբի Լիա կնոջից ծագել էին՝ Ռուբենի, Շմաւոնի, Ղեիի, Յու-  
դայի, Խաքարի ու Զաբուզոնի ցեղերը. Ռաքէլ կնոջից՝ Յովսէփի  
ու Բէնիամինի ցեղերը: Զեղփա աղախնից՝ Գաղի և Ասերի ցեղերը  
և վերջապէս՝ Եփրեմի ու Մանասէնի ցեղերն էլ, Յակոբ իւր որդ-

ւոց շաբքը դրաւ (գ. ծն. իթ. 32. լ. 1, 5, 9, 17, 22, լե. 16. խը. 5):

Յեղական կապ ունենալու գիտակցութիւնը քանդւած չեր ցեղակիցների մէջ: Ծնունդները, ինչպէս տեսանք, թէև միմեանցից զատւած էին, բայց օգնում էին միմեանց:

Այդ ցեղական կապն ամրացնելու համար, Մովսէս ցեղերի վերայ իշխաններ է նշանակում:

«...Դուք ձեր ցեղերէն իմաստուն ու հանճարեղ և անւանի մարդիկ ու էք, ու ես ասոնք ձեր վրայ իշխաններ կեցնեմ: Իսկ դուք ինձի պատասխան տուիք, ու լսիք թէ՝ առ լսած խօսքդ ընելը աղեկ է: Աւսափ ես ձեր ցեղերուն երևելիները՝ իմաստուն ու անւանի մարդիկները առի, և զանոնք ձեր վրայ իշխաններ կարգեցի, այսինքն ձեր ցեղերուն համար հազարապետներ, հարիւրապետներ, յիսնապետներ, տասնասպետներ ու ոստիկաններ» (գ. 2, Օրին. 13—15):

Ցեղերը մի տեսակ պատերազմական կազմակերպութիւն ունեին. դորանց մէջ սպատերազմողներն էին նշանակութիւն ունենում:

Եգիպտոսից ելնելու երկրորդ տարին, Մովսէս ու Աբրամ բոլոր այդ պատերազմողների հաշիւն առին: «Եւ Խորացէլի անդրանիկ որդւոյն Ռուբենին որդիքը իրենց սերնդովը՝ իրենց տոհմերուն ու իրենց հարցը տուներուն համեմատ՝ քսան տարեկանէն վեր բոլոր պատերազմելու կարող եղողները՝ ամեն մէկ արուն իրենց անուններուն թւոլլը.»

|                               |       |             |        |          |
|-------------------------------|-------|-------------|--------|----------|
| Ռուբենին                      | ցեղէն | համրւածները | 26,500 | հոգի էին |
| Նմաւոնի                       | ,     | ,           | 59,300 | ,        |
| Գաղի                          | ,     | ,           | 45,650 | ,        |
| Ցուղալի                       | ,     | ,           | 74,600 | ,        |
| Խսաքարի                       | ,     | ,           | 54,400 | ,        |
| Զարուղոնի                     | ,     | ,           | 57,400 | ,        |
| Յովսէփի որդոցմէ Նփրեմի որդիքը |       |             | 44,500 | ,        |
| Մանասէի                       | ,     | ,           | 32,200 | ,        |
| Բենիամինի                     | ,     | ,           | 35,400 | ,        |
| Դանի                          | ,     | ,           | 62,700 | ,        |
| Ասերի                         | ,     | ,           | 41,500 | ,        |
| Նեփթաղեմի                     | ,     | ,           | 53,400 | ,        |

«Բայց Կևտացիները իրենց հայրերուն ցեղովը ասոնց հետ չհամրւեցան, որովհետեւ նոցա վկայութեան խորանին վերակացութիւնն էր յանձնւած» (գ. Ծն. ա. 17—51):

Մարդու պատկանելութեան իրաւունքը հին աշխարհում մի սովորական երևոյթ էր: Ահա ինչ կանոններ էին դրւած Խորացելացոց մէջ այդ մասին:

«Թէ որ Երբաչեցի ծառայ ծախու առնելու ըլլաս, անիկայ վեց տարի պիտի ծառայէ; և եօթներորդ տարին ձրի ազատ ելլէ: Թէ որ մինակ մուաւ, մինակ պիտի ելլէ: Թէ որ կնիկ ունէր, կնիկն ալ իր հետը պիտի ելլէ: Թէ որ իր տէրը իրեն կնիկ տւաւ, ու անիկա իրեն որդիներ ու աղջիկներ ծնած է, կնիկը ու անոր տղաքը տիրոջը պիտի ըլլան ու ինքը մինակ պիտի ելլէ (գ. Ելից իա. 1):

«Հաղա թէ որ ծառան յայտնի ըսելու ըլլայ, թէ ես կը սիրեմ իմ տէրս՝ իմ կնիկներս ու իմ տղաքներս, չեմ ուգեր որ ելլեմ և ազատ ըլլամ: ան ատենը անոր տէրը դատաւորներուն պիտի տանի զանիկա, և զրանը սեամին մօտեցնէ. ու անոր տէրը անոր ականջը հերիւնով պիտի ծակէ, և անիկա յաւիտեան ծառայ պիտի ըլլայ անոր» (գ. Ելից, իբ. 5).

«Եւ 50.-րդ տարին պիտի սրբէք, ու երկրի վրայ անոր բոլոր բնակիչներուն համար ազատութիւն քարոզ տաք. ասիկա ձեզի յորելեան տարի ըլլայ. և ձեզմէ ամէն մէկը իր ստացւածքին պիտի դառնայ, ու ձեզմէ ամէն մէկը իր ազգատոհմին դառնայ» (գ. Կմտ. իբ. 10)...

«Եւ քու քովէդ ազատ արձկելու ատենդ՝ զանիկա պարապ շարձակես. քու ոչխարներէդ, քու կալէդ և քու հնձանէդ անպատճառ պարզե տաս անոր» (գ. 2 օրին. Ժե. 13)

«Թէ որ մէկը իր աղջիկը աղախին ըլլալու համար ծախէ, անիկա ծառաներուն ելլելուն պէս պիտի չելլէ: Թէ որ անիկա հածելի չերկւաց իր տիրոջը աչքին՝ որ զանիկա իրեն նշաներ էր, թող, փրկել տայ զանիկա. բայց զանիկայ օտար ազգի ծախելու կարող չըլլայ, ինչու որ խարեւութիւն արաւ անոր: Եւ թէ որ զանիկա իր որդւոյն նշանած է, աղջկանց օրէնքին համեմատ պիտի

ընէ անոր: Թէ որ իրեն ուրիշ կնիկ առնէ, անոր ուտելիքը՝ հանդերձը ու մերձաւորութիւնը պիտի չկորէ: Եւ թէ որ անոր ասերեք բանը չընէ, ան ատենը անիկայ առանց սոտակի ձրի պիտի երթայ (գ. ել. իա. 7-11.) Եւ թէ որ նղբաւրդ քու քովդ աղքատանայ, ու ինքզինքը քեզի ծախէ, անիկա ծառայի մը պէս պիտի չգործածես. անիկա քու քովդ վարձկանի կամ պանդուխտի պէս պիտի ըլլայ, ու ծառայէ քեզի մինչև Յորելեան տարին: Եւ ան ատենը քու քովէտ պիտի ելլէ, ինքն ալ ու իր որդիքն ալ իր հետը, և իր աղգատոնմին դառնայ, ու իր հայրերուն կալածին դառնայ: Քանզի անոնք իմ ծառաներս են՝ որ Նգիատոսի երկրէն հանեցի. անոնք ծառայի ծախւելուն պէս պիտի չծախւին: Խստութեամբ պիտի զիշխես անոր վրայ, հասկա քու Աստուծմէտ վախէնաս: Քու ունենալու ծառագ ու աղախին անոնցմէ կրնաք ծախու առնել. նաև ձեր քովը բնակող օտարականներուն զաւակներէն, կամ անոնցմէ և կամ ձեր քովը եղող անոնց ընտանիքներէն՝ որ ձեր երկիրը ծնած են, կրնաք ծախու առնել, որ ձեր ստացւածքը ըլլան: Եւ ձեզմէ ետքը ձեր որդւոցը ժառանգսութեան ստացւածք ըլլալու համար թողուք զանոնք. որ միշտ ձեր ծառաները ըլլան. Բայց ձեր եղբայրներուն Խրայնի որդոցը համար՝ իրարու վրայ խստութեամբ չիշխէք» (գ. Ղետ. ին 39—46).

Եւ թէ քու քովդ եղած օտարականը կամ պանտուխտը հարլատանայ, ու անոր քովը բնակող քու եղբայրդ աղքատանայ, և քու քովդ սպանդխոսացած օտարականին ընտանեացը մէկ աղգականին ինքզինքը ծախելու ըլլայ, ինքզինքը ծախելէն ետքը՝ անիկայ կրնայ փրկւիլ. իր եղբայրներէն մէկը կրնայ փրկւիլ զանիկայ կամ թէ որ կարողանայ՝ ինքզինքը թող փրկէ: Եւ անիկայ՝ ծախու առնողին հետ՝ ինքզինքը անոր ծախած տարիէն մինչև Յորելեան տարին հաշիւ ընէ, և իր փրկւելուն ստակը տարիներուն հաշիւովը ըլլայ. անոր ժամանակը վարձկանի ժամանակին պէս հաշււի:... Եւ թէ որ սա կերպովս չփրկւի, Յորելեան տարին՝ ինքն ալ ու իր որդիքն ալ իր հետը պիտի ելլեն» (գ. Ղետ. ին 47—54).

Շնացողը և շնացեալը մահւամբ պիտի պատժէին (գ. Ղետ. ի. 10). Քայց երբ շնացեալը ծախու առած աղախին է ու փրկւած չէ, ոչ ալ անոր ազատութիւն տրւած, անոնք պիտի պատժէին. անոնք պիտի չմեռնին. ինչու որ ան կնիկը ազատ չէր (գ. Ղետ. Ժթ. 20).

Մարդ զարնող մեռցնողը անշուշտ պիտի մեռցւի. իսկ թէ որ դարանամուտ չեղաւ, հսկա զանիկա Աստւած մատնեց անոր ձեռքը, քեզի տեղ պիտի սահմանեմ, որ անիկա հոն փախչի: Բայց թէ որ մէկը իր դրացիին ոխ ունենայ, և զանիկա նենդութեամբ մեռցնէ, իմ սեղանէս ալ պիտի առնես զանիկա՝ որ մեռնի:

Եւ թէ որ մէկը գաւագանով իր ծառան կամ իր աղախինը զարնէ, ու անիկա իր ձեռքին տակը մեռնի, անշուշտ անկէ վրէժ պիտի առնւի: Բայց թէ օր մը կամ երկու օր ապրի, անկէ վրէժ չառնափի. ինչու որ անիկա իր տոտին է: Եւ թէ որ մէկը իր ծառացին կամ իր աղախինին աչքը զարնէ ու կուրցնէ, զանիկա իր աշքին փոխարէն ազատ պիտի արձակէ: Եւ թէ որ իր ծառացին ակւան կամ՝ իր աղախինին ակւան թափէ, զանիկա իր ակուացին փոխարէն ազատ պիտի արձակէ (գ. Ելից իա. 12—27).

Եւ մարդ գողցողը՝ թէ որ զանիկայ ծախած ըլլայ, և թէ իր ձեռքը գտնւի, անշուշտ պիտի մեռցւի (նոյն):

Մարդու պատկանելութեան վերաց ասածովս, այսուեղ բաւականանում եմ, թողնելով եղբակացութիւնները միւս աշխատութիւններին, երբ նոր փաստեր առաջ կը բերեմ:

## 10

**Խարացէլացիք** անւանեւում են Տիրոջ ժողովուրդ, սուրբ սերունդը: Դոքա իրար մօտ պատկանելութեան մոքով ծառայ չէին կարող լինել, իսկ այդ տեսակ ծառաներ օտարականներից էին կարող ունենալ: Միմեանց պարտաւորւում են օգնել. արգելում էր դրանց միմեանցից վաշխ առնել (գ. Ելից իբ). Եթէ Խարացէլացին աղքատանայ և ինքն իրաւ իր եղբօրը ծախի, զա իր տիրոջ մօտ վարձկանի կամ օտարականի պէս պիտի. լինի և ծառայէ մինչև Յորելեան տարին: Այդ եղանակով դրանք և կալւածքից էլ չէին կարող զրկւիլ: Օտարականը կամ պահպուխար միայն անձամբ է

ազատ համարւում։ Ահա դորա վերաբերեալ ինչ ենք կարդում։ Եւ թէ որ օտարական մը ձեր երկրին մէջ ձեր քովը սպանդըիտանալու ըլլայ, չնեղէք զանիկայ։ Ձեր քովը պանդխոացող օտարականը՝ ձեր երկրին բնիկին պէս ըլլաց ձեզի, և քու անձիդ պէս պիտի սիրես անիկաց. ինչու որ դուք ալ եգիստոսի երկրին մէջ օտարական էիք» (դ. Ղետ. Ժթ. 33).

## 11.

Ահարոնը և նորա որդիքը օրհնուում են յաւիտենական քահանայութեան համար (դ. Ելից Խ. 13): Դրանց սպասաւորութիւն անելու և խորանին պաշտօնութ կատարելու համար նշանակում է Ղերի ցեղը։

Ահա ինչ ենք կարդում դորա համար։

Եւ Տէրը խօսեցաւ Մովսէսին՝ ըսելով. Ղերին ցեղը ու զանոնք Ահարոն քահանացին առջեւը կայնեցուր որ անոր սպասաւորութիւն ընեն... Եւ Ահարոնին ու անոր որդոցը պիտի տաս Ղետացիները. ասոնք Խորացէլի որդւոցմէն բոլորովին անոր տրւած են... Եւ ես ահա Խորացէլի որդւոցը մէջէն զետացիները առի, Խորացէլի որդւոցը մէջ ամեն մօրը արգանդը բացող առջինեկին տեղը. ուստի զետացիները իմս պիտի ըլլան։ Փանզի ամեն առջինեկիլ իմս է. երբոր Եգիստոսի երկրին մէջ բոլոր առջինեկները մարդէն մինչեւ անասուն սրբեցի ինձի, ասոնք իմս պիտի ըլլան (դ. Թւոց 5—13):

«Եւ երբ Ղերի որդիքը իրենց հարցը տուներուն ու իրենց ազգատոհմերուն նայելով մէկ ամսականէ վեր եղող ամեն արուն համրեցին՝ գորանց թիւը 22,000 էր։ Խակ Խորացէլացւոց նոյնատեսակ առջինեկներուն թիւը 273 հսկով աւելի էր»։

Այդ աւելցածներուն փրկանքը հասաւ Ահարոն քահանացին ու անոր որդւոցը (դ. Թւոց. 14, 39, 49, 50):

## 12

Ահարոնի, զետացւոց ու ժողովուրդին մէջ եղած յարաբերութիւնների վերայ գաղափար ստանալու համար, առաջ ենք բերում սոյն հատւածը։

Եւ Տէրը խօսեցաւ Ահարոնին. և ես ահա Խորացէլի որդւոցը

բոլոր սուրբ բաներէն իմ ընձաներուս պահպանութիւնը քեզի տւի և անոնք օծման իրաւունքի համար քեզի և քու որդւոցդ տւի յաւիտենական կանոնով։ Ասոնք քուկդ պիտի ըլլայն. ամենասուրբ բաներէն՝ որ չեն այրուիր՝ անոնց ամեն հացի ընձաները՝ որ ինձի պիտի հատուցանեն, ամենասուրբ են քեզի ու որդւոցդ համար։ Ամենասուրբ տեղին մէջ պիտի ուտես ան. ամեն արու պիտի ուտէ ան. անիկայ սուրբ պիտի ըլլայ քեզի։

Աս ալ քուկդ պիտի ըլլայ. անոնց պարգևներուն բարձրացնելու ընծան և Խորայէլի որդւոցը բոլոր երերցնելու ընծաները քեզի՝ և քեզի հետ քու որդւոցդ՝ ու քու աղջիկներուդ տւի անոնք յաւիտենական կանոնով. քու տանդ մէջ ամեն մաքուր եղողը անկէ պիտի ուտէ։ Ամենէն աղէկ եղին և ամենէն աղէկ գինիին ու ցորենին բոլոր երախայրիները՝ որ Տէրոջը պիտի մատուցանեն, քեզի տւի... Խորայէլի մէջ ամեն նսիրւած բանը քուկդ պիտի ըլլայ։ Ամեն մարդինի ամեն արգանդ բացողը, որ Տէրոջը կընծայեն, թէ մարդ րլլայ և թէ անասուն՝ քուկդ պիտի ըլլայ. միայն թէ մարդուն առջինեկը անշուշա պիտի փրկես և անմաքուր անասունին առջինիկն ալ պիտի փրկես և երբոր փրկւելու տղաքը մէկ ամսւան ըլլան սրբարանին սիկղին համեմատ՝ 5 սիկդ արծաթով պիտի փրկես. սիկղը 20 կերատ է. բացց կովին առջինեկը՝ և ոչխարին առջինեկը՝ կամ այծին առջինեկը չփրկես. անոնք սուրբ են. անոնց արիւնը սեղանին վերայ պիտի սրսկես, ու անոնց ճարպը պիտի այրես անուշահոտ պատարագ ըլլալու Տէրոջը։ Եւ անոնց միսը քուկդ պիտի ըլլայ, երերցնելու երուծը ու աջ զիստը քուկդ ըլլալուն պէս... Եւ Տէրը ըսաւ Ահարոնին. անոնց երկրին մէջ դուն ժառանգութիւն պիտի չունենաս, ու անոնց մէջտեղը բաժին չունենաս. Խորայէլի որդւոցը մէջ քու բաժինդ ու ժառանգութիւնդ ես եմ։

«Եւ ահա Խորայէլի բոլոր տասանորդը Ղեիի որդւոցը տւի ժառանգութեան համար՝ իրենց պաշտօնին փոխարէն... աս պատճառով անոնց հաւար ըսի որ՝ Խորայէլի որդւոցը մէջ ժառանգութիւն չունենան (գ. թւոց ժը. 1—25): Եւ Ղետացւոց պատւիրում է, որ նոքա Կոսասանորդին տասանորդ մասը բարձրացնելու ընծայ մատուցանեն Տէրոջը, որը Ահարոն քահանային պիտի հասնի:

**Կ**սրայելացիք սեփական երկիր շունէին՝ նրանք զանազան տեղերում և յետոյ Եգիպտոսումն էին իբրև պանդուխո օտարական նստամ; Իրանց նատած տեղերում դրանք ձեռք էին բերում կալւածքի իրաւունք:

Արտից օգտուելու իրաւունքն էր կալւածքը համարում; Արահամի, Խամակի և Յակոբի ժամանակը, երեխ մասնաւոր անձնաւորութիւնները միայն հողի այդ տեսակն էին իրանց յատկացրել: Արտերն ենք միայն ծախելու և առնելու աւարկայ տեսնում; Դորավերաբերեալ մենք մատնանիշ էինք արել մի քանի դէպք: Յիշել էինք, թե արօտատեղին՝ ժողովրդի համայնական տիրապետութեան տակն էր, թէ շէնցնողն էր՝ շէնցրած տեղը յատկացրել: Զկար այդ ժամանակ հողատէր և կամ հողատէրերի գասակարգը Տասանորդ ստանալով, թագաւորը կամ իշխանը ժողովուրդին ծառայ գարձնելու, սարկացնելու մէջ մի քայլ առաջադիմում էին: Դորա հաստատութիւնը վերջի զլուխներից մինումն էլ կը տեսնենք: Նոյնը կարող ենք ասել և եգիպտացոց վերաբերեալ... ամեկ ու մեր երկիրը հացով ծախու առ և մենք մեր երկրով Փարաւոնին ծառաները ըլլանք (զիմեց ժողովուրդը Յովսէփին): Եւ Յովսէփ բոլոր Եգիպտասի երկիրը Փարաւոնի համար ծախու առաւ քանզի եգիպտացոց վերայ սովը սաստիկ ըլլալուն համար անոնց ամեն մէկը իր արտը ծախեց ու երկիրը Փարաւոնինը եղաւ... Եւ Յովսէփ ըսաւ ժողովուրդին. ահա այսօր ծախու առի ձեզ՝ ու ձեր երկիրը Փարաւոնին համար. արդ ձեզի սերմ կուտամ, ու սերմանեցէք երկիրը և երկրի արդիւնքի հնգէն մէկը պիտի տաք, ու չորս մասը ձերը պիտի ըլլայ (գ. ծն. խէ. 18—26):

Այստեղից երեւում է, որ հողացին և անմնական իրաւունքի կերպարանափոխելու երկրորդ քայլափոխում՝ հողագործը չի զլրկւում հողից: Դա սարկանալու մէջ մի քայլ էլ է առաջադիմում՝  $\frac{1}{10}$ -դի փոխարէն՝  $\frac{1}{5}$ -դն է պարտաւորուում տար: Այստեղ հողագործը իր հողով տիրոջը լիովին սեփականութիւնը չի կարող համարւիլ: Խորայէլացիք ևս հաւանական է  $\frac{1}{5}$ -րդ էին վճարում՝ Եգիպտոսում, ուր կալւածքը Փարաւոնիցն էին ստացել և չէին գնել:

Հաւանական է ևս, որ նրանք սոյն հասկացողութիւնը դուրս բերած կը լինէին Եգիպտոսից:

14

Ովանդուխտ իսրայէլացիք անշուշտ փափագում էին իրանց սեփական երկիրը, կալւածքն ունենալ:

Տեսիլքի մէջ Ասուած Յակոբին խոստացաւ. իրան հայրերուն երկիրը յաւիտենական կալւածք լինելու համար նորա սերունդներին տալ: Նոյնը Մովսէան է ասում ժողովրդին՝ թէ աւետեաց երկիրը մանելու ժամանակ, նրանք վուղեն և բնաջինց անեն այնտեղ քնակւող՝ քետացւոց, զերգեսացւոց, ամոհեցւոց, քանանացւոց, ֆերեզացւոց, խեւացւոց և յերուսացւոց:

«...Աս եօթը ազգերը պիտի զարնես, ու բոլորովին կորսնցնես. անոնց հետ ուխո չընէս, ու անոնց չողորմիս. ոչ ալ անոնց հետ ինսամութիւն ընես... Հրամայուում է իսրայէլացւոց, որ սրանց սեղանները կործանեն, արձանները խորտակեն (գ. 2 Օրին. թ, գ, է): Եւ ան (աւետեաց) երկիրը ձեր իշխանութեան տակը անցնելով անոր մէջը բնակիք, քանզի ան երկիրը ձեզի ուի որ ժառանգէք: Եւ ան երկիրը վիճակով ժառանգէք ձեր տոհմերուն համեմատ. շատոր եղողին (շատ) ժառանգութիւնը շատ պիտի տաք, քիչոր եղողին ժառանգութիւնը քիչ պիտի տաք. մէկ տեղի մը վիճակը որո՞ւ որ ելլէ, անոր ըլլայ կալւածքը. ձեր հարցը (հայրերի) ցեղերուն համեմատ ժառանգէք (գ. 2 թւոց լգ. 50—51):

Սոյն մոքով իսրայէլացիք դիմեցին դէսի Աւետեաց երկիրը: Յաւիտենական կալւածքը սրով և արիւնով պիտի հաստատէին, այնոչէս, որ իրանց ժառանգելու երկրում ոչ մի բնիկ չպիտի մնար:

Այսպէս էլ արին իսրայէլացիք:

Աւետեաց երկիրը գնալիս նրանք չպատերազմեցին միայն Մովաբացւոց, Եգիպտացւոց և Ամոնացւոց հետ, որոնք իրանց բարեկամ Եսաւի և Ղովտի ցեղերիցն էին:

Ամոհացւոց Սէհոն և Բասանի Ովդ թագաւորներին յաղթեցին, զրանց երկիրների բոլոր բնակիչներին, էրիկ մարդկանց, կանանց և տղայոց սրի տակ անցուցին և այդ երկիրները  $\frac{21}{2}$  ցեղի ժառանգութիւն դարձրին, այն պայմանով, որ այդ ցեղերը մաս-

նակցեն սիւս շարունակելի պատերազմներում (գ. 2 Օրին. թ, դ):

Այնուհետև իսրայէլացիք շարունակեցին իրանց ընթացքը յաղթեցին պատերազմով վերոցիշեալ ազգերին, բնաջինջ արին նրանց երկիրների ժողովուրդները. ժառանգեցին և վիճակով բաժանեցին այն երկիրները իրանց ցեղերի մէջ. շառորին՝ շոտ, քիչւրին՝ քիչ (գ. Յեսուայ. իա. 42, 43):

Կալւածք ժառանգելու իրաւունքը մի յաւիտենական, անշարժ առարկայ դարձրին ցեղերի մէջ:

Ամեն մի ցեղին ընկած կալւածքը, նոյն ցեղի մէջ պիտի մնար. կալւածքների սահմանները պիտի անփոփոխ մնային:

«Իու կալւածքիդ մէջը՝ որն որ քու Տէր Աստուծոյդ քեզի ժառանգութիւն տած երկրին մէջ պիտի ժառանգես, չըլլայ որ փոխես քու զրացիիդ սահմանը՝ որ քու նախահայրերդ հաստատեցին (գ. 2 օրինաց. ժթ. 14):

«Եւ երկիրը պիտի չախւի մշտնջենապէս, ինչու որ երկիրը իմն է ու դուք իմ քովս պանդուխաներ ու հիւրեր էք: Եւ ձեր կալւածքին բոլոր երկրին մէջ փրկանք պիտի տան երկրին համար: Թէ որ քու եղբայրդ աղքատաց՝ և իր ստացւածքին մէկ մասը ծախէ ու թէ որ անոր մօտ ազգականը անոր գայ, անիկայ իր եղբօր ծախածը պիտի փրկէ: Եւ թէ որ մարդը փրկող մը չունի ու ինք իրմէ կարողանայ ան փրկելու, ա՞ւ ատենը իր ծախուլէն հաշիւ ընէ տարիները, և աւելցածը յետ տայ ան մարդուն՝ որուն ծախած էր, ու իր ստացւածքին դառնայ: Բայց թէ որ անոր ետ տալու կարող չէ, ան ատենը իր ծախած բանը ծախու առնողին ձեռքը պիտի մնայ մինչև Յոթելեան աարին և Յոթելեան տարին պիտի ելլէ ու ծախողը իր ստացւածքին պիտի դառնայ (բ. Գետ. իե. 23—28):

Կալւածքը ժառանգում էին տղամարդիկը: Անդրանիկ որդին, թէե ատելի լինէր և ատելի կնոջից ծնած, ստանում էր ժառանգութեան մեծ մասը (գ. 2 օրին. իա. 12):

Թագաւորների օրերով մանում է և երկիրը գրաւ դնելու սովորութիւնը:

Այսպիսով մենք տեսնում ենք, որ կալւածքը, անփոփոխ սահմաններով՝ յաւիտենական ժառանգութիւն էր սերնդէ սերունդ ցե-

զերի մէջ։ Ստացւածքի տէրը կարող էր ծախել միայն ժամանակաւոր։ Հիտևաբար գրաւ գնելու սովորութիւնը շատ էր զարգացել և մեծ գանգատներ էր առաջացնում։

«Նէմեացի օրով ժողովուրդը ու անոնց կնիկները՝ իրենց եղբարցը Նրէաներուն դէմ մեծ գանգատ լրին... մենք մեր արտերը այգիները ու տուները գրաւի կը դնենք, որ սովի համար ուտելիք ծախու առնենք ու ուտենք որ աղրենք։ Ումանք ալ կըսէին. թագաւորին հարկ տալու համար՝ մեր արտերուն ու այգիներուն վրայ ստակ փոխ առինք։ Ու հիմա մեր տղաքները ու աղջիկները ծառայութեան կը ծախենք և արդէն մեր աղջիկներէն աղախին ըլլալու ծախածներ կան» (գ. Նէմեաց ե. 6):

Երկիրը յաւիտենական կալւածք լինելու պատճառով, հողի առևտուրը չպարզացաւ. սորա տեղ զարգացաւ հողի պատկանելութիւն գարձած տեսակների՝ արտերի այգիների ու տների գրաւ դնելը։

Նատ հաւանական է, որ այստեղիցն է ծագում մեր երկրում այժմն էլ զոյութիւն ունեցող «ախզայ փայզազ, գամ քիրահող» անւանեալ գրաւի իրաւունքը, որով գրաւ գրած հողը անցնում է պարտատիրոջ ձեռքը, մինչեւ պարտք վերցնողը չհատուցանի իր պարտքը։ Յետազայ հետազօտութիւնների մէջ կը հետևինք պարզել այս կէտը։

## 15

**Իսրայելացիք Տիրոջ սուրբ ժողովուրդն էին համարւում։**

Միայն իրանց ազատութիւնը նրանք ձեռք էին բերում որոշ, վերեւում ցիշած, և այլ կարգ կանոնները կատարելուց յետոյ։ Որոշած էին մարդկանց, անասունների և անշարժ կայքի փրկանքների կանոններ։ Առջինեկներուն փրկութեան համար արդէն յիշեցինք։ Այսահեղ առաջ կը բերենք դորան վերաբերեալ և ուրիշ կանոնները։

...«Երբոր մէկը ուխտ լնելու ըլլայ, անձանց գինը քու արժեցուցածիդ պէս՝ Տէրոջը պիտի ըլլայ։ Եւ քու կտրելու գինդ ասանկ պիտի ըլլայ։ 20 տարեկանէն մինչեւ 60 տարեկան եղող արին կտրելու գինդ սրբարանին սիկղին համեմատ 50 սիկլ արժանի պիտի ըլլայ։ Եւ թէ հինգ տարեկանէն մինչեւ 20 տարեկանէ...»

արւին համար... 20 սիկղ՝ ու էգին... 10 սիկղ... մէկ ամսականէն մինչև հինգ տարեկան... արւին... 5 սիկղու էգին... 3 սիկղ...»

«Եւ թէ 60 տարեկանէն վիր ըլլայ, արուին համար 15 սիկղ՝ ու էգին... 10 սիկղ. և թէ քու կտրելու գնոյդ անոր կարողութիւնը չհամնի, անիկաց քահանացին առջեր պիտի ելիէ, ու անոր գինը քահանան կարէ. քահանան ուխտ ընողին կարողութիւնը նայելով՝ անոր զին պիտի կտրէ:

«Եւ թէ որ իր ուխտը Տէրոջը մատուցանելու անասուններէն է, անոնցմէ ինչ որ Տէրոջը տայ, սուրբ պիտի ըլլայ... Եւ թէ որ իր ուխտը՝ Տէրոջը զոհ չմատուցանելու տնմաքուր անասուններէն ըլլայ, ան ատենը քահանացին առջեր պիտի հանէ ան անասունը... քահանան ինչ զին որ կտրէ, անանկ թող ըլլայ: Իսկ թէ որ զանիկաց փրկելու ըլլայ, ան ատենը քու կտրած գնոյդ վրայ  $\frac{1}{5}$  մաս մը պիտի աւելցընէ: Աւ երբ որ մարդ մը իր տունը Տէրոջը սուրբ ըլլալու համար ընծայէ, ան ատենը քահանան անոր աղէկութեանը կամ գէշութեանը նայելով՝ զին պիտի կտրէ. քահանան անոր ինչ զին որ կտրէ, անանկ պիտի կենաց: Եւ թէ որ ընծայողը իր տունը փրկելու ըլլայ, քու կտրած գնոյդ վրայ  $\frac{1}{5}$  մաս մը պիտի աւելցնէ ու տունը անոր պիտի ըլլայ: Եւ թէ որ մարդ մը իր կալւածքի արտէն ընծայելու ըլլայ Տէրոջը, ան ատենը քու կտրած զինով անոր սերմին համեմատ պիտի ըլլայ. մէկ քոռ գարիի սերմի համար 50 սիկղ արծաթ ըլլայ: Թէ որ իր արտը Յորելեան տարիէն ընծայէ, քու կտրած գնոյդ պէս պիտի կենաց:

«Եւ թէ որ իր արտը Յորելեան տարիէն եռքը ընծայէ, քահանան անոր հետ առակը մինչև Յորելեան տարիին մնացած տարիներու նայելով հաշիւ պիտի ընէ, ու քու կտրած զինէդ վար պիտի իջեցնէ:»

«Իսկ թէ որ արտը ընծայողը փրկելու ըլլայ զանիկա, ան ատենը քու կտրած գնոյդ ստակին վրայ  $\frac{1}{5}$  մաս մը աւելցնէ, ու ան արտը պիտի հաստատւի անոր: Եւ թէ որ արտը չփրկէ, կամ արտը մէկ ուրիշի մը ծախած ըլլայ, ալ նորէն պիտի չփրկւի ան. հապա արտը երբոր Յորելեան տարիին մէջ դառնայ, նւիրւած արտի պէս սուրբ պիտի ըլլայ Տէրոջը. անոր կալւածքը քահանացինը պիտի ըլլայ:»

«Եւ թէ որ մէկը Տէրոջը ընծայէ իր ծախու առած արտը, որ իր կողածքին արտէն չէ, ան առեն քահանան քու կորած գնոյդ հաշիւը ընէ մինչև Յոբելեան տարին, և ան օրը քու կորած գինդ սուրբ բանի պէս պիտի տայ Տէրոջը։ Յոբելեան տարին՝ արտը ծախողին՝ այսինքն որին որ կը վերաբերի գետնի կալւածքը, անոր պիտի դառնայ։»

«Միայն թէ անասուններուն առջինէկը՝ առջի ծնած ըլլալուն համար Տէրոջը ըլլալովը, մէկը պիտի չընծայէ ան. թէ արջառ ըլլայ՝ և թէ ոչխար—Տէրոջն է. և թէ որ անմաքուր անասուններէն է, քու կորած գնոյդ համեմատ պիտի փրկէ ան, ու անոր վրայ  $\frac{1}{5}$  մաս մը աւելցնէ. և թէ որ չփրկւիր, քու կորած գնովդ թող ծախւի։»...

«Եւ երկրին բոլոր տասանորդը՝ թէ երկրի հունարէն և թէ ծառերուն պտուղէն՝ Տէրոջն է. անիկայ սուրբ է Տէրոջը։ Եւ թէ որ մարդ մը իր տասանորդներէն փրկել ուզէ, անոր վրայ  $\frac{1}{5}$  մաս մը պիտի աւելցնէ։ (գ. Ղետաց. իւ)...

## 16

**Այն կազմակերպութիւնը,** որին հիմնադիրը Մովսէն էր, զոռութեամբ չահանգանեց։

Խորացէլացւոց ցեղերը, իրանց ընկած վիճակի սահմանները ժառանգելուց յետոց, տեղ տեղ օտար ազգերը, օր. քանանացիները, յերուսացիները և այլն, բոլորովին բնաջինջ անել չկարողացան և թողելով դրանց նոյն երկրում՝ հարկատու ծառաներ արին զրանց։

Գաբաւնացւոց խարէութեան պատճառով, զրանք զաւա- պարուեցան յաւիտենական ծառայութեան՝ լինել փայտկորողներ և ջրկիրներ (գ. Յես. թ. 21).

Սոլոմոնը ունէր 700 իշխանազուն կնիկ ու 300 հարստ Դրանցից շատերը այն ազգերիցն էին, որոնց հետ խնամութիւնը արգելած էր։

Դատաւորներ ջոկելով՝ թագաւորներ ունենալով, նմանապէս նրանք շեղւեցին իրանց ունեցած կազմակերպութիւնից։

Իրանց միջից կին առնելու հին սովորութիւնը տեղի էր տւել խառն՝ թէ իրանց միջից և թէ օտար ազգերից՝ կին առնե-

լու սովորութեան։ Միայն գերի կանանցից առաջ կինը, թէ տիրոջը դուր չգայ՝ վերջինս դորան ոչ ծախել և ոչ էլ ծառայեցնել էր կարող (գ. 2 օրին. իս 10—14):

17

**Թագաւորների ժամանակ առաջ է գալիս ազնւականների դասակարգը։ Արդէն հանդիպում ենք և երկրագործների։ Դաւիթը, օրինակ՝ Սիբան իր որդիներով ու ծառաներով Սաւուղի որդւոյն երկրագործ տւաւ։**

**Թագաւորը հաւանական է որ ունէր ժողովուրդից  $\frac{1}{10}$ -րդ ստանալու իրաւունք։ Երբ իսրայէլացիք իրանց վերայ թագաւորութիւն ուղեցին, Սամուել ասաւ նրանց «Եւ ձեր հունդերուն ու ձեր ազգիներուն  $\frac{1}{10}$ -րդը պիտի առնէ, ու զանիկա իր ներքինիներուն ու ծառաներուն պիտի տայ... Զեր հօտերուն  $\frac{1}{10}$ -րդը պիտի առնէ, ու դուք անոր ծառաներ պիտի լլլաք (Առաջ. գ. Թագ. ը. 15-17.)**

Իսրայէլացիք պարտաւոր էին միայն վերը յիշած եօթ ազգերը բնաջինջ անել։ Դրանցից դուրս միւս ազգերը, եթէ պատերազմի ժամանակ խաղաղութեամբ անձնատուր լինէին, մահւան չէին զատապարտում։ Այդ տեսակ ժողովուրդները հարկատու էին դարձնուում և ծառայութեան մէջ էին թողնուում։

Խաղաղութեամբ անձնատուր չեղողներուն բոլոր արուները սրի քերան պիտի անցնէին, իսկ դրանց կնիկները, աղաքը, անասունները և բոլոր ունեցածը՝ պիտի աւար առնէին։ (գ. 2 օրին. ի. 10—17.):

Այդ տեսակ էր վարւում Սողոմոնը օտարների հետ՝ որոնք պատերազմներումն էին յաղթւած, և որոնք յիշած 7 ազգերի սերունդներիցն էին՝ դրանց հարկատու ծառայ էր իրան դարձնում։ բայց իսրայէլի որդիներից իրան ծառայ չարաւ՝ դրանք պատերազմական մարդիկ, պալատականներ, իշխաններ զօրապետներ, կառքերուն ու ձիաւորներուն վերակացուներ էին։

18

**Թագաւորների ժամանակ երկու տեսակ յարաբերութիւն էր առաջ եկել՝ միմեանց հետ և օտարականների հետ։ Իսրայէլացւոց**

12 ցեղերը պարտաւորւած էին ոռճիկ տալ թագաւորին իր դրանով։ Սողոմոնը 12 գործակալներ ունէր, որոնք պարտաւոր էին ամեն մէկը մի ամիս կերակրել թագաւորին իր դրամով։

Ու Սողոմոնին մէկ օրւան ոռճիկը աս էր՝ 30 քոռ նաշին, ու 60 քոռ ալիւր, 10 գէր արջառ, ու 20 արոտական արջառ, ու 100 ոչխար, բացի եղջերուներէն, այծեամներէն, ընաիր ու գիրցուցած թուուններէն։

Եւ Սողոմոնի իր կառքի ձիերուն համար 40,000 ակոռ ունէր, ու 12,000 ձիաւոր<sup>1)</sup> և ան գործակալները ամեն մէկը իր ամսւան մէջ՝ Սողոմոն թագաւորը, ու Սողոմոն թագաւորին սեղանը մօտեցողները կը կերակրէին՝ մէկ բան մը պակաս չընելով։ Նաև ձիերուն ու երիվարներուն համար անոնց եղած տեղը՝ ամեն մէկը իր վրաց դրած հարկին չափովը գարի ու յարդ կը բերէին։ (Յ գ. Թագ. գ.)։

Ինչպէս ասացինք, խրայելացիք ծառաների հաշւումը չէին։ Դրանք՝ պատերազմական մարդիկ, պալատականներ և այլ տեսակ պատւաւոր ծառայութիւն անողներն էին։ Բայց դրանց մէջ էլ առաջ էր եկել ազնւականների և երկրագործների դասակարգը։

Անուարակոյս ազնւականները նրանք էին, որոնց ձեռքն էր անցել կալւածքի մեծ մասը և հարստութիւնը։ Երկրագործները անտարակոյս 1/5-րդ տալու պարտաւորութեան տակն էին։ Օտարականների հետ երկու տեսակ յարաբերութիւն կար։ Սողոմոնը իշխում էր Եփրատ գետից մինչև Փղասացւոց երկրի ու Եդիպուսի սահմաններում գտնւած բոլոր թագաւորներու վերայ, որոնք դրան ընծաններ էին բերում և ծառայութիւն էին անում։

Այդ ժողովուրիները անձամբ և հողով չէին կարող Սողոմոնին պատրանելութիւնը համարելին։

Այդ թագաւորների և Սողոմոնի մէջ որոշ յարաբերութիւն կը լինէր հաստատւած և ծառայութեան չափը և սահմանը որոշած կը լինէր։

<sup>1)</sup> Հայոց դրաբառ Աստածաշունչի մէջ առած է՝ «Եւ էին Սաղոմոնի քառասուն հազար մատակ ձիոց ի կառս, և երկոտասան հազար երիկարաց», այնպէս որ հեղինակի աշդ ցիտատի մէջ սխալմունք կալ։

իսկ նւաճւած ժողովուրդները պարտաւորւում էին հարկատու լինել և ծառայութիւն անել: Սրանք թէ անձամբ և թէ հողով պատկանելիք կը համարւէին և զորանց յարաբերութիւնը կը որոշ- ւէր կամ այնպէս, ինչպէս այդ հաստատւել էր Եգիպտոսում՝  $\frac{1}{5}$ -ր տարով կամ մի ուրիշ կերպ:

Հաւանական է, որ սրանք  $\frac{1}{5}$ -րդի կամ  $\frac{1}{10}$ -րդի հարկը կը տային և պարտաւորւած էին որոշ ծառայութիւներ անել, օրի- նակ՝ մշակութիւն, փայտակոտոր, արհեստաւոր լինել որոշ չափով և այլն:

Այս յարաբերութեան մեջ մարդը չի կարելի իսկապէս պատ- կանելիք համարել հողով և անձամբ. սա մի տեսակ սահմանափակ պատկանելութիւն էր:

Այլ էր ծախու ասւած օտարական ծառան, որը իր տիրոջը անսահման պատկանելութիւնն էր համարւում:

## 19

Առաջման այսքանով կը բաւականանանք, ակնարկելով հրէա- ների իրաւունքում քանի մի մեր կեանքին նմանութիւն տւող կէ- տերի վերայ:

«Patria Potestas», հիմնարկութեանը նմանութիւն տւող հաս- տատութիւն կար ինչպէս հրէաների, նոյնպէս և մեր մէջ: Ժաւան- գութիւնը մեր մէջ ամբողջ ծնունդինն էր համարւում, և ծնունդի սեփականութեանը տիրանալու համար թշնամին կամ օտարը կո- տրում էր ամբողջ ծննդակիցները, մինչև անգամ և մանգտին, որպէս զի ժառանգ չմնար:

Մեր ապազի և տասանորդ տալրու սովորութիւնը, որ մինչև Պատ թագաւորի օրերը գրյութիւն ունէր՝ նման էր Նետացոց և քահանաներին յատկացրած նոյնատեսակ հարկերին: Նմանապէս երեսում է, որ այժմեան տասանորդ տալրու սովորութիւնը, հազա- րաւոր տարիներ տևողութիւն է ունեցել: Պանդուխտ օտարականը մեր մէջ էլ սիրով ընդունւում էր՝ դա նման է վրացոց խիզանին: Մեր մէջ էլ ծառաներ կացին. միայն ծառայութեան տեսակները տարբերում էին:

Ցեղերի իշխանները նման էին մեր նահապետներին, բայց,

ի հարկէ, կար զբանց մէջ մեծ զանազանութիւն։ Կալւածքի անփոփոխ, մշտնչենաւոր սահմաններ ունենալու գաղափարը մեր մէջ էլ կար։ Նոյն ազնւականները և երկրագործները նմանապէս մեր մէջ կային։ Երկրագործը նմանութիւն էր տալիս վերջի ժամանակներում մեր մէջ եղած ռաշապարին։

Հողից <sup>1/5</sup>-րդ տիրոջը տալը՝ նման է մեր տափու անւանեալ իրաւունքին։

Այսուեղ մեզ թոցը չենք տալիս այս առարկաների վերայ ընդարձակօրէն խօսելլը, կ'ասենք միայն, որ մահմեղականների և հրէաների իրաւունքները միմեանց հետ շատ նմանութիւն ունին և տարբերում են այլ ազգերի նոյնատեսակ հիմնարկութիւններից։

---

## Գ. Բ. Ա. Խ Օ Ս Ո Ւ Թ Ի Ւ Ն

DAUDET, Alphonse.—La petite paroisse. (ԴԱԴԵՏ, Ալֆոնս.—Փոքրի ծուխը, վէպ. 1895):

Ներկայ տարւաց Փրանսիական վիագրութեան նշանաւոր գործերից գլխաւորապէս Դոդէի ալս վէպնէ, որի խորհրդաւոր բովանդակութիւնը մտածել է տափս ընթերցողին ան երեսիմների մասին, որոնք ծագում են մանաւանդ բարձր շըրջանների ամուսնական բարք ու վարքերից: Ալֆոնս Դոդէն վերցրել է վէպի նիւթը Պարիզից գուրս ապրող բարձր շրջանի ընտանիքի կեանքից: Դործողութիւնը կատարում է «Փոքրիկ ծուխ» (la petite paroisse) կոչւած եկեղեցու շուրջը, որ կառուցել է մի ոմն Նապոլէոն Մերիէ անունով, ի փիշատակ իր հանգուցեալ կնոջ, նվիրելով ալս եկեղեցին ան համայնքին, ուր ապրում են իրանց կայքերում վէպի մէջ զործող գլխաւոր անձերը: Նոյն համայնքում ապրում է մի հարուստ երիտասարդ Ֆենիգան անունով, որ իր հօր մահւանից լետոն՝ թողել է իր ուսումը և եկել իբրև միակ զաւակ ապրելու իր մօր մօտ իրանց կաքըում: Ֆենիգանը շատ բարեկիրթ և ազնիւ երիտասարդ է: Օժտած լինելով բնաւորութեան ամենալաւագաւկութիւններով Ֆենիգանը միանգաման հազարնորդ է իր մօրը:

Բայց մայրը Փրանսիական այն հպարտ և ինքնահաւան կանանցիցն է, որոնք սիրում են անսահման իշխել իրանց տան մէջ, խախտելով մինչեւ անդամ ընտանիքի անդամների իրաւունքները: Խոկ մի ընտանիքի անդամների իրաւանց անշափ խարութիւնը և խախտումնեալաջ են բերում այնպիսի հետեւանքներ, որոնք յաճախ վտանգի մէջ են գցում ընտանիքի բաղդը: Ֆենիգանը, սիրահարելով մի չնորհալի աղջկան՝ ամուսնանում է սորահետ, իր մօր համաձայնութեամբ, ի հարկէ: Ով էր ալս նորահարս կինը? Սա մի որբ աղջիկ էր, որ ծնողներից զուրկ լինելու պատճառով ընդունւած էր կանանց վանքը կրթութիւն ստանալու համար: Ուրեմն Լիդի կոչւող տիկինը մի աղջիկ է եղել, որի ծագումը անորոշ էր մնում Ֆենիգան մօր և որդուն:

Բաց և ամսպէս ջերմ սիրու չնորհիւ  
Ֆենիգանը ամուսնանում է Լիդի'ի  
հետ:

Նորահարս տիկին Լիդի'ի իդէա-  
լը պէտք է լինէր այն բոլոր պար-  
տաւորութիւնների կատարելը, որ  
ամուսնական կեանքը հրահանգում է  
իւրաքանչիւր կնոջ: Եւ ում չէ լաւտ-  
նի, որ այդ պարտաւորաթիւններից  
ծագում են լրաւունքներ, որոնք  
դիրք և զեր են տալիս տաճախկնոջ:  
Այս իդէալը փարատում է շուտով  
Լիդի'ի համար, որովհետև սա չէ դժնում  
այն ինչ որ նա իր նոր ասպարիզի  
վրայ սպասում էր: Նա, կարծես, հիւր  
էր եկել իր ամուսնու տունը, մի ան-  
վերջ ու անզործ հւր, որ բեռն է  
գառնում և ձանձրացնում: Խոկ ըն-  
տանեկան ամենատեսակ արաօնու-  
թիւնները գայելում էր Ֆենիգան  
մալը, որ կատարեալ իշխանութիւն  
էր բանեցնում ոչ միան ընտանե-  
կան գործերի վրայ, այլ և նորահարս  
Լիդի'ի և իւր որդու անձնական ա-  
զատութեան վրա:

Տիկին Լիդի, վաճքում գտնւելիս,  
ստրուկ էր, ազմ ամուսնաց ած զար-  
ձեալ ստրուկ է, Զարմանալի է, որ  
Ֆենիգանը այնքան թուլամորթ,  
միամիտ և անփորձ է, որ չէ կարո-  
ղանում թափանցել այն հետեանք-  
ների մէջ, որ տառաջ կը բերի իր  
կնոջ լուսահատ և հալածած դրու-  
թիւնը: Աչսպէս տիկին Լիդի փակ-  
ւած և մաշող կհանք է վարում: Ֆե-  
նիգանն էլ իր մօր իշխանութեան  
տակ զտնւելով՝ դատապարտած էր  
ընտանեկան սահմանափակւած կեան-  
քին, բացի այն օրերից, երբ որ  
նա գնում էր իր սիրած որսորդու-

թեանը և ձկնորսութեանը:

Վերջապէս այն համբերող և բը-  
թամիտ կեանքը այնքան ամենքին  
ձանձրացնում է, որ Ֆենիգանների  
ամբողջ ընտանիքը վճռում է ընդու-  
նել իրանց տան վաղեմի բարեկամ-  
ներին:

Ֆենիգանների կավիճ մօտ ապ-  
րում էր մի զուքս իր կնոջով և մի  
18 տարեկան տղացով: Սրանց հետ  
Ֆենիգանները սկսում են ընտանե-  
կան լարաքերութիւններ: Մի օր  
զուքսը հրաւիրում է Ֆենիգաններին  
Պարիզի օպերա: Հրաւէրը ընդուն-  
ւում է: Երբ որ Ֆենիգանը մի վակր-  
կեան օթեանից զուրս է գնում,  
զուքսը բռնում է տիկնոջ Լիդի'ի  
ձեռքը և ալսոյէս սեղմում է, որ Լի-  
դի'ին սարսափում է զուքսի լանդրգո-  
նութիւնից: Աչսպէս առաջին ան-  
գամ շօշափում են Լիդի'ի ոգու կու-  
սութիւնը, չնայած ներքին բողոքին,  
որ ծագում է այդ դէպքից Լիդի'ի  
մէջ: Աւելի ևս սոսկալի հետեանք է  
ունենութ Ֆենիգանի ամուսնական  
քաղցի համար զուքսի ընտանիքի  
շարունակ լարաքերութիւնը:

Դուքսի որդին մտերմանում է  
տիկին Լիդի'ի հետ: Այս հանգաման-  
քի վրայ զուքսը Ֆենիգանի ուշա-  
գրութիւնն է զարձնում և նախա-  
զգուշացնում է իր որդու բարոկա-  
կան պակասութիւնների մասին:  
Դուքսի նախազգուշացնումը անկեղծ  
էր թւում, բաց անկեղծ չէր: Սա  
ինքը անմաքուր էր Լիդի'ի վերա-  
բերմամբ: Նա զգուշացնում էր գար-  
շելի դիտարութեամբ՝ տիկին Լի-  
դի'ին իրը թէ իւր որդու արշաւան-  
քից ապահովիլու: Հայր և որդին,

երկումն էլ 19-րդ դարու վերջում գետ  
կենդանի բաց բարովապէս նեխւած  
արխտոկրատիալի կատարելատիալ-  
ներ են, որոնք անհոգ կերպով սըր-  
բապղծում են ընտանեկան պատիւն  
և բազրը. Որդին ժառանգել է հօրից  
բարովական մոլութիւններ և ախ-  
տեր, որոնց վերլուծելու համար հար-  
կաւոր էր ոչ միայնը Գողէի նման  
նուրբ հոգեբանը, այլ և հաճարեղ  
Զօլան, որ իր բնագիտական անդա-  
մահատութեամբ արթնացրեց մար-  
դուս ուշքն ու միտք հասարակու-  
թեան բարովապէս հիւանդու և ցա-  
ւոտ կողմերի մասին.

Ֆենիգանը մի օր տուն վերա-  
դառնալիս՝ լանկարծ իմանում է, որ  
իր կինը փախել է դուքսի որդու  
հետ հեռու Ֆրանսիալից դէպի ծով-  
եղբեալ կողմերը. Այս իրողութիւնը  
Ֆենիգանի համար մի սաստիկ ան-  
սպասելի հարւած էր. Այժմս նա մոր-  
մոքւում էր և հարւածի բոպէական  
ազգեցութեան տակ վճռում է արիւ-  
նով վրէժ հանել իր ամուսնական  
բարդը ոչնչացնող մարդկանցից. Գո-  
րա համար Ֆենիգանին երեսում է  
միակ արդար միջոց մենամարտել,  
կամ ուղղակի ոպանել մեղաւորին:  
Որովհետեւ, ինչպէս Ֆենիգանը համոզ-  
ւում էր, մեղաւորը իր կինը չէր,  
այլ ուրիշ մարդիկ և այլ պայման-  
ներ. Իր դատավճիռը կատարելուց  
վետով ինչպէս պիտի վարէկը նա իր  
կնոջ հետ? Ահա այն խնդիրը, որի  
պարզելուն համար Գողէն ենթար-  
կում է իր հակեացքը մարդկանց ո-  
գեկան աշխարհի խորհրդածութեանն,  
բաց ոչ օրինական քննութեանը, որ  
իբր թէ անխիղճ է լինում՝ նոյն խոկ-

ոչ ուղղակի մեղաւորին չարաչար  
պատժելով. Օրէնքը թուլ է տալիս  
Ֆենիգանին ապահարզան պահանջիլ  
և ազդպիսով վերացնել իրանից աչն  
անպատւութիւնը, որին նա ենթարկ-  
ւել է. Մինչև խնդրի ալսապէս ձես-  
կերպելը, Ֆենիգանը առիթ է ու-  
նենում տեսնելու վերոջիշեալ բա-  
րեսիրու և գթառաստ Նապոլէօն Մի-  
րիւէի հետ, որ եկեղեցի էր շինել  
ի չիշատակի իր հանգուցեալ կնոջ:  
Մերիւէն տեղեկանալով Ֆենիգանի  
դժբաղութեան մասին՝ պատմում է  
նրան, որ ինքն էլ զժբաղդ է եղել  
իր կնոջ հետ, որ նոյնպէս իրան խա-  
բել էր. Մերիւէն մեղաղրում էր իր  
կնոջ ամուսնական լանցանքի մէջ  
չատուկ իրան, որովհետև ինքը տոեղ-  
ծել էր ամուսնական կեանքի ան-  
սպասաւ պայմաններ, որոնք աշակ-  
ցել էին իր կնոջ սիստը գործելուն  
Նման մենկնութիւնների հիման վրայ  
Մերիւէն լուրջ և շխտակ խորհուրդ  
է տալիս Ֆենիգանին՝ ոչ արիւնով  
լւանալ իր վիրաւորւած ամուսնա-  
կան պատիւը, որ կը լինէր նոյնպէս  
մի ուրիշ տեսակի լանցանք, ոչ էլ  
ապահարզանին դիմել, որ արդարու-  
թեան պահանջին չաճախ հակասում  
է. Վիրաւորանքից բուժւելու համար  
պէտք է գնալ, ըստ ։ Մերիւէի, իր  
շինած աՓոքրիկ ծուխ» եկեղեցին և  
արօթել. Այսանդ Ֆենիգանի սիրու  
պէտք է խղճահարւէր իր կնոջ մա-  
սին և ներէր արած այն մեղքը, որի  
համար իր կնոջ պատասխանառու-  
թիւնը գեռ չամենացն դէպս վիճելի  
էր երեսում. Ֆենիգանը լսելով Մե-  
րիւէի խորհուրդները՝ իր սկզբնա-  
կան վճիռը փոխում է, այնպէս որ

սորա կատաղի վրէժինդրութեան միրքը կատարելապէս սառչում է, Ֆենիգանի մօր կարծիքը այլ էր. Սա խիստ լանդիմանութիւն էր առում իր որդուն թէ նա ամուսնացաւ փողոցում գտած անարժան աղջըկաչ հետ, որ դժբաղդացրեց իրան. բոլոր այս ամօթանքին պէտք է վիրջ դնել ապահարզանով. Մօր խրատները և լանդիմանութիւնները թէն ծանր և դառն էին որդու համար, բայց ուշ էին և անօգնական նրան հոտ կանգնեցնելու իր հերոսաբար կալացրած վճռից. Ֆենիգանը անդրդւելի կերպով վճռել էր կրկին միանալ իր դժբաղդ կնոջ հետ. Սա բողոքում էր իր մօր լանդիմանութեան դէմ, ջանալով ապացուցել իր կնոջ արժանաւորութիւնն և ազնւութիւնը, որին խարել են. Մասամբ մայրն էլ է իր ամուսնական զժբաղդութեան պատճառը. Աչսպիսի փոխադարձ նախատինքը որդու կողմից պէտք է էապէս փոխէր մօր դիմագրութիւնը և շարժէր նրան դէպի անպայման համաձայնութիւնը իր որդու վճռի հետ. Մօր համար վսեմ ոգու տէր որդին այնքան թանգ էր, որ նա պարտաւորում է իր որդու կինը գտնել և բերել. Ֆենիգանի մայրը գտնում է տիկին Լիդի՛ին մի ծովեղրեաչ քաղաքի հիւրանոցում, հիւանդ մի վերքից, որ Լիդին իրան հասցրել էր անէաջող ինքնասպանութեան փորձով՝ իրան զգալով լուսահատութեան մէջ զուքսի որդու կողմից դէն դցւած լինելով ու կամենալով իր արած մէծ սխալը քաւել. ինչ եղաւ սական դուքսի որդին? Սրան սխալմամբ սպանում են անտառում,

ուր նրան գողի տեղ են ընդունում, մինչդեռ թշւառականը անտառում շրջելիս է եղել իր մոլութեան ծարաւը հագեցնելու նպատակով, որի համար նա պատահմամբ և սխալմամբ, բայց արժանաւոր կերպով պատժում է: Վերջապէս Ֆենիգանը հաշտւում է Լիդիի հետ, ներում և խղճում է նրան. Բայց որքան հերտութիւն էր Ֆենիգանի կողմից բարուական կուիւն ներից լիտոք՝ գրկել իր սիրած կինը, նոյնքան տիկին Լիդիի համար աչնունիտե մի միծ բարուական գործ էր իր մարդու մտատանջութիւնը փարատել և նրան իր անկեղծ սիրոց մէջ համոզել. Ան կեանքը, որ նոքանորոգեցին, ապացուցում էր, որ նոքա իրար անկեղծ սիրող և հրջանիկ ամուսիններ են:

Վէպի գլխաւոր միտքը, ինչպէս տեսանք, կենդրուանում է այն հաշեացքի մէջ, թէ ապահարզանը կարծես երբեմնապէս մի աւելորդ և անարդար միջոց է ամուսինների մէջ պատահող դժբաղդութեանը վերջուելու. Ապահարզանին հակառակ Դոգէի վէպում նկարագրած ամուսնական լանցանքը լուծւում է խըդճով և ներմամբ. Սա մի միխթարիչ երեսքի է, որ բացառիկ անհատական բնաւորութիւն է կրում և ինդրի ընդհանրութեան համար դրական արժեք չունի. Խակապէս Ֆենիգանը մի հերոս է, որ իր վեհ սրտի լատկութիւնների չնորհիւ արհամարտում է օրինական միջոցները և կատարում է իր ներքին աշխարհի գատավճիռը. Աթէ մարդկութեան մնածանութիւնը օժտւած լինէր Ֆենիգանի հերոսական ոգով, կասկած

չկաէ որ ապահարդանը ձեռք չէր բե.  
բիլ գոլութեան իրաւունք. Բայց ո-  
րովհետև շնորհիւ մարդկանց բնաւո-  
րութիւնների բազմատեսակութեանը՝  
ամուսնական կացութիւնը բարուա-  
պէս վտանգւած է, ապահարզանը  
առհասարակ միջոցներից արդարա-  
գոլնն է երեսում ապականեալ և չան-  
ցաւոր ամուսնական կեանքի առաջն  
առներու. Ապահարզանը մի հասա-  
րակական օրէնք է, որ օգնութիւն  
է հասցնում մարդկանց իրանց ա-  
մուսնական լիտին թշւառութեան  
մէջ, իբրև հետևանք աններդաշնակ  
ամուսնական կեանքի, որ գոլացել է  
երկու բարուական՝ ամբողջ էութեամբ  
իրար հակասող և թունաւորող՝ ոգի-  
ներից. Շատ ցանկալի է, որ ֆենի-

դանի նման վիսմ ոգու տէր մարդիկ  
բազմանան. Բայց Դոդէի վէպում  
յարուցած խնդրի նկատմամբ դժւար  
թէ մարդիկ զեկավարւեն մեր սոցիա-  
լական զարում միմիացն հերոս. նկան  
օրինակներով. Խսկ որ Դոդէի հե-  
րոսը իր վիսմ ոգով շեղում է օրէն-  
քի գործադրութիւնից և հետեսում իր  
վառ սրտի խորհուրդներին, դա էլ  
անկասկած բարձր բարուական գոր-  
ծողութիւն է, որ չերմ համակրու-  
թեան արժանի է. Աւդ տեսակէտից  
Դոդէի վէպը հոգեկան կեանքի պատ-  
կեր է, որ թանգաղին նիւթ է մա-  
տակարարում հոգեբանի գիտողու-  
թեանը և մտածողութեանը.

Գլուխոց Ա. աբդանէանց:

## ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԻՒԹԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Ներկայ օգոստոս ամսւայ ընթացքում երկու անգամ հեռագիր եկաւ աւետելու, թէ սուլմանը ընդունել է հայկական ուժորմների ծրագիրը: Բայց և երկու անգամ էլ այդ լուրերը յուսախաբական եղան: Այդ լուրերը տարածւեցին նաև Կ. Պոլսում: Վերջին հեռագիրը, որ մեր հին տոմարով օգոստոսի 31-ից էր (Նոր տոմարով սեպտ. 12), այս բովանդակութիւնն ուներ.

«Իրուսաց ու Փրանսիական զեսպանները սուացան Թուրիսան-փաշացի հաղորդագրութիւնը տաճիկ կտուավարութեան զիջումների մասին՝ Հայաստանում մացնելիք ուժորմների վերաբերեալ: Անդիւական զեսպանը, գտնելով որ զիջումները ուշացած են՝ առաջարկեց Դուռն այդ առթիւ անմիջական կերպով բանակցել Լոնդոնի հետ: Դուռը համաձայնւել է հաստատելու զլիաւոր մասնաժողովը հայկական գործերի համար, որը անմիջական յարաբերութիւնների մէջ կը լինի զեսպանների հետ, և ընդունել է նաև երեք պետութիւնների 11-ն մայիսի տասծ հաւաքական նուայցի հինգ կէտերը: Այսպիսով Դուռը ընդունել է ամենահական առաջարկութիւնները:

Այդ հեռագիրը աւողը «Կորրեսպոնդէնց-Բիւրո»-ն է. առաջին անգամից թւած թէ սա այն վերջնակտն բանն է, որ տւել է Սուլթանը, իրք զիջումն անգլիական թագուհու գահական ճառում տածած յոյսերի, լորդ Ոռլաբրիի վերին աստիճանի սպառնալից խօսքերի,

Միջերկրական ծովի անդլիական նաւատորմիզի Դարդանելը մանելու սպառնալիքի, եռապետական գաշնակցութեան անգամների բարեկամական խորհուրդների և Սոլյրիի՝ Փրանսիական արտաքին գործերի մինիստր Հանուորի հեռ տեսակցութեան Դիէպ'ում, որով միաժամանակ ցոյց էր արւում թէ ոեփորմների խնդրի նկատմամբ կատարեալ համաձայնութիւն կայ Անգլիայի մի կողմից, և Ֆրանսիայի ու Ռուսաստանի մէջ—միւս կողմից:

Թէև ծրագիրը սուլմանի կողմից ընդունելու մասին լուրը չհաստատեց, բայց ամենայն հաւանականութիւն կայ Ենթադրելու, որ Կ. Պոլսում ծրագիրը ընդունելու անհրաժեշտութիւնը խիստ զգացւել է: Մեզ համար ոչ մի հասկած չի կարող լինել, որ այն օրից, երբ լորդ Սոլյրին արտասանեց իւր սպառնալից ճառը լորդերի պալատում, որ մեր ընթերցողները կը գտնեն ներքեւ, Անգլիայի նոր մինիստրութիւնը պիտի իւր բոլոր միջոցները գործ գնէ ծրագիրը ընդունել տալու համար: Այդ խօսքերը հիմնւած էին թէ Անգլիայի շահերի գիտակցութեան վրայ, որոնք պահանջում են որ Թիւրքիան ոեփորմների միջոցով գէմն առնի տաճկահայկական նահանգների գրաւման Ռուսաստանի կողմից, և երկրորդ այն հասարակական կարծիքի վերայ, որի լաւագոյն արտայացառութիւնը եղաւ ունիոնիստ Վեստմինստերին դքսի նախագահութեամբ կայացած Զեստէրի միտինդը, ուր Գլաւստոնը արտասանեց իւր նշան աւոր ճառը, որ մեր ընթերցողները ամբողջութեամբ կը գտնեն ներքեւ: Ինչ վերաբերում է Անգլիայի թագուհու գահական ճառում Հայաստանին վերաբերեալ խօսքերին,—այդ մենք առաջ բերինք «Մուրմ»-ի անցեալ համարում: Մենք արդէն վաղուց ասել ենք, որ հայկական խնդիրը անգլիական արժանապատռութեան խնդիր է որով նաև առհասարակ անգլիական խնդիր է գարձած: Այդ հայեացքը հաստատեցին թէ Գլաւստոնի ճառով և թէ անգլիական մինիստրութեան վերջին ամսում արած քայլերով: Եւ, չնայած որ հայկական ոեփորմների ծրագրի հետ կապւած են նաև Ֆրանսիայի և Ռուսաստանի անունները, բայց Անգլիան է խնդրի ծանր ութիւնը իւր ուսերի վրայ տանողը: Ստորև մեր ընթերցողները կը գտնեն արտայացութիւններ Ֆրանսիայի և Ռուսաստանի վերաբերմունքի գէպի Անգլիայի բռնած ներգործական դիրքը հայկական խնդրում,

մի դիրք, որը մեր լնթերցողները բնորոշած կը գտնեն զեռւս  
յունւար ամսում հայկական խնդրին նւիրւած մեր յօդւածում։

Անզլիական (սահապանողական) մինիստրութիւնը ոչ միայն ետ  
չկանգնեց նախորդ (լիբերալ) մինիստրութեան պահանջներից հայ-  
կական խնդրի վերաբերութեամբ, այլ զեռ աւելի խիստ դիրք  
բանեց, և ուժքորմների գործը աւելի ապահովելու համար – կար-  
ծում ենք թէ ճիշդ է «Թագմա» լրագրի Պոլսի թղթակցի հաղոր-  
դածը այդ մասին – Սոլսբիւրին պահանջ է դնում որ Պոլսում կազմելիք  
վերահսկող մասնաժողովը կազմւած լինի հօթը հոգուց՝ չորսը  
սուլթանից նշանակւած, իսկ երեքը լինեն Անզլիացի, Ռուսիացի  
և Ֆուանիացի գեսպանները։ Իսկ եթէ դա ստուգ է (և մենք հա-  
ւատում ենք դորան), այն ժամանակ հայկական խնդրի նորագոյն  
զարգացման պատմութեան մէջ Սոլսբիւրիի այդ պահանջը մի նոր  
և կարևոր մոմենտ է կազմում։

Սուլթանը, հետեւով իւր տրադիցիական քաղաքականութեան՝  
եւ բազական պետութիւնների աջքում թող փչել՝ խեղդելու  
համար, արդէն ուղարկեց Հայաստան Շաքիր փաշացին, օգնական  
տալով նրան ոմն Գենիշ-բէյն իր թէ լիսազօր իրաւունքներով՝  
քննելու և կարգադրելու հայկական գօրծերը բարենորոգութիւնը՝  
մոքով։ Այդ քայլը սուլթանը արաւ առանց նախնական գիտու-  
թեան և հաւանութեան եւ բոսպական գեսպանների։ Ընդհանրու-  
թեան հետ միասին մենք ևս այդ բանին որ և է քաղաքական  
կարեւորութիւն չենք տալիս։

ԱԿԵՏԻՔ ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ

### ԳԱՂԱՏՈՆԸ ԶԵՍԵՐԻ ՄԻՏԻՆԳՈՒՄ

Այս միտինգը, որին նախագահում էր Վեստմինիստէրի դուք-  
սը, կայացաւ լուլիսի 24 ին (հին տոսմար). Բաց անելով նիստը,  
ու էստմինիստը իստրի դուքսը չափուեց, թէ զանազան կողմերից  
նամակներ է ստացել, որոնք ցաւակցութիւն հն չափում միտինգին մաս  
նակցելու անհնարաւորութեան մասին։ Այդպիսի նամակներ ի թիւս ազոց  
ստացւած են Զէմս Բրայալից և միտր Ռեբբուրգից։ Միտր Բրայսը, որ  
Լոնդոնի Հայկական Միունիքուն է հիմնել, հետեւալն էր գրում։

«Սաստիկ ցաւում եմ, որ ինձ Լոնդոնում արգելում է կալվերակոն Մասնախմբի միտինգը, որի նախագահն եմ, ուստի և կարող չեմ ներկայ լինել Զեստերի միտինգին, ուր Գուռ նախագահ պիտի լինիք և որի նպատակն է քննել Հայկական ինդրի ներկայ դրութիւնը։ Այդ խնդիրը ներկայ բոպէում ամենասաստիկ կրիտիքական շրջանն է ասլրում։ Խնդիրը վերաբերում է ոչ միայն նրան, թէ Հայերը իրանց սեպհական Հայաստանում գոյութիւն ունենան—պէտք է զգուշանալ։ Թուրքիւրը որոշել են նրանց ոչնչացնել՝ եթէ այդ թուրք արտի իրանց, —այլ որ առհասարակ ամբողջ Տաճկական արենելքի քրիստոնեալ ժողովուրդը ապահով լինի։ Աւրիշ հնար չկայ միայն եւրոպական պետութեանց, մանաւանդ Մեծ Բրիտանիակի վճռականութիւնը կարող է հեռացնել նրանց սպառնացող վասնգը։ Երբ Նորին Մեծութեան հրապառուների նկարագրած անլուր գաղանութեանց տեղեկագրերը կը տպագրին, այն ժամանակ պարզ կը լինի, թէ անհրաժեշտ են անդապաղ և իրական ուշփորմներ և թէ այդ ուշփորմները մըտցնելու գործի վրայ պէտք է ամենառուշաղիր փերահսկողութիւն։ Յամենան դէպս հաճելի է իմանալի որ Անգլիակի բալոր կուսակցութիւնները պէտք փորմներն են պահանջում, և պատրաստ են պաշտպաննել ներկայ կառավարութեանը՝ ինչպէս լորդ Ոողբերիին, որ դա սուլթանին ստիպէ ուշփորմներն ընդունելու և իրագործելու։ այդ է պահանջում իրերի դրութիւնը, դա է ընդունակ՝ անհնարին դարձնելու այնպիսի դէպքերի կրկնութիւնը, սրոնք Սաստանում կատարւեցան և որոնք աչս երկրի դարբութը առաջ բերին։ Զ. Բրալս։

Լորդ Սոլզբրիից հետեւալ նամակն էր ստացւած։

Արտաքին գործոց մինխտութիւն, 2 օգոստոսի, 1895 թ.

«Միլարդ դուքս։ Մարքիզ Սոլզբրիւրիի լանձնարարութեամբ պատիւ ունիմ հաղորդել Ձեզ, որ ստացւած է Ձեր երէկամ ուղարկած նամակը ներփակեալ 1000 ֆ. ստէրլինգ չէկի հետ՝ լոգուտ հակերին օժանդակող Փոնդիւնորին Մեծութեան ղեսպանին հետագրով անչափաղ կը հաղորդի պէտքումարի ստացման մասին, նոյնպէս և այն՝ թէ մասնաժողովը նորին գերազանցութեանն է թողնում՝ օժանդակութիւնը բաշխելու համար ճանապարհ ընտրելու։ (Ստորագրւած է)» 8. Գ. ՍԱՆԴԵՐՍՈՒՆ»

Վեստմիստրի դուքսը առաջ, թէ աքնանութեան ենթարկւած ներկայ խնդիրը չափազանց մեծ և լուրջ խնդիր է, որ չի կարող կուսակցական հոգով քննւել։ նա՝ ազգանութեան էական խնդիր է, որ սաստիկ շօշափում է Անգլիակի՝ իբրև ազգութեան՝ պատիւը (հաւանութիւն)։ Այդ խնդիրի ահազին կարեռութեան ապացուց է այն հանգամանքը, որ ամբիոն է բարձրացել մի հոչակաւոր մարդ, որպէս զի իւր ձախն միացնի ազգակին աղաղակակի հետ աղատութիւն պահանջելու հակերին Տաճկաստանի ձեռքից (ինչպէս նկարագրենք այդ ձեռները), աղաղակ, որ արդիւնք չի-

ունենալ, եթէ մեր զօրնղ պետութեան կողմից ամուր պաշտպանութիւն չփառի (հաւանութիւն): Սասունի կոտորածները, որոնք չնորհիւ մասուլի լատուկ թղթակիցների, մասնաւոր տեղեկութեանց և Անգլիացի, Ռուսիացի և Ֆրանսիացի ներկայացուցիչների տեղեկագրերի՝ դանդաղ, բայց պարզ և հիմնաւոր կերպով պարզեցան, նորից սարսափեցրին Եւրոպացի հասարակական գիտակցութիւնը և նորից մեր ազգի աչքի առջեք հանդիսացրին Դրան գործած վրդովիչ գագանութեանց զզւելի պատկերը հանդէս բերին Դրան խուսափումները՝ կատարելու ան հանդիսաւոր խոռոտումները, որ վերջին 40 տարիների ընթացքում դաշնագիրներով հաստատած են (հաւանութիւն), Երեք պետութեանց ներկայացուցիչները հաստատեցին, որ մեր երկրին հասած տեղեկագրերը չափազանցրած չեն. հիմնաւորապէս վկացւած է, որ մօտ 10,000 անմեղ, անպաշտան քրիստոնեակ մարդիկ, կանաք և երեխաց կոտորւել են, միծ մասամբ անասելի բարբարոսութիւններից լիտով. և ում ձեռքով. Սուլթանի՝ ալապէս կոչւած՝ ոստիկանութեան և զինուորների:

Այս ազդ դեռ բոլորը չեն. Տեղական հիւպատոսները նրանց (պետութեանց ներկայացուցիչներին և թղթակիցներին) հաւատացրել են, թէ հազարաւոր մարդիկ կոտորւելու մշտական երկիւղի մէջ են և պաշտպանութիւն են հաւցում. Գործն անդուսալի է, եթէ միայն քրիստոնեակ պետութիւնները չանուն հանրամարդկացին շահների և համաձան շատ զաշնազրերի չմիջամտեն և ձեռք չբերեն Դրան քրիստոնեակ հպատակների համար՝ կրօնի, պատուի, սեպհականութեան և կեանքի անհրաժեշտ ու կատարեալ ապահովութիւն. Բաւարար չի կարող համարւել ոչ մի բան, որ դրանից փոքր պակաս լինի (Ճափահարութիւններ):

Միսար Գլազստոնը բարձրացաւ. Նրան ողջունեցին հաւանութեան գոռ ցոյցերով:

### ԳԼԱԶՍՏՈՆԻ ԺՍՈՅ

#### ԽՆԴԻՐԸ ԿՈՒՍԱԿցԱԿԱՆ ՀԷ

Միլորդ դուքս, լէդիներ և չէնալմէններ. անձնապէս ես այն կարծիքի եմ, թէ նախագահի գեղեցիկ նկատողութիւնները ձեզ կատարելապէս բաւականաչափ նիւթ են տալիս համնելու այն եղբակացութեանը, որի համար և այսօր դուք այստեղ էք հրաւիրւած: Ո՞չ թէ ձեր միտինգի խնդրի մէջ որ և է լուրջ նորութիւն մտցնելու, այլ աւելի բարեկամ մարդկանց բազձանքներին ու խընդիրներին գոհացում տալու ցանկութեամբ ես հնազանդում եմ նախագահի հրաւէրին և որոշում եմ խօսել ձեր առջեւ: Իմ առաջին գործը կը լինի ընդգծել հէնց նոր արտասանած

այն խօսքը, թէ այս միտինդը՝ որ և է կուսակցութեան շահերի համար կազմած միախնդ չէ (հաւանութիւն) և ոչինչ առնչութիւն չունի կարծիքների այն տարբերութեան հետ, որ բնական և օրինական կերպով երեւում է այս ազատ երկրում բարդ գործերի մէջ և մարդկանցը բաժանում է իրարից մի քանի խնդիրների նկատմամբ։ Բայց պէտք է նկատել, որ մաքերի այդ ազատութիւնը, մի քանի խնդիրների նկատմամբ կարծիքների տարբերութիւնը աւելի է զօրացնում ժողովրդի գործունէութեան նշանակութիւնը, աւելի մեծ կշիռ է տալիս ամբողջ ազգի համաձայնութեանը այն խնդիրներում, ուր գործը ընդհանուր լուսաւորութեան և ընդհանուր լուսաւորութեան և ընդհանուր արգարութեան սկզբունքներին է վերաբերում (հաւանութիւն):

### ԽՆԴԻՐԸ ԿՈՍԱԿԵԴԱԿԱՆ ՀԷ ԵՒ ՈՀ ԷԼ ԿՐՈՆԱԿԱՆ

Միլորդ գուքս, ես ուրախութեամբ թոյլ աւի ինձ կրկնել այն, որ հէնց նոր գուք սահմանեցիք և որ բաւականաշափ որոշում է այս ժողովի նպատակը և այն մարդկանց կարծիքները, որոնք այս սրահն են ժողովել։ Ես ուրախութեամբ կրկնում եմ այդ, որովհետեւ դա հաճելի խօսք է։ Այնու ամենայնիւ ես կարող եմ ընդլայնել այդ. և կ'ասեմ, թէ որքան այս խնդիրը քաղաքական կուսակցութեան խնդիր չէ, նոյնքան էլ նա իւր մէջ կրօնական խնդրի տարրեր չունի (հաւանութիւն)։ Բոլորովին ճշմարիտ է, թէ այն կառավարութիւնը, որի գործքերը մենք դատավիետում ենք, մահմեղական կառավարութիւն է. բոլորովին ճշմարիտ է նոյնակս, որ այդ չարագործութիւններից, այդ ճնշումներից տանջւողները քրիստոնեայ նահատակներ են։ Տաճկաստանի մահմեղական հպատակները սաստիկ տանջւում են. բայց նրանց տանջանքները մի անտանելի վատ կառավարութեան հետևանքներ են, թերևս ամենավատթարը, որ գոյութիւն ունի երկրիս երեսին (լոեցէք, լոեցէք)։ Ֆակալը, որի հետ մենք այժմ գործ ունինք, ցաւ ով պէտք է ասեմ, որ պատմութեան մէջ նոր էջ է բաց անում։ Խընդիրը թոյլ օրէնքներին չի վերաբերում, որոնք վատութեամբ ոյժեն ստանում և գործադրուում։ Այդ վարչական խժդժութեանց և վարչութիւնների ոճբագործութեանց վերաբերեալ խնդիր չէ։ Նա

աւելի հեռու է գնում, դէպի այն ամենի արմատները, որոնք մարդկային կեանքին են վերաբերում՝ նրա բոլոր տարրական պայմաններով։ Բայց ես կամենում եմ ասել, որ եթէ թիւրք կառավարութեան և նրա չարազործութիւնները պախարակելու տեղ՝ մեր գործը վերաբերէր մի քրիստոնեայ պետութեան, որ ընդունակ լինէր իւր մահմեդական հպատակների վերաբերմամբ այդպիսի չարագործութիւններ կատարելու, այն ժամանակ մեր զայրոցթը աւելի նւազ չպէտք է լինէր, այլ մինչև անգամ այժմեանից առաւել մեծ պիտի լինէր (ծափահարութիւններ)։ Այն, ինչ որ մենք խօսում ենք, չենք ասում յանուն մի կրօնը միւսի հետ կապող շահերի, այլ յանուն աւելի առաջնակարգ շահերի, որոնք կապում են մարդուս մարդու հետ։

Ես վատահանում եմ կարդալ մի որոշում, որ ինձ է տւած, և որ, ինձ թւում է, հաստատուն և չափաւոր կերպով արտացայտում է այն կարծիքները, որ՝ հաւատացած եմ, թէ դաւանում է այս ժողովը։ իսկ այն ժողովը, որ այդպիսի կարծիքներ է դաւանում, ամբողջ ազգի ներկայացուցիչ է հանդիսանանամ (հաւանութիւն)։ Աւելի առաջ գնալով ես կ'ասեմ՝ թէ այն ազգը, որ այդպիսի զաղափարներ է դաւանում, ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ներկայացուցիչն է հանդիսանում։ վատահանում եմ ասել—մասամբ հիմնելով գործի հետ ունեցած անձնական ծանօթութեանս վրայ, ես պէտք է խօսեմ Հայաստանից ամենից հեռու գտնուող մի քրիստոնեայ աշխարհի կարծիքների և համակրանքների մասին։ ես ի նկատի ունիմ մեր անդր-անոլանտեան եղբայրներին, որոնք Միացեալ-Նահանգներումն են։ Վերջին դէպէերի առթիւ Ամերիկան աւելի խորը, աւելի սաստիկ է յուզւել, քան մեր երկրի սրտերը։

### Ո Ր Ո Չ Ո Ւ Մ Ն

Եւ այսպէս, մեր որոշման բովանդակութիւնը, միլորդ դուքս, հետեւեան է։ Այս միտինգը յայոնում է իւր համոզմունքը, թէ Նորին Մեծութեան թագուհու կառավարութիւնը ամբողջ ազգի կողմից՝ առանց կուսակցութեանց խարութեան բարեկամական պաշտպանութիւն կը գտնի այն ամեն միջոցների վերաբերմամբ, որ նա կարող է ձեռնարկել՝ Տաճկական Հայաստանի ժողովրդին ապա-

հովելու համար, այդ երկրի վարչութեան մէջ այնպիսի ռէֆորմներ, որոնք կեանքի, զատուի, կրօնի և գոյքի ապահովութեան երաշխաւորութիւն տային, և թէ ոչինչ ռէֆորմներ իրական չեն կարող լինել, եթէ եւրոպական մեծ պետութեանց անընդհատ հսկողութեանը չեն ենթարկւած»:

Այդ պէտք է ի նկատի ունենան Եւրոպայի մեծ պետութիւնները, որոնք կը համաձայնեն միանալ, իսկ եթէ չէ այն մեծ պետութիւնները, որոնք յաջողութեամբ միացել են և, իմ կարծիքով, այդ խնդիրը վճռելու համար հանդէս են բերել իրանց պատիւն ու ոյժը (հաւանութիւն):

Վեց թէ աւելի ամիս սրանից առաջ ինձ վիճակւեց խօսել այս խնդիրի մասին մի փոքր ժողովի առաջ, ոչ թէ հրապարակական ժողովի, այլ Հայաստանի վիճակով հետաքրքրող հայ ջենալը մէնների և ջենալմէնուհիների մի սահմանափակ թւի առջև. այն ժամանակ ես նկատեցի թէ մեր պարտաւորութիւններից մինն է զգուշանալ վաղաժամ դատողութիւններից:

Այն ժամանակ աշխարհը այն հեղինակաւոր և անկողմնակալ տեղեկութիւնները չուներ, ինչ որ այժմ յայտնի է Սասունի կոտորածի մասին. այն կոտորածի, որ յիշեց ազնիւ դուքսը և որի առթիւ ամենահեղինակաւոր վիաներից մէկը ասաց, թէ ինքը գունաթափւում է մոլորւում է (այնքան սարսափելի էր այդ կոտորածը), թէ դա նսեմանում է այն անասելի սարսափների առջև, որոնք ամեն ամիս, ամեն շաբաթ, ամեն օր կատարւում են Հայաստանի զանազան գաւառներում (հաւանութիւն): Պէտք էր խուսափել կանխակալ կարծիքներից և, կարծում եմ, խուսափեցինք: Այն ժամանակ շատ էինք զգուշանում: բայց վերջապէս անաշառ քննութիւնը աւարտւեց, այն ժամանակ յացոնւեց, որ այդ մասնաւոր դէպքում բոլորովին տեղ չուներ մի ուրիշ՝ այդպիսի՝ դէպքերում ընդհանրապէս կարեոր՝ պարտաւորութիւն:

### Զափազանցնելը մեր ոյժից վեր է

Ես խօսում եմ չափազանցելուց խուսափելու պարտաւորութեան մասին, սրբազան պարտաւորութիւն, բայց պարտաւորութիւն, որ ներկայ դէպքում անդ չունի, կամ շատ քիչ անդ,

որովհետև ֆակտերի հետ ծանօթանալու ցանկութիւն ունեցող մարդիկ կը աեսնեն, որ լեզուն ոյժ չունի նկարագրելու այն ամենը, ինչ որ կատարւում էր, որ չափազանցելլ, որքան էլ մենք այդ բանին տրամադիր լինենք ներկայ գէսլքում, մեր ոյժից վեր է (հաւանութիւն): Ծանր գործ է: Ոչինչ չէր կարող մեզ այս պատերի մէջը ժողովել. կարող էր միայն պարտականութեան ամենառժեղ զգացմունքը: Միայն դա կարող էր իմ տարիքն ունեցող մի մարդու սովիպել, որ այլ գժւարութիւններից ևս զուրկ չէ, հրաժարւել հանգստութիւնից և խաղաղութիւնից, որոնք ինձ համար մնացած երկրաշին մեծ բարիքներից վերջիններն են, որպէս զի խնդրեմ ձեզ այս խնդրի քննութեան մէջ մօննել. ուզում եմ ասել, որպէս զի հրաւիրեմ ձեզ այն սարսափելի մանրամասնութեանց մէջ մաննել, որոնք կապւած են խնդրի հետ:

Ես չեմ աշխատիլ, որ ձեզ մի սարսափելի դաշտ դուրս բերեմ: Բայց, տիկիններ և պարոններ, ես դիմում եմ, որ ձեզանից իւրաքանչիւրը կ'աշխատի, որքան իւր գրութիւնը թոյլ է տալիս, ծանօթանալ նրանց հետ (լսեց էք, լսեց էք): Գիտեմ, երբ ասում եմ, թէ այսպիսի գէպքը բացասում է չափազանցելու ամենայն հնարաւորութիւն, ասլա այնպիսի ընդարձակ սահման եմ որոշում, որ մեծ մասամբ ճշմարիտ չէր լինիլ, որ սովորական բոլոր հանգամանքներում չէր թոյլատրել. բայց նրանք, որոնք իմ հրաւէրը կամ դրա մինչեւ իսկ մի մասը կը կատարեն, կը անանեն, որ ցիրաւէ բառերը բաւականաչափ ուժեղ չեն սարսափն արտայացելու համար (հաւանութիւն): Որպիսի վկաններ պիտի այսուեղ կոչենք: Ես տրամադիր եմ ասելու, որ մեր ստանալի վկայութեանց վերաբերմամբ քիչ նշանակութիւն ունի այն, թէ որպիսի վկաններ կը կոչենք. Բոլոր վկանները համաձայն են: Այն ժամանակ, որի մասին նոր խօսեցի, 6-8 ամիս սրանից առաջ՝ բոլորը մասնաւոր վկաններ էին: Նրանցից յետոյ՝ թէւ մենք չենք տեսել հասարակական վաւերագրերը, բայց դրանցից գիտենք, որ հասուատւած և ստուգւած են այն բոլոր տեղեկութիւնները, որոնք այն ժամանակ հազորդւեցան և որոնցից մեր ազգի երակների մէջ արիւնն էր սառչում: Այդ տեղեկութիւնները չափազանցրած չէին. չհերքւեցան, չփոփոխեցան, չկրծառաւեցան նրանք. բայց հասուատւեցան իրանց

կատարելութեամբը, իրանց սարսափելի ամբողջ էութեամբը, իրանց բոլոր զգւելի մանրամասներով:

Կողոպուտ, սպանութիւն, բռնաբարութիւն եւ տանջանք

Այսուղ ես կարող եմ ասել, որ մեր գործը միայն եւրոպացի վկաների հետ չի լինիլ: Այս գործում մենք և' ամերիկացի վկաներ ունինք: Եւ ամերիկացի վկաների ցուցմունքները նոյնն են, ինչ որ եւրոպացիներինը: Ամեն մեկը դիմէ, որ Արևելքի գործերում Ամերիկան սեպհական յուրջ շահեր չունի: Աւսոի և նա հանդէս է գալիս անսպազմոն ազնիւ և անկասկածելի կերպով: Եւ այն, ինչ որ նա է ասում, կրկնակի ոյժ ունի: Դուք կարող եք իմ յարգելի բարեկամ կանոնիկոս Մակ Կոլի ցուցմունքներն ստանալ: Պատմերիկացիներից մեկն է (Ժաֆահարութիւն): Ես կարծում եմ, նրանք կատարելապէս համաձայն են միմեանց, նրանց մէջ տարածայնութեան նշոյլ անդամ չկաց: Ես պիտի խօսեմ այդ վկաներից վերջինի մասին, զոքառը Դիլլոնի (հաւանութիւն), որի անունը երեք չորս օր առաջ երևաց «Contemporary Review», հանդիսում մի անսովոր երկար յօդածի տակ—ահ, և լաւ պատճառ կար յօդածը սովորականից դուրս երկարացնելու (Ժաֆահարութիւն):

Դուքէ դուք կը հարցնէք, ինչպէս և ես եմ հարցըել, թէ ովէս այդ դր Դիլլոնը: Ես կարող եմ նրան սկարագրել: Դիլլոնը մի լաւ մարդ է, որ, իբրև «The Daily Telegraph» լրագրի յատուկ թղթակից, սրանից մի քանի ամիս առաջ մեծ նեղութիւններով, շատ ճիր թափելով, կեանքը վտանգի ենթարկելով (լսեցէք, լսեցէք)՝ Տաճկատան մտաւ, շորերը փոխելով՝ բռն Հայաստան անցաւ, այնպէս որ կարողացաւ բոլորովին տիրապետել ֆակտերը (հաւանութիւն): Նա նաև տպագրեց իւր ձեռք բերած փակտերը, առանց իւր դատողութիւնները հաղորդելու: Ես կարծում եմ, այդ ֆակտերն առաջին անգամ նա ներկայացրեց աշխարհին, որովհետեւ գործողութեանց զաշուր նա ամենից շուտ հասաւ. այդ ֆակտերը բոլորն ստուգւեցան և հաստատեցան երեք պետութեանց՝ Անգլիացի, Ֆրանսիացի և Առուսիացի ներկայացուցիչների քննութեամբ (հաւանութիւն): Ասում եմ, որ նա իւր կեանքը

վտանգի ենթարկելով հաւատարմութիւն ձեռք բերաւ. և այսաեղ նա մի հաշիւ է տալիս, որ ճշմարտութեան բոլոր նշաններն ունի, բայց որ դուք դժօպազգաբար անհաւանական կ'անւանէք. անհաւանականութիւններից մի քանիսը հաւանական են այս օտարօտի և չար աշխարհում. բայց և այնպէս հաւատալ չի լինում; թէ այդպիսի այլանդակ, դիւական չարութիւնները կարող են մարդկային պատկերի մէջ մարմնանալ այնպէս, ինչպէս իւր պատմածների մեծ մասի մէջ գործադրում է զոքութիւնը:

Ես այդ պատմութիւնները մանրամասնորէն առաջ եմ բերիլ: Բայց մի քաղւածք կը հանեմ, որ, եթէ կարելի է այսպէս ասել, սկզբունքի քաղւածք կը լինի: Եւ այդ պատմութիւնները մանրամասնաբար չեմ ներկայացնիլ. բայց կ'ասեմ, թէ երբ սկսէք դուք կարդալ, կը համոզւէք, որ ճշմարիտ էին իմ արտասանած խօսքերը, թէ մեր գործը կառավարութեան չարագործաւթիւնների վերաբերեալ ընդհանուր և սովորական խնդրի հետ չէ, կառավարութեան պակասութիւնների հետ չէ: Մեր աշքի առջևն ունինք մի աւելի ընդարձակ խնդիր, որ՝ տւելացնում եմ ձեզ և մեզ վրայ աւելի ծանր պարտաւորութիւններ է զնում: Այդ նշանաւոր յօդւածի ամբողջ բովանդակութիւնը, որ ինչպէս ասացի՞ համաձայնում է միւս վկանների ցուցմունքների հետ, չորս սարսափելի բառերի մէջ է ամփոփում: Կողոպուտ, սպանութիւն, բւնաբարութիւն և տանջանք: Խւրաքանչիւր Փակտ հաստատում է այդ սարսափելի բառերից մէկի, միւսի կամ հէնց բոլորի վրայ: Կողոպուտն ու սպանութիւնը դուք առհասարակ բաւականաշափ չարիք կը համարէք. բայց կողոպուտն ու սպանութիւնը անմեղ բաններ են առևանգողների և տանջողների այն գործքերի առջե, որոնք նկարագրւած են այդ էջերում, որոնք յիրաւի եղել են՝ ինչպէս վկայւած է (հաւանութիւն): Ես կատարում եմ խօսքս. Փակտերի մանրամասնութեանց մէջ չեմ մշտնում: Այժմ ես կը խօսեմ, թէ ովքեր են այդ չարագործութեանց հեղինակները: Բոլոր սովորական դէպքերում, երբ աշքի առաջ ունինք յանցանքի օրինակներ, մինչեւ իսկ ամենասարսափելի յանցանք: Ներ—ինչպէս օրինակ՝ այսօրւայ լրագրները հաղորդում են սղանութեանց այն տիսուր դէպքը, որ Զինաստանումն է կատարւել, — մենք առաջին անգամից ասում ենք. «այն, դժբախտաբար բոլոր»:

երկիրներում կան չարագործներ, աւազակներ և մարդասպաններ։ Բայց այդ տեսակից չէ այն ժողովուրդը, որի գործերը մենք քննում ենք այժմ։ Այսուեղ մենք գործ չունինք այն տարրի հետ, որ համայնքի վտանգաւոր դասակարգն է կազմում։ Զեղ չեն հրաւիրում դրանց գործերը քննադատելու։ Հայաստանում կատարւած չարիքները կ. Պոլսի կառավարութեան և նրա գործակալների արարքներն են (հաւանութիւն)։ Այսուեղ մի չարագործութիւն չկայ, որի համար կ. Պոլսի կառավարութիւնը պատասխանառու չլինի։ Ո՞վքեր են նրա գործակալները։ Թոյլ տւեք, որ կարճ ասեմ։ Նրանք երեք կարգի են բաժանում։ Առաջին՝ վայրենի քիւրդերն են, որոնք դժբախտաբար հայերի հարեւաններն են, հայերի, որոնք ներկայացուցիչ են ամենահին, լրւաւոր և քրիստոնեաց ազգերից մէկի։ աշխարհի ամենախաղաղ, ամենաաշխատահեր և ամենախելօք ազգերից մէկի հարեւաններն են (հաւանութիւն)։ Այդ քիւրդերը վայրենի և կատաղի ցեղեր են։ Բայց ձեր ճառի մէջ, միլորդ դուքս, մի խօսք կար, որ ես կը կամենացի փոփոխել։ Այդ այն է, որ դուք ասացիք, թէ սուլթանն է կաղմակերպել այդ քիւրդերին։ Իմ կարծիքով նրանք ոչ մի կողմով կուղմակերպւած չեն. այսինքն՝ նրանց մէջ անկարելի է աւելի կազմակերպութիւն գտնել, քան աւազակաց խմբերի մէջն է։ Նրանք՝ լոկ աւազակային խմբեր լինելով, ուրիշ կազմակերպութիւն չունին։

### Սուլթանի զինուրները

Սուլթանն ու կ. Պոլսի կառավարութիւնը սովորական կարգով մարդիկ են հաւաքել, հեծելազօր կազմել և ապա ազատ-արձակ բաց թողել սուլթանական զինուրի իրաւունքով՝ հայ ժողովրդին կողուղելու և կոսորելու (հաւանութիւն)։ Եւ այսպէս՝ այդ սոսկալի գործողութեանց մէջ առաջին գործակալները քիւրդերն են։ Դրանցից յետոց գալիս են տաճիկ զինուրները, որոնք իրանց շարագործութիւններով ոչնչով պակաս չեն քիւրդերից։ Երբորդ կարգի գործակալներն են թիւրք կառավարութեան խաղաղ աստիճանաւորները, ոստիկանութիւնը և հարկահաւաքները։ Եւ այդ բոլոր դասակարգերի միջև ըստ երեսյթին գոյութիւն ունի մի մահաբեր մրցանք, որ գեղեցիկ հնարաւորութիւն է գանում նրանց

դժոխացին գործողութեան մէջ արտայափոելու։ Բայց նրանց գլխին կանգնած են նրանցից աւելի պատասխանառու՝ թիւրք կառավարութեան աստիճանաւորները (հաւանութիւն)։ Եթէ աչքի անցնեք դոքառը Դիլոնի յօդւածը, կը տեսնեք, որ նա ինքը թոյլ է տալիւ հերքել, եթէ միայն իւր հաղորդածը հաստատ չէ կամ ծշմարիտ չէ։ Նա տալիս է անունը, տեղը, օրը և բոլոր հանգամանքները. դրանով էլ հնարաւորութիւն է տալիս թիւրք կառավարութեանը հետեւել, բոնել և հասարակական դաստաստանին ենթարկել։ Այդ յօդւածի առթիւ դուք երբէք չէք լսիլ թիւրք կառավարութեան պատասխանը։ Թերեւս համարձակութիւն է այսպէս ասել, բայց ես հաւատացած եմ, որ դուք երբէք նրանց կողմից մի պատասխան չէք լսիլ Դիլոնի հաղորդածների առթիւ, որոնք հիմնած են նրա անձնական փորձի վրայ, որոնք հրապարակ են հանւած իրանց բոլոր մանրամասներով. նրանց կողմից չէք լսիլ մի պատասխան, որ փորձէր հերքել այն նիւթը, որից Դիլոնը իւր շէնքն է կառուցել ի տես ամբողջ աշխարհի։ Խնչպէս ասացի, ես մոտակիր չեմ այդ մանրամասնութիւններով ձանձրացնել ձեզ. բացց դր. Դիլոնի աշխատութիւնից ես մի քաղւած եմ ներկայացնում, որովհետեւ այդ իրերի գրութեան մասին ձեզ շատ պարզ գաղափար կը տայ:

### Քուրոյի ցուցմունք

Գործը Մոնախոց անունով մի մարդի և վերաբերումն Սոնոխգոն քիւրդ է։ Նա աչքի ընկնող մի չարագործ է եղել. ես նախ կը հաղորդեմ ձեզ հայերի ճնշումների մասին մի պատմութիւն՝ նրա սեպհական բառերով. իսկ յետոյ՝ եթէ կը կամենաք, նրա կեանքի հետ կը ծանօթանանք։

Դոքառը Դիլոնը դրան էրզբում է հանդիպել՝ մահւան դատապարտած. ի նկատի ունենալով, որ նա մինչեւ այժմս, ասում ենք, տիպական մարդ է, ներկայացուցիչ իւրանման մարդկանց մեծ բազմութեան, Դիլոնը որոշել է ձեռք գցել նրան. և փողի ոյժով՝ շնորհիւ իւր կողմից գործ գրած մեծ ճարպիկութեան, նա կարողանում է Մոնախոցի հաւատարմութիւնը ձեռք բերել։ Մենք աստիճանաբար կը մօտենանք այդ ինդիրի լուծմանը, որովհետեւ մի կող-

մից, ինչպէս ասացի, նու յայտնի չարագործ է եղել, իսկ միւս կողմից մահւան դատապարուած։ Այդ կարծել է տալիս, իբր թէ Օսմաննեան պետութեան մէջ մի արդարագատութիւն կայ։ Դուք ասաիմանաբար կը տեսնէք, թէ ի՞նչ արդարագատութիւն է այդ։

Ծննդինգօն՝ հայերի վերաբերեալ իւր գործողութեանց այս տեղեկագիրը ինքն է տւել Դիլոնին։ Նա ասել է. «Նրանից յետոց մենք մեծ գործեր կատարեցինք, այնպիսի գործեր, որոնք սասներկու պետութեանց կը զարմացնէին, եթէ նրանք այդ առթիւ բան լսէին։ Դուք տեսնում էք, որ այդ ջենումէնը Եւրոպացի կազմակերպութեանը տեղեակ չէ, ուզում է ասել՝ վեց պետութեանց։ Բայց այդ կարեւոր սխալ չէ. «Պործեր, որոնք կը զարմացնէին տասներկու պետութեանց, եթէ նրանք այդ մասին բան լսէին. մենք յարձակւեցանք դիւզերի վրայ, կոտորեցինք մարդկանց, կողոպուցինք տները, հաւաքեցինք փող, գորգեր, ոչխար և կանացք»։ — (ուշ դարձրէք, թէ կանացքը անսպատիւ կերպով ինչպիսի առարկաների հետ են դասւում և կը հասկանաք նրա նշանակութիւնը). անցորդներից փող, գորգեր, ոչխար և կանացք յափշուակեցինք։ Այնքան մեծ էին մեր գործերը, որ ամենքը հէնց ազդ մասին էին խօսում։ Յիրաւի՛ այս մի նշանաւոր տեղ է։ Այդ մարդը փոխանակ խղձի խայթ կամ ամօթ զգալու, փոխանակ հերքելու կամ մեղմացնելու իւր կատարած գործերը, նրանց մասին այնպէս է խօսում, ինչպէս կը խօսէր մի հին ասպետ մրցանքներում ցոյց տւած իւր քաջութիւնների մասին։ Նա հիանում է իւր գործերից։ Նա փառք է որոնում, փառքի արժանի է համարում նրանց։ Նա հպարտութեամբ ասում է, թէ ամենքը իւր գործերիցն էին խօսում։ «Ան, բայց դուք կարող եք լսել, և ոմանք հրապարակ են հանել այդ արդարացումը, թէ հայերը թիւրքերի դէմ ապատամբել են։ Կրան այն է, եթէ միայն այլտեղ իմաստ կայ, որ մի քանի դէսկերում, երբ հայերը զէնք են ունեցել, փորձել են պաշտպանել իրանց տները, իրանց սեպհականութիւնը, իրանց կանանցն ու երեխաններին (հաւան ութիւն)։ Տեսէք բանի էութիւնը։ Թիւրքաց կառավարութիւնը զինաթափ է արել հայ ժողովրդին, բայց լեռներից դուրս է կանչել սուլթանական հեծելազօր, վայրենիներ և բարբարոսներ։ Դոկտոր Դիլոնը նորանից հարցնում է. «Ընդդի-

մաղրնմ էին արդեօք հայերը, երբ դուք յափշտակում էիք նրանց կանանցը, նրանց հօտերը։ Պատասխան. — Քիչ անգամ, նրանք չեն կարող. նրանք զէնք ունեին։ Եւ նրանք գիտէին, որ եթէ կարողանան էլ մեզանից մի քանիսին սպանել, դրանից իրանց օգուտ չի լինիլ, որովհետև միւս քիւրզերը կը գան և վրէժ կառնեն։ Թիւրքերը ասում են նրանց, իսկ մենք փող ենք ցանցանում և աւարդան քիւրզեր, որոնք հողի սկառք ունին. բայց թիւրքերը նրանց կեանքն են ուզում։ Ահա սուլթանի հեծելազօրի անդամներից մէկի ցուցմունքները, որ վկացում է թէ քիւրդը թշնամի է հայերին և թէ թիւրքը՝ իւր մեծահոգի զգացմունքներով գործելու ընդարձակ ասպարեզ է տալիս նրանց։ Պատկերն ամփոփելու համար ես դարձեալ մի համառօտ քաղլածք կը կարդամ։ Ասացի, որ այդ մարդը մահւան էր զառապարտւած։ Դոկ. Դիլոնը նրան հարց է առաջարկում օգուք հայերի հետ շատ խիստ էք վարւել. նրանց շատ տներն էք կողողտել, շատ ու շատ մարդկանց կեղեքել ու կոտորել էք. երեխ այդ պատճառով էք աշդախի ծանր դրութեան մէջ ընկեր։ Լսեցէք նրա արհամարհական եղանակով տւած պատասխանը. — Եմ բանտարկութեանս հետ այդ ոչինչ կապ չունի։

Դուք լսեցիք նրա շարագործութեանց նկարագիրը. շարագործութիւնները նրա բանտարկութեան հետ կապ չեն ունեցել։

«Հայերին կեղեքելու, կոտորելու համար ես շեմ պատճեիլ. այդ բաները ամենքս ենք անում. քիչ է պատահել, որ ես հայ սպանեմ. սպանել եմ միայն այն ժամանակ, երբ նրանք ընդդիմացել են։ Բայց հայերն ինձ մատնեցին, և ես բւնւեցայ։»

Զարմանալի չէ այս. հայերը նրան մատնել են, և նա բոնւել է։

«Ահա ես ինչ եմ մտածում. ինձ մահւան են դատապարտել, որովհետեւ մի թիւրք պանդոկատիրաջ վրաց եմ յարձակու ել ու կողովունել, և բոնաբարութեան եմ ենթարկել մի քիւրդի կնոջ, որ այսուհեղ՝ էրզբում է, բայց ոչ թէ հայերի պատճառով. Ի՞նչ են նրանք որ նրանց պատճառաւ ես տանջւեմ։»

Եւ այսակս՝ իմ կարգացած քաղլածքը լոյս է սփոռում այդ ամբողջ նորի վրաց։ Այդպէս են այն ֆակաերը, որոնք տեղի են ունեցել Հայաստանում։

## Թիւրքիայի ղիւանագիտական խաղերը

Կ. Պոլսում ի՞նչպէս են ընդունել այդ ֆակտերին վերաբերեալ տեղեկութիւնները։ Եթէ այս քառասուն տարւայ ընթացքում որ և է հիմք կար վարդագոյն յոյսեր ունենալու Թիւրքիայի վերաբերմամբ, ապա պէտք է, որ նա իրազործւէր, և Թուրքիան ինքը պէտք է որոնէր և մերկացնէր չարագործներին։ Ընդհակառակը՝ ստացւած տեղեկութիւնները ամենից առաջ հերքւեցան։ Օսմանեան կառավարութեան կողմից սա նոր միջոց է։ Միւնոյնն էր Բոլղարիայում 1876 թ. բոլղարական այն ոճրազործութիւններից յետոց, որոնք վերջը հաստատ եցան Անդլիայի կողմից ուղարկւած լորդ Կրոմէրի անմիջական հետազոտութիւններով։ Թիւրքաց դեսպանը իւր կառավարութեան կողմից սպաշտօնական թուղթ սպագրեց և տարածեց. այդ թղթի մի օրինակը կայ ինձ մօա, որով բոլորովին հերքում էր բոլղարական ձնշումները, ցոյց էր տալիս թէ բոլղարոները մի փոքրաթիւ ազգ են, որին պէտք է կարգի բերել, թէ ամբողջ գործը ստութիւն է։ Խսկապէս ստութիւնը մի զէնք էր, որ այն ժամանակ բանեցնում էր թիւրք կառավարութիւնը. և ստութիւնը նրա ձեռքում սովորական զէնք է։ Այդ զէնքը գործադրւեց նաև և ներկայ դէպքում։ Բայց պետութիւնները գիտեն, թէ ում հետ գործ ունին. և Ֆրանսիայի, Անդլիայի և Ռուսիայի կողմից դելեգատներ նշանակւեցան, անկողմնակալ դելեգատներ։ Դուք գիտէք, որ վաւերագրով հաստատեցան բոլոր ամենավատթար մեղադրանքները։ Խսկ երբ այդ սոսկալի գազանութիւնների մասին։ Պոլսում իմացան, Օսմանեան կառավարութիւնը ցանկացաւ չարիքները ստութեամբ, խորամանկութեամբ և յետաձգումներով սքօղել, (հաւանութիւն)։ Յանձնաժողովի տեղեկագիրը ներկայացնելուց այժմ արդէն ամիսներ են անցել։

Բայց և մինչև ներկայացնելը ամիսներ էին անցել. և ես ամենաին չգիտեմ; թէ ում մեղադրեմ; արդեօք կառավարութեամնը, թէ յանձնաժողովին։ Երբ յանձնաժողովը իւր գործն աւարտեց, մենք հետզհետէ տեսանք, որ նախ սուլթանն ինքը մասնախումբ է կազմում պահանջները քննելու. յետոյ չի կամենում պահանջներն ընդունել. ապա ընդունում է մէկը և մերժում միւսը։ Խսկ ի՞նչ են այդ

ինպրին վերաբերեալ՝ մեր ունեցած վերջին տեղեկութիւնները՝ ի՞նչ յոցսեր ե. հիմքեր ունինք՝ նրանից մի բան ստանալու: Նախ ես պէտք է յիշեմ այն դաշնագիրները, որ յիշատակեց իմ բարեկամ դուքսը: 1856 թ. դաշնագիրները, եւրոպական պետութիւններին իրաւունք են տալիս՝ այժմ բոլորովին պարզ և անվիճելի իրաւունք, Հայաստան մտնել և կատավարութեան գործը թիւրքերի ձեռքից առնել (հաւանութիւն), որովհետեւ սուլթանը խախում է այն հանդիսաւոր խոստումները, որ Եւրոպացին է տւել և որոնցով կառւած է նա: Բացի դրանից մենք առանձին իրաւունք ևս ունինք: 1878 թիւն Անդիհան նրա հետ դաշնագիր է կազմել. այդ դաշնագրի իմաստով Անդիհան պարտաւորւել է Հայաստանում իրագործել այն բոլոր ռէֆորմները, որ մի մասն անգամ եթէ իրագործւած լինէր, անհնարին կը դառնացին այն սարսափելի դէպքերը, որոնք մեր աչքի առջև են: Այդ դաշնագիրը իրաւունք էր տալիս Անդիհացին իւր գրաց առնել այդ չարիքները վերջացնելու գործը, աներկմիտ, վճռական պատճառներ դնելով, որ թիւրքաց կառավարութիւնը վերջ դնի այդ ամենին: Այժմ թոյլ առէք յիշեցնել այն դաշնագիլները, որոնք իրաւունքներ են տալիս: Իրաւունքների հետ՝ դրանք և պարտաւորութիւններ են զնում: Եթէ դուք ընդունում էք թիւրք կառավարութեան խօստումներն ու հաւաստիացումները, թէ նա չարագործութիւնները կ'ոչնչացնի և քաղաքական ու կրօնական ազատութիւն կը մտցնի, և անունում էք, որ նա խոստմազանց է գտնուում, ապա ինքներդ պարտաւոր էք ձեր սեպհական միջոցներով խոստումների իրագործումն ապահովել:

Ի՞նչ տեղեկութիւններ ունինք այժմ մեր առջև: Վերջին տեղեկութիւններից իմանում ենք, որ սուլթանը զարմացել է և պետութեանց պահանջները սահմանափակ է համարել. նա գտնում է, որ իւր վարչութիւնն ընդհանրապէս միւս նահանգներումն էլ անկատար է և ոչ միայն բացառապէս Հայաստանում: Ես հեռագրական դիմումներ ունիմ թիւրք պետութեան զանազան կողմերից. գանգատուում՝ են այնպիսի թշւառութիւնից, որոնք մեծ կամ փոքր չափով նման են Հայաստանի դրութեանը: Բայց ես, ի՞նչ պէս առաջ ասացի, կարող եմ յանձն առնել միայն այն գործը, որ ստուգւած

է ուշադիր քննութեամբ։ Առը կայ, որ սուլթանն ասել է, թէ ձեր պահանջած այդ ուժվորմները ամեն տեղ կը մոցնենք. բայց ինչ նշանակութիւն ունի այդ. այդ նշանակում է թէ սուլթանը կ'սկսի մի շարք քննութիւններ կառարել և յետոյ՝ երբ զէպքը կը գայ՝ բոլորովին կը թողնի ինսպիրը։ Թոյլ տէք այժմ մի փոքր լուսաբանել այդ կէտք, օրինակ բերելով մեր երկրի կառաւարութիւնը՝ այժմեան, թէ մի այլ ժամանակի՝ այդ միւնոյն է։ Ենթադրենք, թէ մենք նկատել ենք, որ պարլամենտական որոշ ակտից նշանաւոր շարիքներ են դոյսութիւն ստանում. և հասել ենք այն եզրակացութեան, թէ անհրաժեշտ է այդ ակտը փոփոխել. դիմում ենք համայնքների պալատին կամ կառավարութեանը և ուժվորմներ ենք խնդրում։ Եւ համայնքների պալատը կամ կառավարութիւնը պատասխանում են մեզ. «Ո՛հ, ձեր խնդիրը շատ քիչ է. միայն այդ օրէնքը չէ, որ անկատար է»։ Դա օտարոդի և հրէշտառ է թւում. բայց այդ ամեն օր պատահում է Օսմանեան կառավարութեան երկիրներում, երբ այդ կառաւարութիւնը նեղ դրութեան մէջ է գլունում և սահսրած է լինում քողարիկ այն չարիքները, որոնց հմանները մեր աշքի առջևն են։

Այդ առաջին տեղեկութիւնն է, որ մենք ունեինք. մէկ թէ երկու օր սրանից առաջ նոր տեղեկութիւն հասաւ, թէ Օսմանեան պետութիւնը մուագիր է Հայաստանին վերաբերեալ պահանջները մերժել, բայց ցանկանում է զինաթափ անել քիւրդերին։ Լաւ, դիցուք դուք հաւանում էք այդ և ասում. «Բարի, մենք չենք կարող մեր ցանկացածը ձեռք բերել. ուրեմն պէտք է մի մասով բաւականանանք։ Քիւրդերին զինաթափ անելլ ամբողջը չէ, բայց այդ ամենակարեւոր մասն է. ուստի և այժմ առանց եւ բոպական վերահսկութեան բաւական լինինք»։ Լաւ. բայց ինչ կը լինի հետեւանքը։ Հաւանականաբար մի 50 կամ 100 քիւրդեց զէնքերը կ'առնեն և կը յանձնեն ուրիշ, աւելի չարագործ քիւրդերին։ (Հաւանութիւն)։ Ես կարծում եմ, թէ Օսմանեան կառավարութիւնն ինքը շատ լաւ է հասկանում, որ բանը խոստանալը չէ, այլ նրանց կառարելու երաշխաւորութիւնը։ (Հաւանութիւն)։

Բարի. ալսօր, ջննուլմէններ, նոր տեղեկութիւն կայ, որ ես հէնց նոր կարգացի «Manchester Guardian» լրագրում, (Զգիւնեմ;

միւս լրագիրներումն էլ կայ, թէ ոչ), պետութիւնները, զայրացած թիւբքի ճարպիկութիւններից, վճռել են վերջ դնել այդ շափազանց ձգձգուող խնդրին: (Հաւանութիւն): Նրանք կատարեալ իրաւունք և իշխանութիւն ունին մի կոմիսար ուղարկել Հայաստան և յանձնել նրան՝ սուլթանի անունով երկիրը կառավարելու իրաւունքը: Այդ ընդարձակ իրաւունքները մտադիր են տալու մի ջենալմէնի, որ անգլիացի է, որ Թիւբքիացի քրիստոնեաներին ջերմ՝ համակրող ազգութիւններին չի պատկանում: դա ֆոն Կալլայն է, որին յանձնւած էր Բոսնիացի և Հերցէգովինացի մէջ ոէֆորմներ մտցնելու գլժւարին գործը և որ ամենասպառաւոր անուն վաստակեց՝ այդ գժւար գործը կառարելով: Նա ունգարացի է. և Ունդարիաց մաջաւները առանձին համակրանքներ չունին դէսի Թիւբքիացի քրիստոնեաց ազգերը: Իսկ ինչ նշանակութիւն ունի այդ: Նա լսւ մարդ է, իւր կոչու մը հասկանում է, պատրաստ է ծառացել այդ կոչմանը. ուրեմն և մենք մերոնցից մէկին չենք առաջարկել՝ գործերի լաւ ընթացքի համար:

Լէյիներ և ջենալմեններ. ես հիմք չունիմ ձեզ հաւատացնելու, թէ այս խօսքերը ճշմարիտ են. բայց ես կը խնդրէի Աստուծուց, որ նրանք ճշմարիտ լինէին: «Manchester Guardian» լրագիրը իւր կողմից մի բանաւոր նկատողութիւն է անում, թէ Շրբանք շափազանց լաւ են, ուստի դրանց ճշմարտութիւնը կասկածելի է»: Սակայն ինչ և իցէ՝ մենք ստոյգ տեղեկութիւններ չունինք, մեր կառավարութիւնը, ըստ երեսոյթին, չի կարողանանում, կամ գուցէ կարեոր չի համարում իսկական տեղեկութիւններ տալ:

### Երեք առաջարկութիւն

Մեղանից թագցնում էին այդ բաները. պէտք է ենթադրել, թէև ես չգիտեմ, որ նախորդ կառավարութիւնը բաւական հիմունքներ ուներ թագցնելու: Ես կարծում եմ, դեռ ժամանակը չի հասել այդ խնդրի մասին դաստողութիւններ անելու. թէպէտ և տեղեկութիւններ չենք ստացել, որոնց վրաց կարողանացինք հիմնել, բայց կան ֆախեր, որոնց նմաններն այսօր քննեցինք և առհասարակ քննել են զանազան ձեերով, որոնց վրաց կատարելապէս կարող ենք հիմնել: Ես կ'ասեմ, որ ամբողջ դրութիւնը կարելի է

երեք կարճ նախաղատութեանց մէջ ամփոփել։ Ես չգիտեմ, թէ այդ երեքից որին պէտք է առաւել կամ նւազ նշանակութիւն տալ։ Ինձ թւում է, այդ ամենը և դրանցից իւրաքանչիւրն էլ անպայման անհրաժեշտ են։ Առաջին նախաղատութիւնն այս է. զուք պէտք է պահանջէք միայն ամենաանհրաժեշտը, այն, որ համաձայն է մինչև այժմ եղած առաջարկութիւններին։ Առանց տատանւելու կասեմ, տիկինննը և պարոններ, որ այս հարցի վճռելու ամենապարզ և հասարակ միջոցն է թիւրքին ասել (եթէ կարող ենք ասել)։ Հայաստանից հեռացիր (բարձրաձայն հաւանութիւն)։ Նա իրաւունք չունի այնոեղ մնալու. և դա կը լինէր հարցի ամենագեղեցիկ լուծումը։ Բայց անհաւատալի է, թէ Եւրոպան կամ նոյն իսկ երեք պետութիւնները համաձայնութեամբ այդ կէտին գիտէին։ Ուստի հրաժարւենք այն ամենից, որ անհրաժեշտ չի համարւում։

Այժմ անցնում եմ միւս երկու նախաղատութիւններին։ Եղանցից առաջինն այն է, որ զուք չպէտք ընդունէք ոչ մի թիւրքական խոստում (Լ.ս եց էք, լս եց էք)։ Նրանք դրականապէս, անպայման կերպով արժէք չունին. աւելի ևս վատ, նրանք կարող են շատերին խարել, որոնք, զործին անուեղեակ և անփորձ լինելով, բնականաբար կարող են ենթադրել, թէ երբ խոստանում են, ուրեմն ցանկութեան պէս մի բան կայ կատարելու։ Ի նկատի ունեցէք, որ ոչ մի ծրագիր նշանակութիւն չունի, եթէ, բոլորովին անկախ թիւրքաց խոստումներից, հիմնած չէ էական երաշխաւորութեան վրաց (Ճափահարութիւն)։

Մի ուրիշ խօսք ևս կայ, որ պէտք է արտասանեմ. ահա նաև մի՛ սարսափէք այն բառից, որ պէտք է մոցնեմ ներկայ ճառի մէջ. մի բառ, ո՞՝ կարծում եմ, իրերի սովորական գրութեան ժամանակ պէտք է մերժւած լինի գիտլումատիկական գաստղութիւնների միջից, այդ բառն է ստիպումն (εορτεῖον)։ Սահմումն մի բառ է, որ լաւ են հասկանում Կ. Պոլսում. մի բառ է, որ թանգ է գնահատում Կ. Պոլսում։ Կա մի ազգու գեղ է (Ճիծաղ), որ միշտ իւր նպատակին է համառմ, երբ այնոեղ զործադրում է։

Պարոններ, ես այդ բառը չէի զործածիլ, եթէ անձամբ, անմիջական փորձով համազած լինէի, թէ ինչպէս են թիւրք կտ-

ռավարութեան գործողութեան եղանակները։ Ես ասում եմ, նախ համոզւեցէք, որ ձեր պահանջը լաւ է. և ապա վճռեցէք, թէ նա պէտք է իրագործի (Հաւանութիւն)։ Քերականութիւնը կարող է այստեղ մեզ պէտք գալ։ Ցիշեցէք, որ երբ Կ. Պոլսում «հարկաւոր է» բառն է հնչում, այն ժամանակ օդն է ցնդում, ոչ այն նշժը, ոչ այն նշանակութիւնն է ունենում, որոնք յատուկ են նրան ուրիշ տեղերում։ ընդհակառակը այդ բառի քոյր կամ եղբայր և պէտք է բառը կատարելապէս հասկացւում է այնտեղ (Հաւանութիւն)։ Եւ դրական փորձերով հաստատւած յայտնի իրողութիւն է, որին վկայ է Եւրոպայի քարտեզը, որ բառի ժամանակին և խելացի գործածութիւնը երբէք առանց հետևանքի չի մնացել։ (Հաւանութիւն)։

Զենտլմէններ, ես պէտք է ձեզ յայտնի կացուցանեմ, որ իսկապէս մենք մի շատ կրիտիկական դրութեան մէջ ենք ընկել։ Եթէ Եւրոպայի երեք մեծ պետութիւնները, որոնք կառավարում են աւելի քան 200 միլիոն հոգի, ուր ութը կամ տասն անգամ աւելի ժողովուրդ կայ, քան Թիւրքիայում, որոնք քսան անգամ աւելի հարուստ են, քսան Թիւրքիան, որոնք յիսուն անգամ աւելի ազդեցութիւն և ոյժ ունին քան Թիւրքիան և որոնք միացել են ողջ աշխարհի առջև այս դրծում, ասում եմ ձեզ, եթէ նրանք ետքաշւեն սուլթանի և թիւրքաց կառավարութեան անհիմն դիմադրութեան առաջ, այն ժամանակ նրանք կը խայտառակեն իրանց ամբողջ աշխարհի առջև։ Պարտաւորութեան իւրաքանչիւր մի կէտ համապատասխանում է արժանապատռութեան կէտին։ Դուք, միլորդ դուքս, ինքներդ արտասանեցիք մի բառ, որ զժբաղդաբար անտեղի չէ այս դէպքում, զննում բառը։ Մի ընդհանուր համոզմունք է տարածւած, որ թիւրք կառավարութեան վերջին գործողութիւնները Հայաստանում յատկապէս, բայց ոչ բացառապէս, հիմնւած են այդ պէտութեան քրիստոնեաններին բնաջինջ անելու ազատ որոշման վրայ։

### Թիւրք կառավարութեան կողմապահութիւնը

Ես կը ցանկացի, որ այս ճշմարիտ չլինէր. թէև միևնոյն ժամանակ պէտք է ասել, որ ակնյացտնի ապացոյցներ կան, թէ բոլորը

ճշմարիս է (լսէցէք, լսէցէք): Եւ ամենամեծ ապացոյցը, որ կարող է վկայել այդ մասին, հետևեալն է: Թիւրք կառավարութեան կառարեալ կողմնապահութիւնը: Իմ կեանքի միջոցին եղան շրջաններ, երբ Թիւրքիան կառավարում էր ազնիւ և ընդունակ անձնաւորութիւններով. մի երեսուն տարի սրանից առաջ դուք կարող էիք հաւատաւ թիւրքաց կառավարութեան խօսքին, ինչպէս և մի եւրոպական կառավարութեան. դուք կարող էիք չհաւանել նրա գործերը, բայց կարող էիք հաւատալ նրա խօսքին Սակայն այժմ կարծես վրայ է հասել դատաստանական կողմնապահութեան մի ահեստկը: Խնչ է պատահել Թիւրքիային: Մենք ականատես ենք այդ կառավարութեան մնապարծութեան, նրա ինքնագով խաղերին. նա ասում է, թէ չի կարող զիջել իւր իշխանութիւնը, չէ կարող սահմանափակել իւր իրաւունքները: Խնչ են եղել նրա պետութեան մի երրորդ մասի իրաւունքները: Իմ կեանքի միջոցին Թիւրքիան կորցրեց իւր պետութեան մի երրորդ մասը և 16 թէ 18 միլիոն ժողովուրդ, որոնք ապրում էին ամենազեղեցիկ և աշխարհիս մէջ երբեմն մեծ հռչակ ունեցող երկիրներում, որոնք առաջ օսմանեան իշխանութեան տակն էին, այժմ ազատ են, ինչպէս մենք (հաւանութիւն): Օսմանեան կառավարութիւնը ինքն այնպէս լաւ գիտէ այս րոլորը, ինչպէս մենք, բայց և այնպէս նա շարունակում է իւր անմիտ գործերը:

Միւս կողմից միլորդ դուքսը շատ խելացի կերպով յիշեց կառավարութեան այն ձեւը, որ մացւեց 1861 թ-ին Լիբանանում, և տեղական ինքնավարութիւն ու հասարակական վերահսկողութիւն շեորհւեցաւ երկրին, և որի արդիւնքը վերին աստիճանի բաւարար է: Դա երկրի մի մասն է, թէեւ ոչ նշանաւոր մասը, որտեղ տեղական ինքնաւարութեան նման մի բան է թոյլ արւած, և որի բնաւորութիւնը շատ յոյսեր է տալիս: Երբ մենք տեսնում ենք մի կողմի, թէ փորձերը յաջորդւել են, միւս կողմից նկատում ենք, որ ինչպէս Յունաստանը, Բոլղարիան, և չորս կամ հինգ ուրիշ պետութիւններ են կազմել այդ մեծ պետութիւնից, այն ժամանակ ես ասում եմ, որ Թիւրքաց կառավարութիւնն անմտութեամբ այնպէս է կուրացել, որ կարող է ընդունել և մի այնպիսի ծրագիր, որպիսին է քրիստոնեաներին բնաջինջ անելու ծրագիրը:

Այս, այս մի տիսուր և սարսափելի պատմութիւն է. ես երկար խօսեցի այդ մասին, միայն մի փոքր մասը. բայց չոյս ունիմ, որ լսելով որոշումը, որ ձեզ կը ներկայացնեմ, դուք կը համաձայնեք, որ գործի համար կարեոր եղբակացութիւնն է տրւած (հաւանութիւն):

Ես ուրախ կը լինէի, եթէ Թիւրքիան խելքի գայ և ինքը խուսափի յետադայ բարդութիւններից: Երանի թէ այնպիսի մարդիկ, ինչպէս էին Ֆուադ-փաշան, Ալի-փաշան, որոնք գործում էին Թիւրքիայում: Արիմի պատերազմից յետոց, կարողանացին գերեզմանից յարութիւն առնել և Թիւրքիայի քաղաքականութեան մէջ իրանց սկզբունքները, իրանց հոգին ներշնչել:

Ահա թէ, իմ կարծիքով, ինչ պէտք է ցանկացինք. աւելի դիւրին է Թիւրքիային արդարացնել, քան համոզւել, թէ նրա դէմք բարձրացած մեղադրանքները ճշմարիտ են. բայց եթէ մենք յարգում ենք մարդկութիւնը, եթէ սիրում ենք մեր պատիւը, պէտք է ասպարէզ դուրս գանք. մենք պէտք է ուշ դարձնենք այն բանին, որ մեր պահանջն աւելի չլինի, քան արդարութիւնը թելագրում է, այլ լինի այնքան, որքան անհրաժեշտ է: Մենք պէտք է վճռենք, թէ այն, ինչ որ անհրաժեշտ է, ինչ որ իրաւացի է, պէտք է կատարեի, չնայելով, թէ դրան արգելքներ կը լինին, թէ ոչ: (բարձրացնելով հաւանութիւն):

Կանոնիկոս Մակ-Քոլ պաշտպանեց որոշումը և ասաց, թէ ինքը համոզւած է որ լորդ Սոլսբիւրին հաւատացած է որ Զեստերի ակա միտինգը նեցուկ կը լինի աղդ ինդիրը վճռելու գործում (հաւանութիւն):

Որոշումը ոգենորութեամբ ընդունւեց. Զեստերի եպիսկոպոսի առաջարկութեամբ՝ միտինգը ցուցերով չնորհակալութիւն չափանից Գլազուռնին, նորա ճառի համար: Գլազուռնը աղդ ցուցի համար չնորհակալութիւն չափանից և ասաց.

Միլորդ դուքս, արդարութիւնը պահանջում է որ ասեմ թէ չդիտեմ, կարողացայ արգեօք այս միտինգի համար մի բան անել. բայց այդ զգացմունքները աւելի ևս յուղում են ինձ. իմ համեստ աշխատութեան այդպիսի գնահատութիւնը ես մի նշան եմ համարում, որ դուք լրջօրէն էք վերաբերում դէպի այս մեծ գործը: Մի խօսք ևս կ'աւելացնեմ. կանոնիկոս Մակ-Քոլի խօսքերը, որ կառավարութեան գործունէութեան մասին էին, ինձ մեծ բաւա-

կանութիւն պատճառեցին: Կարող եմ ասել, տիկիններ և պարոններ, որ երբ ես այսօր՝ այստեղ եկայ, խորը համոզւած էի թէ Զեսուերի ժողովի աշխատութիւնը նման աշխատութիւններ առաջ կը բերի նաև այլ կողմերում (հաւանութիւն) և Նորին Մեծութիւն Թագուհու կառավարութեան կողմից հաճութեամբ կ'ընդունի: Այս աշխատութիւնը նպատակ ունի օգնել կառավարութեանը և ոչ թէ նորանից վերցնել այն լուրջ և ծանր պատասխանաւութիւնը, որ նորա վրայ է ընկած Հայաստանի վերաբերմամբ: Նորհակալ եմ (հաւանութիւն):

Նախագահին շնորհակալութիւն Հայտնելով՝ միտինդը վերջացրեց իւր զբաղմունքները:

### ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ ՌՈՋԲԵՐԻ ԵՒ ՍՈԼՍԲԲԻ

Նոր տոմարով օգոստ. 15-ին (հին տոմ. 3-ին) բայցւեց Անդլիավի լորդերի պալատը գահական ճառով, որի հաջկական խնդրի մասին տողերը մեր ընթերցողները կարդացին «Մուրճ»-ի անցեալ № 7-ում (լուրերի բաժնում): Ապա, օրէնքով պարտադիր երդումը տալուց վետոց, սկսւեցին վիճաբանութիւններ սրատասխան-ուղերձի առիթով: Վիճաբանութեան դլխաւոր խնդիրները չինական և մանաւանդ հաջկական գործերն եղան: Լորդ Ամարլիլը, ակնարկելով Գլադմոտոնի ճառը Զեստերի միտինգում, լոյս չափանեց թէ անդլիական կառավարութիւնը ամեն ինչ կ'անէ Հայաստանում ռեֆորմներ մտցնելու գործը երաշխաւորելու համար: Ապա, լիբերալների ծափահարութիւնների մէջ, խօսք ուզեց նախկին մինիստր-նախագահ և ալժմ ընդդիմսդիր կուսակցութեան պարագլուխ լորդ Ռոգրերի, որ ասաց հետեւեալը հաջկական խնդրի մասին:

«Հայկական հարցը, ինչպէս խոստովանեց և յարգելի լորդը (լորդ Ամարլիլ), կուսակցական քաղաքականութեան շրջանից զուրս է: Ես մի բոսէ անգում չեմ կասկածում, որ ազնիւ մարկիզը (Սոլսբիրին) անհրաժեշտ է համարում; ինչպէս և մենք, սուանալ սուլթանի կառավարութիւններից հաստատ և մշտական երաշխաւորութիւններ, որ այլ ևս չեն կարող տեղի ունենալ այն դէպքերը, որոնցից սոսկաց Եւրոպացի գիտակցութիւնը (լսեցէք):

«Ես կարծում եմ, որ այս ուղղութեամբ գործելը շահաւետ է թէ սուլթանի կառավարութեան համար և թէ Փոքր-Ասիայի թշրւառ քրիստոնեաների պաշտպանութեան համար, որովհետև մի բան

գոնէ պարզ է, որ այլպիսի սարսափների կրկնութիւնը կարող է կրծատել սուլթանի կառավարութեան կեանքը քաղաքակրթւած տիետութիւնների շրջանում, որոնց մէջ նա զբւած է։ Ես շատ լաւ հասկանում եմ, որ ազնիւ մարքիզը, մինչև արտաքին դործերի մինիստրութեան գլուխ անցնելը, հաւատ չէր ընծայում լրագրական տեղեկութիւններին, որ նա կարգում էր այդ սարսափների մասին։ Բայց այժմ, երբ նա կարգացել է, ուսումնասիրել հիւստատոսների և հեղինակաւոր անձանց զեկուցումները Փոքր-Ասիացից՝ նա նոյնպէս սկզբ է համոզւած լինի, ինչպէս և մենք էինք, որ տեղի են ունեցել այլպիսի սարսափներ, որ մարդկացին խօսքը անկարող է նկարագրել, և որոնք գուցէ իրանց նմանը չունենան անցեալ պատմութեան մէջ։

Ես լաւ գիտեմ, որ հեշտ բան չէ պահպանել եւրոպական համաձայնութիւնը։ Հնարաւոր բան է, — ինչպէս այդ մասին լուր եղաւ լրագիրներում — որ Ռուսաստանի և Ֆրանսիացի կառավարութիւնները կարող են ոչ առանց հիմունքի վախենալ յարուցանել արևելեան հարցի ծանր ուրւականը, եթէ անզլիւական կառավարութեանը օգնելով զօրեղ միջոցներ ձեռք առնեն։ Բայց ես հաւատում եմ և յուսով եմ, որ երկրի զրութիւնը այլպէս չէ, եթէ զժբաղդաբար դա ճշմարիտ լինէր, — ես յամենացն դէպս համոզւած եմ, որ եթէ ազնիւ մարքիզը մինչև անգամ առանձին և միայնակ ձեռք առնէր զօրեղ և հաստատ միջոցներ այս խնդրում, նա կը զգար, որ իր յետեկից նա ունի ոչ թէ մի կուսակցութիւն միացն, որքան էլ որ դա զօրեղ լինի, այլ ամբողջ ազգը (Ճափահարութիւն)։ Այս մի կէտ է, որ չէր շօշափւած գահական ճառում, բայց որի վրայ ակնարկեցին թէ պատասխան-ուղերձ առաջարկող և թէ նրա պաշտպանող լորդերը։

Լորդ Ռոգբերին պատասխանեց ներկալիս մինիստրութեան դլուխ մարկիզ Սոլսբիւրին։ որը հայկական խնդրի մասին արտասանեց հետեւուն նշանաւոր և ծանրակշիռ խօսքերը։

«Հայաստանի մասին յարգելի լորդի (Ռոգբէրի) արած նկատողութիւնները այնքան համանման են այն բոլորին, ինչ որ ես կամենում էի ասել, որ երկար այլ ևս չեմ կանգ առնի դրանց վրայ։ Մենք ընդունել ենք այն քաղաքականութիւնը, որը մեր նախորդ»

ները սկսել են. Անք ամենայն կերպ աշխատել ենք առաջ տանել նրան (լսեցէք): Մենք ստացել ենք որոշ խոստում, որ բէֆորմներ կը մոցնեն այն գաւառներում, որոնք ացնքան տանջւել են, և հաւատում ենք, որ ներկայումս չկայ որ և է վտանգ, թէ այդ սարսափելի անկարգութիւնները և յանցանքները կարող են կրկնելու ինչ որ մինչեւ այսօր մենք չենք կարողացել ստանալ, այդ է՝ հաստատ երաշխաւորութիւն, որ բէֆորմները անպատճառ կը մոցնեն:

«Եւ այդ կէտն է, որի վրայ մեր ջանքերը պէտք է դարձնենք այժմ: Այդ կէտում մենք ստացել ենք լիակատար աջակցութիւն Ֆրանսիայի և Ռուսաստանի կառավարութիւններից (լսեցէք), և նրանք յայտնել են իրանց կառարեալ ցանկութիւնը՝ շարունակել պահպանել իրանց համերաշխութիւնը մեզ հետ (ծափահարութիւն):

«Թէ սուլթանը ձգձգում, յետաձգում էր, բացարութիւններ էր տալիս, որոնք մեզ չեն թւում հիմնաւոր և խելացի, — այդ, զժբաղդաբար, մի սխալմունքի հետեւանք է, որով թիւր օաց կառավարութիւնը երկար ժամանակ զեկավարել է: Նա վախենում է, որ մի՛ գուցէ մի այնպիսի բան անի, որով վեստի նրա պետութեան կարծեցեալ անախութիւնը: Դա մի ազնիւ զգացմունք է, որին մենք կամենում ենք ամենայն համակրանք ցոյց տալ, բայց Թիւրքիայի անկախութիւնը, թէւ դա գրւած է Եւրոպացի օրինքներում և հաստատւած Պարիզի ու Ֆերլինի դաշնագիրներով, — մի բոլորովին առանձին տեսակի անկախութիւնն է (a very special kind of independence): Դա մի անկախութիւն է, որի գոյութիւնը հիմնած է պետութիւնների այն համաձայնութեան վրայ, թէ իրանք չեն խառնւի Թիւրքիայի գործերում և կը պահպանեն նրան: Եւ այն վտանգը, որ պետութիւնները զգացին հէնց առաջին անգամից, երբ այդ քաղաքականութիւնը սկսեց, զգուշացրեց թիւրքաց կառավարութիւնը պաշտպանելուց և նրան մի հաստատութիւն տալուց, որ նա պահպանել չէ կարող: Պետութիւնները վախեցան, որ մի՛ գուցէ իրանք պաշտպանեն մի մեխանիզմ, որը չէ գործում մարդկացին բարօրութեան և առաջադիմութեան համար, այլ ընդհակառակն՝ ցոյց է տալիս թոյլ կառավարութեան հակումներ և պահպանում է կրօնական և

ցեղական անտագոնիզմ, որը այսպան դարերի ընթացքում գոյութիւն ունի Թիւրքիայում:

Եւրոպան պահպանել է թիւրքաց կայսրութիւնը, բայց որոշ պարտաւորութիւններով. Եւրոպան ցոյց է տևել իւր երկիւղը, որ, Թիւրքիային կատարեալ անկախութիւն տալով, նա պէտք է աւելի դժբաղզութիւն առաջացնի մարդկութեան համար, քան բարիք: Արդեօք երկար կը շարունակւի իրերի ներկայ դրութիւնը, - խոսափանում եմ, զա ինձ աւելի կասկածելի է թւում, քան 20 տարի առաջ էր: Յարդելի լորդը (Ռոզբէրին) ինքը ասեց, որ սուլթանի կառավարութեան տեղութիւնը կախւած է այն ուղղութիւնից, որին նա այսուհետեւ կը հետեւի: Եթէ սերունդից սերունդ տեղ սարսափելի հալածանքների ազադակներ կը հասնեն թիւրքաց կայսրութեան զանազան մասերից, ես հաւատացած եմ, որ սուլթանը չի կարող կուրանալ և չտեսնել այն հաւանականութիւնը, թէ Եւրոպան այսօր կամ վաղը կը ձանձրանաց, կը կորցնի իր համբերութիւնը՝ այն բոլոր զիմումներից, որ ուղղում են նրան:

Ես ամեն կերպ աշխատել եմ հասկացնել օսմանեան կառավարութեանը այն մեծ կարեսրութիւնը, որ ունի նրա այժմեան բոնելիք զիրքը: Մի և նոյն ժամանակ աշխատել եմ ցոյց տալ, որ ոչ մի կառավարութիւն այնքան չէ ցանկանում օսմանեան կայսրութեան պահպանութիւնը, որքան անզիական կառավարութիւնը:

Եթէ ես կարող եմ մի բոլէ խօսել կուսակցական գործերի մասին, կ'ասեմ, որ ոչ մի կուսակցութիւն այնքան չէ ցանկանում պահպանել օսմանեան կայսրութեան ամբողջութիւնը և անկախութիւնը, որը սրբագրութեան է դաշնագրերով, որքան այն կուսակցութիւնը, որին ես պատիւ ունեմ պատկանելու: Սուլթանը ծանր և վտանգաւոր սխալ կ'անի, եթէ, լոկ ձեւական անկախութիւնը պահպանելու համար, միմիայն իր անւանական իրաւունքները անձեռնմխելի պահելու համար՝ մերժի լսել եւրոպական պետութիւնների օգնութիւնը և խորհուրդները, արմատախիլ անելով իւր երկիրներից այն անարջիան և այն թուլութիւնը, որին ոչ մի դաշնագիր և ոչ մի համակրութիւն չի կարող օգնել և որը, երկար տևելով, կը լինի ճակատագրական (fatal) այն կայսրութեան համար, որտեղ նա տիրում է (Ճափահարութիւն):

ՌԵՖՈՐՄՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐԸ  
ԵՒ ՄԱՐՔԻՉ ՍՈԼՅԲԻՐԻ

«Թայմս»-ին հեռագրում են Կ. Պոլսից, որ նորերս լորդ Սոլս-  
բիւրին, խօսակցելով Լոնդոնի տաճկական դեսպան Ռուսոէմ փաշայի  
հետ, յայտնել է թէ առաջարկւած հայկական ռեֆորմների իրա-  
գործելու միակ ապահովութիւնը նա համարում է մի վերահսկիչ  
մասնաժողով։ Լորդ Սոլսբրիի կարծիքով այդ մասնաժողովը կազմ-  
ւած պէտք է լինի եօթը անդամներից, որոնցից չորսը տաճկա-  
հալատակ պէտք է լինեն, իսկ մնացեալ երեքը—ռեֆորմների ծրա-  
գիրն առաջարկող մեծ պետութիւնների ներկայացուցիչները։ Նոյն-  
պիսի առաջարկութիւն արել են Դրանց ոռուաց և ֆրանսիական  
դեսպանները։

Սուլթանը սակայն չի չօժարում այս առաջարկութիւններն  
ընդունելու։

ՌՈՒՍՍՍԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Nord (Նորդ, Հիւսիս) լրագիրը, որ Ռուսաստանի կիսապաշ-  
տօնական թերթն է Բրիւսէլում (Բելգիա), յայտնեց՝

«Մի քանի ժամանակից ի վեր տարածւում են ամեն տեսակ լուրեր  
հայոց խնդրի առիթով և ոռուաց կառավարութեան դիտաւորութիւնների  
մասին այդ խնդրի նկատմամբ։

«Իրանց ձգտումով ամեն ինչ չափազանցնելու՝ արտասահմանի թեր-  
թերը անքան հեռու են գնում, որ նոյն իսկ պնդում են թէ իբր Ռու-  
սիան հեռու չէ այն բանից որ զիմէ աւելի եռանդոտ գործողութեան  
տաճիկ կառավարութեան վերաբերմամբ։

Այդ բոլոր լուրերը աւելի քան չափազանցրած են։ Մենք հաս-  
տատ գիտենք, որ ոռուաց կառավարութիւնը մտադիր չէ նաև հայկական  
խնդրում փոխելու իւր բարեկամական վերաբերմունքը դէպի Դուռը և չի  
մտածում հրամարւել այն չափաւոր հաշտեցնող քաղաքականութիւնից,  
որին նա ցածմ հետեած էու

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ, ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

(„Daily Telegraph“ օգ. 18)

«Մի կէտ կայ, որի նկատմամբ անպայման համաձայն են բըի-  
տանական պարլամէնտի բայցման օրը կարլացած գահական ճառի

բոլոր ֆրանսիական կոմենտատորները։ Ամբողջ մամուլը առանց բացառութեան, կարծես մի ընդհանուր հրամանի անսալով, սխալական է համարում լորդ Սոլզբիւրիի յայտարարութիւնը Հայտատանի մասին, մի յայտարարութիւն, որի եղանակը կարող է սուլթանի արդարացի գայլոցիցը յարուցանել։ Ֆրանսիացի մամուլը միշտ ամեն ձիգ թափել է, ինկատի առնելով բրիտանական և ֆրանսիական շահերի մրցումը Նեղոսի վրայ—սուլթանին իւր կողմը գրաւել Անգլիայի դէմ։ Ամենուրեք այսաեղ ընդունած եղանակը, տոնը այն է, որ եթե կայ մի երկիր, որ սաստիկ նւիրւած է օսմաննեան կալչութեան ամբողջութեան գաղափարին—այդ երկիրը է և միշտ եղել է Ֆրանսիան։ Սորա հետևանքն այն է, որ այն միջոցին, երբ Ֆրանսիան ձեռք ձեռքի տւած է գնում Անգլիայի հետ հայկական խնդրում—մամուլը յարձակում է լորդ Սոլզբիւրիի վրայ և սորա՝ սուլթանի համար վիրաւորական ոմի վրայ։ Այն խօսքը թէ թագուհին առն համբեր ու թե ամբ սպասում է սուլթանի պատասխանին, հաճելի չէ եղել մանաւանդ թէ Temps թէ Journal des Débats լրագիրներին։

«Journal des Débats»-ն «չի կամենում հաւատալ, թէ աշխարհիս երեսին մի ինչ որ Հայկական խնդիր կայ,—այդ խնդիրը հնարել են անգլիական թղթակիցները և լորդ Սոլզբիւրիի ձեռքում դա մի միջոց է շողործելու բրիտանական հասարակութեան յափշտակւած լինելու գուացմոնքը»։

ՈԵՖՈՐՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ, ՏԱՃԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ, ԵԽԱՊԵՏԱԿԱՆ ԶԻՆԱԿԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆԳԼԻՅՆ

Համայնքների ժողովի նիստում առ Յ.Ն սեպտ. (22 օգոստ.), պատասխանելով մի քանի հարցերին, արտաքին գործերի մինիստրի օգնական պ. Քերզոն յայնից, թէ «տաճկական կառավարութիւնից ստացւած են մի քանի հաղորդագրութիւններ Հայտատանում մոցնելիք ռեֆորմների մասին։ Նոցա ընդհանուր բովանդակութիւնը ճիշդ է հաղորդւած մամուլի մէջ։ Յաւակցարար՝ այդ հաղորդագրութիւնները չեն կարող բաւարար ճանաչել։ Ուեֆորմների ծրագիրը պաշտոնական գուացական գուացարար գործադրութիւնների մասին իշխանութիւն չգտաւ Գերմանիայում։ Աւատրիայում և Խոալիայում, պանութիւն չգտաւ Գերմանիայում։ Աւատրիայում և Խոալիայում, բայց կարծւում է թէ այդ երեք պետութիւնները համակրում են

ծրագրին, քանի որ ոչ-սպաշտօնական կերպով նոքա խորհուրդ են տւած Դուան բարեհաճութեամբ վերաբերել առ այն։ Բրիտանական կառավարութիւնը ոչ մի բացատրութիւն չի կարող տալ իւր այն վարւողութեան մասին, գէափի որը նա ստիպւած էր։ Կառավարութիւնը ուշք շղարձրեց «Նովոստի» թերթի յայտնութիւնների վրայ, թէ ժամանակ է որ Ռուսիան, Անգլիան և Ֆրանսիան սպաշտանեն իրենց բողոքը Դուան առաջ նաւացին ցոյցով։ Այդ թերթը սպաշտօնական չէ։ Այդպիսի առաջարկներ եղած չեն։

**ՄՈՒՇԻ ԳՆՆԻՉ ՅԱՆՉՆԱԽՈՒՄԲ. — ԵԽՐՈՊԱԿԱՆ ԴԵԼԵԳԱՏՆԵՐԻ  
ԶԵԿՈՒՑՈՒՄԸ**

(«Daily News» 21 օգոստոսի)

Թիւրքաց Քննիչ Յանձնախմբի անդլիացոց, Փրանսիացոց և ռուսաց ներկալացուցիչների միացեալ զեկուցումը, որ վերաբերում է վերջին տարիներումն Սասուն տեղի ունեցած դէպքերին, այժմ ճանապարհին է, Զեկուցումը ֆրանսիացոց դեսպանի միջոցով երեք դեսպաններին կը լանձնէի երեք կամ չորս օր առաջ՝ քան դուք Լոնդոնում կըսանաք այս նամակը։

Հարկաւ ես զեկուցագիրը չեմ տեսել. բայց տեսել եմ ներկալացուցիչներին և քննութեան գործին մօտ կանգնած ուրիշ անձնաւորութեանց, Զնալած այն գաղտնիքին, որ անհրաժեշտաբար կապւած է ամեն մի՝ տակաւին իւր տեղը չհասած՝ փոքր ի շատէ նշանաւոր վաւերագրի հետ, ես կարող եմ ձեր ընթերցողներին հաղորդել այն գլխաւոր կէտերը, որոնց վրայ կառուցւած է զեկուցագիրը, և նոչնպէս մի քանի եղրակացութիւններ, որոնց հասել են ներկալացուցիչները՝ վկաններին լսելով։

Թողլ տէք սակաւն մի անգամ եւս բացադրել ձեր ընթերցողներին թէ որպիսի տեղ էին բռնում եւրոպական ներկալացուցիչները քննութեան մէջ։ Յաճախ ակնարկներ եմ լսել «Միջազգակին Յանձնախմբի» կամ ԱՅԱՆՁՆԱԽՄԲԻ եւրոպական անդամներին մասին։ Այդ մի սխալէ, որի ուղղելը վերին աստիճանի կարեոր հետեանքներ կ'ունենայ։ Թող մի անգամ ընդ միշտ լավոնի դառնակ որ Յանձնախմբը եւրոպական չէր և որ եւրոպական ներկալացուցիչները Յանձնախմբի անդամներ չէին։ Նրանց նշանակել են և։ Պոլսի դեսպանները, որ նաևն և հսկեն թիւրքաց քընութեան գործի վրայ, Նրանք կարող էին քրիստոնեակ վկանների ցուցմունքները լսել թիւրքաց Յանձնախմբի նախագահի միջոցով և հարցուփորձի կոչել այն վկաններին, որոնց իրանք կը ցանկալին։

Բայց այդ էլ իրանց մերժում էին, Յիրաւի շատ նշանաւոր վկալու-

թիւններ լսելու արգելվք պատճառ եղաւ չանձնախմբից ներկայացուցիչ-ների հեռանալուն և չանձնախմբի խափանելուն։ Փակագծերի մէջ պէտք է ասել որ ազգ շատ լաւ եղաւ, Որովհետեւ եթէ ազգ վախճանը չլինէր, թիւրքաց առաջնորդութեամբ գործող չանձնախմբի քննութիւնը տարի-ներ կը չարունակէր։ Ներկայացուցիչները կարող էին նույնպէս քննել չանձնախմբի կազմած արձանագրութիւնները, որոնց ներքոյ նրանք ևս թիւրքաց հետ ստորագրում էին և որոնց պատճենները վերցնում էին։ Ներկայացուցիչների իրանց կառավարութեան ներկայացնելի զեկուցա-գրերը անհրաժեշտաբար կազմւած են նոյն նիւթից, որից և սուլթանի չանձնախմբը կազմնել է իւրը, ալսինքն՝ ամենօրեալ զբաղմանց արձանա-գրութիւններից։

Յանձնախմբի թիւրք անդամները առաջնորդում էին այն կանխա-  
կալ տեսութեամբ, թէ Սասունում կառավարութեան դէմ ապստամբու-  
թիւն է եղել կազմակերպած, դրանով էլ արդարանում է կառավարու-  
թիւնը որ զինուրական ոժի դիմելով ճնշել է ապստամբութիւնը: Ակնա-  
լավոնի Փակտերը սակացն միւս կողմից պարզ ի պարզուց ցուց են տալիս,  
որ թէպէտև Գամատեանը լեղափոխակոն վրդովմունք է առաջացրել Սա-  
սունում և թէպէտ Մուրաղը նրա գործը շարունակել է հայերին քիւրդե-  
րի ճնշումներին և հալածումներին դէմ ինքնապաշտամութեան գրգռելով:  
այնուամենացնիւն նոյն իսկ կոտորածի ժամանակ՝ վրդովմունքը սաղմեալին  
դրութեան մէջ է եղել և հասարակ շարժման բնաւորութիւն անգամ չի  
ունեցել: և թիւրքաց զինուրական արշաւանքի նպատակը՝ Մուրաղին  
կալանաւորելը՝ կարող էր իրագործել զինուրների ամենաչնչին թւով:  
առանց արիւնչեղութեան:

Ներկապացուցիչները՝ ալս պէտք է ի մտի ունենալ, անկախ գործակալ-ներ չեն եղել ոչ մի գէպքում։ Նրանք չէին կարող քննութիւն կատարել։ Կարող էին այն միայն անենի ինչ որ նրանց կը լանձնէին։ Նրանք նոյն-պէս չէին կարող սահմանել կամ սահմանել տալ այն կէտերը, որոնցով պէտք էր քննութիւն կատարել։ Հետեանքն այն եղաւ, որ ոչ մի ծրագիր ոչ մի չափ չընդունւեց։ «Քննութիւնը, ալսպէս ասաց ինձ ներկապացուցիչներից մէկը, ոչ սկիզբ ունէր և ոչ վախճան։ նա՝ ըստ երևութիւն, զիսաւորապէս ստութիւնից և ոչնչութիւնից էր կազմւած, որին և թիւր-քերը սիրում են մեծ նշանակութիւն տալ»։

Հինգ այլ էր, որ քննութիւնը ամբողջ վեց ամիս ձգձգեց, և հետէ այդ քայլակամը վիճէր, կարող էր զեռ երկար շարունակել: Ի հարկէ թիւրքերի համար օգտակար չէր՝ կոտորածների վերաբերութեամբ վկա- րութիւններ հանդէս հանիլ: Ամենը ինչ որ ձեռք են բերել ներկայացու- ցինները՝ արդիւնք է բոլորովին տարբեր նիւթիւն վէճների և կողոպուտների մասին պատմութեանց, նա գինն է անազին աշխատութեան: Եւ այս մա- սում ինչ որ նրանք ձեռք են բերել անվիճելի է:

Գալէ-Գուզանի բաղմութեամբ կոտորածների, Տէր-Ցովհաննէս քահանալի տանջանքների, կանանց, երեխալոց և մածկանց վրաէ կատարւած բռնութիւնների զրայցները, ինչպէս արդէն հաղորդել եմ «Գէլի Նիւսուի ընթերցողներին, ցուցմունքներով կատարելապէս կապացուցւին» Հաստատած է, որ կոտորածների թիւը աւելի քիչ է, քան ենթագրում, պատում էր. բայց ներկալացուցիչները չափազանց ամնկատար փաստեր են ունեցել, որոնց վրաէ ել նրանք պէտք է հիմնէին. բայց մինչև անդամ ալդ փաստերից երեսում է, որ միմիան մի զիւզում հարիւրից աւելի մարդիք են սպանած, որոնց ամենքին կարելի է չականէ անւանէ թւել: 20-ից մինչև 25 զիւղ բոլորավիճ ամբացած են, ներկալացուցիչներն ասում են, թէ երբ Գալէ-Գուզանից Սէմալ էին վերադառնում, լեռների և նրանց լանջերի պատկերն աշնողն էր, ասես նոր է վերջացել հեղեղը: Գիւղերը հողի հետ հաւասարեցրած: Խօսքիո բառական խմաստով, Սասունի տները հիանալի քարէ շնութիւններ էին. և ալսպիսի ծալրանեղ ամալութիւն առաջացնելու համար՝ պէտք է, որ կոտազի խուժանը ամբողջ գաւառը տարածէր և բաւականաչափ ով ունենար, ալյապէս չէր կործանւիլ քարէ ամուր սեղանը, որ ներկալացուցիչները աւերած են գտել Գալիէ-Գուզանի եկեղեցում:

Համոզկիր ապացուցներ կան, որ հաջերը 12 օր ենթարկւած են եղել քիւրդերի օրէցօք աւելի աճող ոչի չարձակմանց գէմ: Ալդ ամբողջ ժամանակում թիւրքաց հետեւակ զօրքի երկու վաշտ կանգնած են եղել Սերպէ-Մողանսւմ, որ 142 մղոն հեռու է կոտորածի տեղից: Սական Հածի Մուռտափան, մի սպազ, որ ալդ զօրքի հրամանատարն է եղել ալդ մասին չանձնախմբի հարցին պատասխաննել է, թէ ոչինչ չի տեսել և ոչինչ չի լսել մի ալգորիթմի կուփ մասին: Հաջի-Մուռտափան մի փոքր խուլ է, փաստ, որով արդարացնում են նրան: Պէտք է ենթաղրել որ նրա հրամանատարութեան ներքոյ գանւող մարտիկ ես խուլ են եղել, որովհետև նրանցից ոչ ոք հարցուփորձի չենթարկւեց: Ընդհանրապէս ոչ մի թիւրք զինուրից ցուցմունքներ չեն առաջաւած: Սական՝ ինչպէս գիտենք, թիւրք զինուրները կարող էին շատ պարզ զեկուցումն առալ, թէ ինչ է պատահել Սասոնէ լեռներում երեք շաբաթւակ ընթացքում՝ քիւրդերի տասներկու օր: ալ կուփ ինառու Բոլորավիճ ապացուցւած է, որ ալդ երեք շաբաթւակ ընթացքում հաջերին կոտորում էին ամեն տեղ, ուր որ պատահում էին:

## ԿԱՄԱԿԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐ

Սառը դնում ենք լրագիրներում հրատարակած մի պաշտօնական գրութիւն Կամախի զէպերի մասին։ Այդ պաշտօնական գրութիւնը ուղղած է Կարինի ազգային առաջնորդարանին։

Աւազակաց խումբ մը, որոյ ինչ ազգէ ըլլալը անչափ է, անցեալ երկուշաբթի օր, քաղաքէս վեց ժամ հեռաւորութեամբը, զէսի Կամախ՝ կողոպտած էր զինւորական անասնաբով գալմաղամ մը, զոլաղասի մը և սպանած էր չառուչ մը։

Տեղում կառավարութիւնը և միւշիրը, շրջաբնակ քիւրդերու վկացութեան վրայ համոզում գուացնելով, թէ ազգ աւազակները հաչ են, ձիաւոր, հետեակ, և թնդանօթաձիգ զօրքերով կը պաշարէն Կամախի բոլոր լեռները։ Զօրաց այդ ստուար բազմութիւն, միացեալ շրջակաչ թիւրք և քիւրդ բնակչաց հետ, մանելով Գառնի, Թաւկներ, Թորդան, Աւագ-վաճք, Ռեպհաչ ս. Լուսաւորիչ և այլ հաչաբնակ գիւղեր ու վաճքերը՝ կողոպտեց նոցա նպարեղիններն, աչ, ոչխար, եղ, կով, և ամեն ինչ որ ուտելի է։

Հետզեաչ անլուր խժգժութեանց գոչեր կը հասնին։ Լուսաւորիչ և Աւագ-վաճք իսպառ կողոպտած են և վաճաբնակք անչափացած։

Լուսաւորչի պահապանն ու հովիւր սասատիկ գանակոծւած։ Հրացանի փողը կուրծքներուն դրած կը սպառնան սպանել, եթէ չըսեն մի առ մի սմաչ մը հետէ վանքն այցելողներու անուններն, զարկին Մարթա պառկեցնելով կազ կը բերեն և ալբել կը սպառնան՝ խոստվանութիւն մը առնելու համար։ Ապա խաչած հաւկիթ կը կապեն նոցա անութներու տակ՝ չարչարելով խոսք քաշելու հաւար։

Այլուր գանակոծեալներու կապուտներն անչափացնելու համար սուրի ծալուվ կը ձեզքոտեն նոցա կապուտներն։

Հոռոմիուլ և Մարեղ գիւղերն անտանելի տանջանաց մատնւած են։ այդ բազմաթիւ զինւորներ և պաշը-պողուքներ, Երիզաչ նպար չընդունելով, գիւղացոց բոլոր ունեցածները կը չափակեն։

Եղեկի տանջեալները մի առ մի ըսեր են անւանքն աչն անձանց, որք ամսէ մը ի վեր հօն չաճախած են ուստի համար, ուստի և երիզացի 12-ի չափ անձինք ձերբակալելով բանտարկւեցան։ ձերբակալութիւնը կը չարունակւ։

Մօտալուտ վտանգ մ'ալ կը նշմարւի քաղաքիս համար, վասն զի հակառակ օրինաց և կամաց վեհ, սուլթանին, ամեն ապօրինաւորութիւնք ի գործ կը դրւին։

Անչապաղ օգնութիւն կը խնդրեմք առաջն առնելու վտանգի մը, որ չառ եղերական կրնաչ ըլլալ։

Առաջնորդարան Երիզա, Խառն ժողով։

### Ց Ո Ւ Թ Ա Կ

ՍԱՍՈՒՆԻ ԱԻԵՐԻԱԾ ԳԻՒՂԵՐԻ 1894 թ.

(Արժանահաւատ ազգիւրից)

|                       |    |                      |
|-----------------------|----|----------------------|
| 1. Ալիսանցիք . . .    | 25 | տուն                 |
| 2. Ալուիկ . . . .     | 7  | ,                    |
| 3. Դաշտոք . . . .     | 12 | ,                    |
| 4. Շէնըք գիւղ . .     | 40 | , 2 եկեղեցի, 1 դպրոց |
| 5. Մզիէսորփ . . .     | 15 | ,                    |
| 6. Դամիէ . . . .      | 10 | ,                    |
| 7. Կլնկիման . . .     | 20 | ,                    |
| 8. Պատճանց . . .      | 8  | ,                    |
| 9. Սէմալ գիւղ . .     | 50 | , 1 եկեղեցի, 1 դպրոց |
| 10. Միւս Դաշտոք . .   | 8  | ,                    |
| 11. Պլոյարտէր . . .   | 10 | ,                    |
| 12. Պոնկէ . . . .     | 20 | ,                    |
| 13. Կլոէհիսար . . .   | 10 | ,                    |
| 14. Մերկիր . . . .    | 8  | ,                    |
| 15. Խոշոք . . . .     | 12 | ,                    |
| 16. Կէլիկուզան գիւղ . | 80 | , 1 եկեղեցի, 1 դպրոց |
| 17. Կլիսան . . . .    | 8  | ,                    |
| 18. Հիւսենցիք . . .   | 30 | ,                    |
| 19. Միիթար . . . .    | 15 | ,                    |
| 20. Խարիսպան . . .    | 13 | ,                    |
| 21. Խասան . . . .     | 20 | ,                    |
| 22. Երկուազբի . . .   | 60 | ,                    |
| 23. Թխիկ . . . .      | 7  | ,                    |
| 24. Կլզէսլշ . . . .   | 4  | ,                    |
| 25. 2 Հեթինք }        | 70 | , 2 եկեղեցի          |
| 26. Խոնց }            |    |                      |
| 27. Դալորիկ գիւղ . .  | 60 | ,                    |
| 28. Զորիր . . . .     | 15 | ,                    |
| 29. Սովահանք գիւղ . . | 50 | ,                    |
| 30. Հարթք . . . .     | 45 | ,                    |

|     |                      |   |   |   |    |   |                    |
|-----|----------------------|---|---|---|----|---|--------------------|
| 31. | <i>Հոսնուտ</i>       | . | . | . | 15 | » |                    |
| 32. | <i>Փուրիս գիւղ</i>   | . | . | . | 50 | » | 1 եկեղեցի          |
| 33. | <i>Խըլհովիտ</i>      | . | . | . | 40 | , |                    |
| 34. | <i>Տըւալինք</i>      | . | . | . | 40 | , | 1 եկեղեցի          |
| 35. | <i>Հըլօղինք</i>      | . | . | . | 50 | , |                    |
| 36. | <i>Եղիաբու</i>       | . | . | . | 30 | » |                    |
| 37. | <i>Մերկիր</i>        | . | . | . | 25 | » |                    |
| 38. | <i>Հըրթխոյ</i>       | . | . | . | 35 | » | 1 եկեղեցի          |
| 39. | <i>Քորախոյ</i>       | . | . | . | 40 | » |                    |
| 40. | <i>Հումանք</i>       | . | . | . | 15 | » |                    |
| 41. | <i>Մըզրա</i>         | . | . | . | 35 | , |                    |
| 42. | <i>Խշանձոր</i>       | . | . | . | 40 | , | 1 եկեղեցի, 1 դպրոց |
| 43. | <i>Խըզրիու արտեր</i> | . | . | . | 45 | , |                    |
| 44. | <i>Սկիթ</i>          | { | . | . | 65 | , | 1 եկեղեցի          |
| 45. | <i>Կուանոս</i>       | { | . | . |    |   |                    |
| 46. | <i>Ընկուզնակ</i>     | . | . | . | 50 | , | 1 եկեղեցի          |
| 47. | <i>Խաչուկներ</i>     | . | . | . | 20 | , |                    |
| 48. | <i>Արտկոնք</i>       | . | . | . | 40 | , |                    |

## ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

Մեր ընթերցողներին լաւանի է այն վէճը, որ ծագել է Թիֆլիս քաղաքի ինքնավարութեան և Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձութիւնը մէջ այն մասին թէ արդեօք քաղաքի հաշով պահպանող և մինչ այժմ քաղաքի ձեռքով կառավարող եօթ քաղաքավին սկզբնական դպրոցները աչսուհետեւ և ում անմիջական կառավարութեանը պիտի ենթարկեն՝ քաղաքի, թէ ժողովրդական լուսաւորութեան օրգանների, որ նոյն է թէ ալդ դպրոցները մասնաւոր են թէ հասարակական (պետական). Այս կարենոր ինդրի սկզբնաւորութեան մասին մենք հակիրճ կերպով զեկուցումն տվինք «Մուկր» 1894, № 9 և 11—12. Այժմ, երբ ներքին գործերի մինխտորն ևս վճռել է լողուս Կովկաս. ուսումն. շրջանի հոգաբարձութեան և երբ Թիֆլիսի քաղաքավին ինքնավարութիւնը իւր խորհրդարանի նիստում առ 4.5 սեպտեմբ. վճռեց, լանձնելով հանդերձ վիշեալ եօթ դպրոցները կառավարութեան՝ բողոք ներկայացնել կառավարիչ սենատի առաջ, հարկ ենք գտնում ինդրի սկզբնաւորութեան և ընթացքի մասին հետեւեալ պարզաբանութիւնը ասար.

Կովկասում՝ ժողովրդական մինխտութեան անմիջապէս ևնթարկւող դպրոցների համար զօրութիւն ունեն 1823 թ. ականի ակսպէս կոչւած Սկզբանական Ստավ (դպրոցական կանոնադրութիւն) և 1867 թւականի «Положение объ учебной части в г. Ереване и за Ереваномъ 25 июня 1867 года (Կանոնադրութիւն կամ պոլոմենին ուսումնական մասի Կովկասում և Անդրկովկասում 25-ն լունիսի 1867 թ.). Այդ կանոնադրութիւններին ենթարկւած դպրոցները անպայման ենթարկւում են Կովկասի ուսումն. շրջանի հոգաբարձութիւն կամ նորա ստորադրեալ օրգաններին. և ալդ դպրոցներում նաև ուսուցիչները ընդունուում են և արձակուում ալդ իշխանութեան կողմից:

Բաց Կովկասում կարող են գույութիւն ունենալ նաև ալսպէս կոչւած մասնաւոր դպրոցներ (փակաղծում նկատենք, որ հալոց դպրոցներին չի վերաբերում ներկայ բացատրութիւնը և նոքա ալլ կանոնադրութեան են ենթարկւում, որի մասին ալսպեղ խօսք չի լինելու): Այդ մասնաւոր կոչւած դպրոցների համար եղած կանոնները կոչւում

են «Правила о частныхъ заведеніяхъ въ Кавказскомъ Учебномъ Округѣ, утвержденныя за Намѣстника Кавказскаго Его Помощникомъ 13 апр. 1879 г. (Կանոններ մասնաւոր դպրոցների մասին Կովկասիան ուսումնարանական շրջանում, հաստատած Կովկասի Փոխարքայի փոխարէն նորա Օդնականի կողմից 13 ապրիլի 1879-ին), իսկ դոցա համար ուսումնական ծրագիրը հաստատեց Փոխարքայի կողմից 1881 թւին և կոչում է Սъебный Планъ туземныхъ школъ Закавказскаго края, утвержденнаго Намѣстникомъ Кавказскимъ (Անդրկովկասիան երկրի տեղական դպրոցների ուսումնական ծրագիր, հաստատած Կովկասիան Փոխարքայից 1881 թ.).»:

Ազդ «մատնաւոր» դպրոցները հիմնելու համար ալնուամինալիւ պահանջում է ամեն անգամ առանձին թուղթութիւն Կովկասիան ուսումն. շրջանի հոգաբարձուի կողմից, որը անուհետեւ ունի միան իրաւունք հակելու որ ծրագիրը դուժագրւի:

Թիֆլիսի քաղաքային ինքնավարութիւնը 1880 թւականին վճռեց հիմնել մի սկզբնական դպրոց մասնաւոր դպրոցների հիմունքներով, ըստ կանոնադրութեան 1879 թւականի, 8—14 տարեկան տղաների համար երեք բաժանմունքով՝ ուր այլ առարկաների թւում կափին ուսումներէն-բոլորի համար, հակերէնի դասաւութիւն հակերի համար, վրացերէնի՝ վրացոց համար, կովկ. ուս. շրջ. հոգաբարձուն հաստատեց ներկայացրած ծրագիրը և թուղ աւեց բացումը դպրոցի 1880 թ. մարտի 3-ին:

Յաջորդ 1881 թւին քաղաքը վճռեց դպրոցի երեք բաժանմունքները վերածել երեք առանձին դպրոցների և հիմնել նաև չորս նույնական դպրոցներ, թւով ուրիմն եօթը, որոնցից 3 ը, ուր ուսումը սկսում է հաջերէնով, հայ տղաների համար, 2-ը, ուր ուսումը սկսում է վրացերէնով, վրացոց համար, իսկ 2-ը, ուր ուսումը սկսում է ուսումների սկսումը անխափի բոլոր ազգութիւնների համար (հայ, վրացի, ռուս և ազն), կովկ. ուս. շրջ. հոգաբարձուն հաստատեց այդ նույնութ. 1881 թ., էարակցելով և այս, թէ թուղ է տալիս այն պայմանով «որ այդ դպրոցների բացելով խստիւ գործադրւի բարձրագուն հրամանը առ 4 լուլիսի 1879 թ., որի հիման վրա Թիֆլիսի քաղաքային հասարակութիւնը կարող է այդ դպրոցներում դաստուներ հրաւիրելու ազն անձերին, որոնք առ այդ իրաւունք (ցենզ) ունեն, բայց միան իւր (հոգաբարձուի) հետ համաձանութիւն կազմացնելով»:

Ազդ դպրոցների անմիջական կառավարութիւնը քաղաքային ինքնավարաւթիւնը բարձեց խորհրդարանի անդամների միջից ընտրւած «Աւումնարանական Մասնաժողով» վրայ:

Մի տարի անցած տարաձանութիւն ծագեց քաղաքի և հոգաբարձուի մէջ. վերջինո պահանջում էր որ քաղաքը այդ բոլոր դպրոցների համար միւր (հոգաբարձուի) առջև մի պատասխանատու կառավարիչ նշանակի և իւր (հոգաբարձուի) առջև մի պատասխանատու կառավարիչ նշանակի:

Երկրորդ որ նահանգի ժողովրդական գլուցների վերատեսչին (որը ուսուադրեալն է հոգաբարձուի) պատկանի իրաւունքը զասացուցակ և մանրամասն ծրագիրներ կազմնլու, նաև որ ուսուցիչներ նշանակւեն նախնական համաձայնութեամբ Ուսումնարանական իշխանութեան հետ և որ ուսումնական ծրագիրը ճշտի կատարելու մասին: Նահանդական ատեանը քաղաքավին գործերի համար՝ իւր նիստում առ 12 մայիսի 1884 թ. քննելով խնդիրը, վճռեց լօգուտ հոգաբարձուի պահանջների, որ ինչ վերաբերում է պատասխանատու կառավարչի նշանակելուն և դասերի ու մանրամասն ծրագիրների Ուսումնարանական իշխանութեան կողմից հաստատելուն:

Քաղաքավին ինքնավարութիւնը կատարեց նահանդական ատեանի վճիռը, բայց միաժամանակ որոշեց բողոք տալ այդ վճովի դէմ կառավարիչ ատեանի առաջ: Քաղաքի ուսումնարանական մամնաժողովը, թուղթութեամբ Հոգաբարձուի, նշանակեց այդ դպրոցների համար մի վերահսկող, (ՅԱՅՅԱԿՈՎԱՅԻ), որի համար քաղաքավին խորհրդարանը մշակեց մի հրահանգ, որը հաստատեց նահանդական ատեանը քաղաքավին գործերի համար՝ իւր նիստում առ 8 հոկտ. 1884 թվի:

Դորանով չիշեալ քաղաքավին դպրոցները ստացան իրանց կտղմակերպութիւնը, և այդ ժամանակից մինչ 1894 թ. ոչ մի վէճ ալ ևս տեղի չունեցաւ:

Բայց վերը ասացինք, թէ նահանդական ատեանի 12-ն մայիսի 1884 թւականի վճով դէմ քաղաքավին ինքնավարութիւնը բողոքեց կառավարիչ սենատի առաջ: Արդ, սենատի վճիռը այդ խնդրի մասին եղաւ միայն նոյնեմբ. 3-ին 1893 թ.: Սենատը գործը տւած է եղել ժողովրդական լուսաւորութեան մինիստրին, որի եղակացութեան վրայ սենատը կայացրել է իւր վճիռը, որի մէջ ասւած է.

«Կառավարիչ Սենատը գտնում է, որ Կովկասեան Ուսումնարանական նրջանի պ. Հոգաբարձուի պահանջը, որով Թիֆլիսի Քաղաքավին Խորհրդարանը պէտք է նշանակի մի անձն ուսումնարանների կառավարութեան (ՃՅԱ ՅԱՅՅԱԿՈՎԱՅԻ) համար, հիմնեած էր այս դէպքում Կովկասեան նրջանի մասնաւոր դպրոցների կանոնադրութեան 11-րդ լոգւածի վրայ, մինչդեռ այդ կանոնները, Ժողովրդական Լուսաւորութեան Մինիստրի եղակացութեան համաձայն, ներկայ դէպքում գործադրել չեն կարող, որովհետեւ Թիֆլիսի քաղաքավին դպրոցները չեն պատկանում մասնաւորների թւին»:

Անա դորանով չեառի, Թիֆլիսի քաղաքավին խորհրդարանը, իւր նիստում առ 17 լունիսի 1894 թ., որոշեց՝ վերացնելով իւր դպրոցներում ժողովրդական դպրոցների վերատեսչութեան կողմից նկատւած պակասութիւնները և բարւոքելով նոցա մէջ դասաւանդութիւնը, բաց անել քաղաքի հաշով երեք նոր սկզբնական դպրոցներ՝ գոլութիւն ունեցողների

տիպարով, խնդրելով առ այդ Հոգաբարձուի թողարկութիւնը. Խակ Կովկասումն էրջ. Հոգաբարձուն և կամ ի դէմս նորա՝ Թիֆլիսի նահանգի ժողովրդական դպրոցների վերատեսուչը, լաբորատոր քաղաքին, որ նա թով է տալիս բաց անել երեք նոր դպրոցներ աճն պարագաներ սական, որ այդ դպրոցների համար ճշգիւ գործադրւեն 1867 թւականի 25 լունիսի Կանոնադրութիւնը. Աւումնական մասի Կովկասում և Անդրկովկասում և 1828 թ. դեկտ. 8-ի Աւումնական Կանոնադրութիւնը. Միաժամանակ գորա հետ Թիֆլիսի քաղաքավին դպրոցների կառավարիչը լաբորատոր գորա հետ Թիֆլիսի քաղաքավին դպրոցների վերատեսուչը 28-ն օգոստ. հրաւիրել է քաղաքավին սկզբնական դպրոցների ուսուցիչներին՝ վերատեսչութեան կանցելարիան՝ քննելու համար ուսումնական-կրթական մասի դրութեան մասին Թիֆլիսի քաղաքավին սկզբնական դպրոցներում, և առաջադրել է նոցա՝ ալսուհետեւ ուսուերէնի գրագիտութիւնը սկսել քաղաքավին հայոց և վրաց դպրոցներում առաջին խակ տարւանից, այլ նաև առ աջադրել է նոցա կազմել զաների ցուցակը և կարճ ծրագիրներ, պատւիրելով ներկայացնել իրեն սեպտեմբերի 2-ին:

Վերջապէս նաև ժողովրդական դպրոցների տեսուչը (որ ստորագրեալ է Ժող. դպր. վերատեսչի) դիմեց լիշեալ դպրոցի ուսուցիչներին լաբորատոր սոցա որ ալսուհետեւ այդ դպրոցների բոլոր գործերի համար դիմեն անմիջապէս իրեն:

Քաղաքի խորհրդարանը զբաղւեց այդ խնդրով իւր նիստում առ 31-ն հոկտ. 1894 թ.: Խորհրդարանը գտնում էր որ իւր դպրոցները հիմնած են իր մասնաւոր դպրոցներ, են Շաբրկող 1879 թւականի կանոններին: Գործը անցաւ նահանգական ատեանը քաղաքավին գործերի համար:

Նահանգական ատեանը իւր նիստում առ 13 դեկտ. 1894 թ. քննեց խնդրը: Ատեանը կազմած էր ալսապէս. նախագահ՝ Թիֆլիսի նահանգապետ իշխան Գէօրգի Դմիտրիեւիչ Շերաշիձէ. Կովկ. ուս. շրջ. Հոգաբարձու Կիրիլ Պետրովիչ Եանովսկի: Թիֆլիսի փոխ-նահանգապետ կոմս Վլադիմիր Ֆեօդորովիչ Տիգինասուզէն: Կառավարիչ Թիֆլիսի արքունական պալատապէս Պատէլ Գրիգորիեւիչ Նաւալլիսին. Թիֆլիսի նահանգական դատարանի դատախազի օգնական Ալէքս. Անտոն. Կրասովսկիի: Թիֆլիսի քաղաքագլուխ Պօղոս Ալեքս. Խզմիալիսան. անդամ նահանգական ատեանի քաղաքափի գործերի համար, Թիֆլիսի խորհրդարանի անդամ Գրիգոր Եւանգուլեան. Ատեանը չորս ձախուղընդզէմ երեքի վիճելի դառնեց վիճելի դառնած ինդիրը լոգուտ Կովկ. ուս. շրջանի հոգաբարձութեան: Ալգուել Կովկաս. ուս. շրջանի հոգաբարձուն և ատեանի մեծամասնութիւնը պնդում էին, որ լիշեալ դպրոցները մասնաւոր էին միան մինչև կառավարիչ սենատի վերը լիշած որոշումը. իսկ սենատի այդ որոշումը լաբորատոր լիսով՝ նոքա այլ և մասնաւոր չեն, այլ հասարակական: Սենատի այդ որոշման մեջ առաջ է:

բերւած ժողովրդական Լուսաւորութեան մինիստրի եղբակացութիւնը, թէ այդ զպրոցները մասնաւոր չեն, այլ հասարակական, իսկ այդ, մեծամասնութեան կարծիքով, պէտք է ընդունել իբր Լուսաւորութեան մինիստրի կարգադրութիւն, որին ստորագրեալ օրդանները ապահանգները չափանից, որ նա փոքրամասնութեանն է չարում, անհնարին համարելով որ իրերի էռթիւնը կարևոր լինի փոխել այս կամ այն հիմնարկութեան կողմից չափանած կարծիքների հիման վրայ, և որ նա իւր համար պարտաւոր է համարում ամենից առաջ հրահանդեկ օրէնքների ճիշդ իմաստով։ Մեծամասնութիւնը (4 ընդգէմ 3) վճռեց՝ ընդունել այսուհետեւ Թիֆլիսի ներկայ զպրոցները իբր հասարակական և դորա համաձանն Թիֆլիսի քաղաքացին խորհրդարանի որոշումը 31 հոկտ. 1894 թ. չնջել:

Նահանգապետը փոքրամասնութեան կողմը լինելով, զիմեց ներքին գործերի մինիստրին, որը, հիմնելով կառավարիչ սենատի վերը առաջ բերած վճռի վերայ, նոյնպէս գործը պարզեց չափում այն հակեացքի, թէ Թիֆլիսի քաղաքացին զպրոցները պէտք է ճանաչւն իբր հասարակական (Կովկ. ուս. շրջ. հրգաբարձուին անմիջապէս ենթարկւող) և ոչ իբր մասնաւոր զպրոցներ։

Քաղաքացին խորհրդարանը, իւր նիստում առ 4-ն սեպտ. ներկայ 1895 թ., յախոնելով հանդերձ որ ինքը ըստ օրինի պարտաւոր է վարել այսուհետեւ նահանգական ատեանի 13 գեկտ. 1894 թ. նիստում կազացած վճռի համաձան, որոշեց բողոք ներկայացնել կառավարիչ սենատի առաջ:

Ա. Ա.

## ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

Հ. Ս Ե Խ Ե Ա Ն Ի

V

Հայ ղերասանների նոր ընկերութիւնը.—Մեր ճանապարհորդող ղերասանները.—Մի քանի խօսք ինքնուրուն կամ թարգմանական պիէսանների լեզվի մասին.—Դերասանական շրջանում ընտրութիւններ.—Դրիգոր Մամիկոնեան:

Եկաւ սեպտեմբերը, և ուրախ ենք հայ-ղերասանական ընկերակցութեան գաղափարը իրագործւած տեսնելով. գաղափար՝ որ ղեռ անցեալ տարի համարում էր անիրագործելի, զլուխ եկաւ չնորհիւ այն համերաշխութեան և «գործին ծառալելու» այն ազնիւ ձգտման՝ որ արտաչափուց ընկերների թէ խօսքերի և թէ գործերի մէջ, մի կողմ գնելով իւրաքանչիւրը իւր անձնական շահերը կամ հաշիւները. Խորապէս համոզւած ենք որ Թիֆլիսի հայ թատրոնի մշտնջենաւորութեան վերջնական ձեռ այս պէտք է լինի՝ «դերասանական ընկերութիւն»—և ինչ եռանդով, ինչ ոգեսրութեամբ որ խումբը գործի ձեռնարկեց, իթէ նոյնութեամբ շարունակէ իւր գործը, պիտի տեսնեփ թէ չեն սխալած իրանց հաշիւներում. Մնում է այժմ հայ հասարակութեան աշակցութեան սպասել՝ որ մաքրենի բեմի գոլութեան և առաջդիմութեան համար գերասանական ընկերակցութեան գործ զրած ջանքերին անտարբեր չմնաչ, և իւր նիւթական օժանդակութեամբ ապացուցանէ թէ գիտէ գնահատել բարին և ազնիւը:

«Դերասանական ընկերութեան» անարգել կազմակերպութեան համար Թիֆլիսում շատ աշխատանք գործ զրեցին պ. պ. Սարգարեան, Արէլեան և Տէր-Դաւթեան, այն միջոցին՝ երբ իրանց ընկեր դերասանները զաւուական ճանապարհորդութիւններով էին զբաղւած. Այս բոլորի մէջ մի ցաւալի բացառութիւն է կազմում պ. Պետրոսեան, որ հրաժարում է դերասանական ընկերակցութեան ներկայացումներին մասնակցելուց պատճառ բերելով թէ աշդ նորկալացումները նիւթապէս ոչ մի իրական երաշխաւորութիւն չեն տալիս։ Նա զնում է ոռուաց խմբերում ծառալելու.

Առաջին ներկայացումը որոշւած է կիւրակէ, սեպտեմբերի 10-ին,  
«Ղարաբաղի աստղագէտը» որ պատրաստում է մեծ խնամքով.

Ամառւաչ ընթացքում դերասանների մի խումբ պ. Պետրոսեանցի  
առաջնորդութեամբ Նուշում պարբերաբար 6—7 ներկայացումն տևեց,  
միենոն միջոցին օր. օր. Ղարդիթեր և Մարի-Հրանուշ բոլորովին ան-  
կախ միենոն քաղաքում տևեցին 7 ներկայացումն. Արդիւնքի կողմից  
ներկայացումները բաւարար էին. Նուշում, և ոչ մի տարի, աչշափ չաճա-  
խակի ներկայացումներ չէր եղել. միենոն միջոցին պ. Արէլեան ուղևոր-  
ուց Ախալցխա և ներկայացրեց «Մեծապատիւ Մուրացկանները». իսկ  
Ա. Վարույր ընտրեց մի ուղևորիծ, որով շատ հազիւ անցած են դերասան-  
ներ, այն է՝ Սլենախի, Լագողազ, Զաքաթալա, Նուշի և Շամախի. Տ. Զա-  
րէլ պ. Պարոն-Սարգսեանի հետ միացած ճանապարհորդում է Կասպից  
ծովի հիւսիսային ափերում գտնւած քաղաքները հնչակէս Պետրովսկ, Դեր-  
բերդ, Ղուբա և այլ. Բացի վերջիններից և Ֆէլէկեան քողերից, որոնք  
հրաւիրւած են ընկերակցութեան ներկայացումներին մասնակցելու Բոլոր  
դերասանները հաւաքւած են Թիֆլիս, և ունենում են խմբի վերջնական  
կազմակերպութեան համար նախապատրաստական ժողովներ. Ազ մասին  
չաջորդ անգամ:

Նորակազմ «Դերասանական ընկերակցութիւնը» երկու պատմանով մի-  
ան կարող է իւր գուստիւնը ապահովել, որոնք են ա.—անսամբլ, բ.—  
րէպէրտուար. Առաջնի մասին բաւականին ուշք է զարձրած, կարելի-  
եղածին չափ համախմբելով ցրւած ովֆերը. բաց երկրորդը և կարեորա-  
գոնը հանգամանքների չնորհիւ դեռ թողնւած է անուշաղիր. ասում ենք  
հանգամանքների չնորհիւ, որովհետև ընկերակցութեան կազմակերպութեան  
վերաց աշխատողները այնքան զբաղմունք ունեին՝ որ խոստովանելով  
հանդերձ բէպէրտուարի կարեորութիւնը՝ երբէք չէին կարող պարապել  
միենոն ժամանակ և նրա պատրաստութիւնով. բաց քանի ուշ չէ, պէտք  
է լարեն բոլոր իւրանց ուշադրութիւնը առնալզ գոնէ 10 ընտիր պիէսա-  
ների պատրաստութեան վերաց, (Ծքնուրոն կամ թարգմանական) և իւր-  
իւ անձամբ փորձառու քաջ պէտք է ըմբռնած լինեն պիէսաների լեզվի  
գեղարւեսի և բեմի պահանչների համաձայն կոկելու և հարթելու մա-  
սին. ինչեր, ինչ արտառոց նախադասութիւններ, ինչ անմարսելի ոճեր,  
ինչ անձունի բառեր ասես զերասանների բերմում ծամելու չեն դնում  
մեր պ. պ. հեղինակներից և թարգմանիչներից շատերը. Բեմից հնչող  
լեզուն պէտք է լինի մաքուր հաւերէն, զուած, մաքրւած օտարա-

մուտ նախադասութեան ձեւրից, և չարմարեցրած առողաճութեան պահանջներին. Այս կէտի վերակ մեր «հոչակատրո թատրոնական կոմիտէտները մինչև ալսօր ոչ մի ուշադրութիւն չեն դարձրել, այնպէս որ առձեռն գտնւած պիէսաների լեզուն կանոնաւորելու համար պէտք է զործ դնել քրտնաջան և տաժանակիր աշխատանք. Այս կէտի վերակ հրաւիրում ենք ընկերակցութեան վարչութեան ուշադրութիւնը, որպէս զի բեմի վերաց հալ լեզուն բռնէ իւր պատշաճաւոր տեղը և շտանջէ այն հանդիսականի լսելիքը և սիրտը, որ թատրոն մանելավ պահանջում է բեմի վերակ տեսնել բարեխիղճ դերակատարութիւն և լսել անարատ մազրենի լեզուն՝ իւր բոլոր գեղեցկութիւնով.

Կրկնում ենք, այս խնդիրը շատ կարևոր է և պահանջում է լուրջ ուշադրութիւն. լաւ կ'անէր ընկերակցութիւնը, եթէ այս գործը չանձնէր մի խումբ մասնագէտների.

Խօսելով պիէսաների լեզվի մասին, մեր աչքից չէ վրիպում և մի ալլ կէտ. Շատ չաճախ հեղինակներ կամ թարգմանիչներ, բարձի թողի են արել անպիսի բառեր և ոճեր, որոնք իրանց արտավազութեան մոքին համանիշ էին. բարձի թողի են արել՝ ի նկատի ունենալով որ ազդ բառը ամբոխի, մեծամասնութեան համար անհասկանալի է, նրա փոխարէն դրել են մի բառ՝ որ թէե հասարակութեան ամեն գասակարգերին մատչելի է—բայց արտավազելու մտքին ոչ հոմանիշ—աշդպիսով լեզուն տուժել է, հպատակւել է նրանց՝ որոնց ինքը պէտք է տիրապետէր. Դա մի շատ սիսալ սկզբունք է որ պէտք է միանդամ ընդ միշտ արմատախիլ անել. Եթէ մենք հաւատում ենք որ բեմը ևս այն օրգաններից մէկն է, որ պիտի մշակէ և ծաղկեցնէ մարդենի լեզուն, այն ժամանակ ազդ խընդիրը ինքն ըստ ինքեան կը լուծեի. Ցիշում ենք գեռ այն օրերը, երբ թիֆլուսում շատ շատերը չէին հասկանում «ապարանջան» բառի նշանակութիւնը և բեմից սովորեցին. Միենոն ժամանակ չենք մոռացել մի թարգմանչի իւր թարգմանութեան մէջ սառն արեամբ չիշած «ցիտադէլ», «ազլուվ» և «Փլոտ» բառերը. Բեմը մի անհման միջոց է, հետզհետէ անզգալի կերպով մեր լեզվի անզին գոհարները հասարակութեան գանձան շրջաններում տարածելու. թող հեղինակը կամ թարգմանիչը աստիճանաբար, առանց իւր դրւածքը անմարսելի դարձնելու, հետզհետէ հալ լեզվի ծոխութեան մասնակից անէ հասարակութիւնը, որին սկզբում որքան էլ խորթ թւեն իւր չհասակացած մի քանի բառերը, այնուամենանիւ նա կընտելանաց և կը սովորի.

Հայ լեզվի տարրական գիտութիւնից գուրկ են նաև մեր բեմի ներկայացուցիչներից շատերը. պէտք է սովորեն. Դեռ շատ ժամանակ չէ անցել այն օրից երբ մի գերասանութիւն աամբատանւածու բառը արտասանել չկարողանալու պատճառով՝ «ամբատանւածու»-ը ստիպւած էինք փոխել «զրպարտւած»-ի...

Մեր դերասանները և դերասանուհիները պարտաւոր են հայ լեզուն սովորել, այլապէս նրանք իրաւունք չունին հայ բեմի վերակ մնալու:

Հայ դերասանական ընկերակցութեան սննդամերը կիրակի, օգոստոսի 27-ի ժողովում գանձապահներ ընտրեցին պ. պ. Տէր-Դաւթեանին և Ա. Սարդարեանին. իսկ իբր վերահսկող և բէժեսօրի օգնական՝ պ. Յ. Արէլեանցին. Ընկերութեան կանոնների համաձայն այս պաշտօնների վարողները ընտրւում են մի ամիս ժամանակով։ Հաւատացած ենք որ պաշտօնի կոչւած պարունները, որոնց եռանդից շատ բան է կախւած նորակազմ խմբի լաջողութեան համար, իրանց վրայ դրած լուսերը պիտի արդարացնեն.

Երեքշաբաթի, օգոստոսի 29-ին Թիֆլիսում վախճանւեց Դրիգոր Մամիկոնեանը 75 տարեկան հասակում։ Հանգուցեալը 50-ականներում Կ. Պոլսից Թիֆլիս տեղափոխւելով իրան նւիրել էր դպրոցական դործին՝ միւնուն ժամանակ նորա հետ կապել էր թատրոնը։ Իւր աշակերտները տարին մի քանի անգամ ներկազայտմներ տալով հող էին պատրաստում ապագայ հայ թատրոնի համար՝ որի գաղափարին անձնւէր էր հանգուցեալը։ Գ. Մամիկոնեանի ձեռագրերում կան շատ հետաքրքիր դոկումէնտներ Թիֆլիսում հայ թատրոնի սկզբնաւորութեան միջոցին պատահած դէպքերի, ինչպէս նաև Թիֆլիսի նախնական հայ թատրոնի խմբանլարների հաղւագիւտ օրինակները։

## ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆԳԼԻԱՅԻՑԻՑ

Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ

### IV

Որչափ ուրախալի է, երբ կոնդոնում մի քանի մռավ օրերից լետոս մի առաւօտ էլ զարթնելով, մարդ փողոց է ելնում և արև տեսնում:

Այն օր, որ մենք վճռել էինք կոնդոնի աշտարակն ալցելել և լետոս էլ կենդանաբանական պարտէզը գնաւ, արեի մի աղօտ լոյս ողողում էր հսկաչ քաղաքի փողոցները, կոտի աղօտութիւնը նրանից էր, որ մարտիուղի մի բարակ շերտ դեռ ևս ծածկում էր արեի գէմքը, Փողոցները թաց էին, բայց խօ ցեխ չէին. չը որ նրանց լատակն ամբողջ ցէմննտով սալած էր:

Օմնիբուս չնստեցինք. քալւելը աւելի ախորժելի էր Անց ու զարձը սկսել էր, մի եռացող և շշմեցնող անցուղարձ մարդկանց ու կառքերի: Նրբէք ինձ աչնքան առողջ չէի զդացել նւրոսկակի մի քաղաքում, որքան որ կոնդոնի մառախուղավիշն եղանակի մէջ զգում էի: Ուղեղս թարմ—գործում էր, հետաքրքրութիւնս գրգռուել էր և ևս բարեկամիս կողքից քաէլելով, հարցերի կարկուա էի տեղում նրա վերաբ—ի՞նչ է այս, ինչ է աչն միւսը... ինչու ոսաիկանը բռնեց այդ կուշ թեհց: ինչու աշդքան արագ են քալում մարդիկ, ինչքան էժան ևն հագուստները, զրական պիտուքները... ևազն, ևազն. մի բոպէ զաղար չէի տալիս նրան. ինչպէս զաղար առնել տեսածներիս առջեն, որոնցից իւրաքանչիւրը նոր բան էր ինձ համար. ևս կամենում էի բոլորն իմանալ, անբացաղբելի ոչինչ չթողնել. մինչ իսկ մի բոպէ ստիպեցի բարեկամիս՝ փողոցի մէջ տեղում կանգ առնելու, որ ինձ պրակտիկական կերպով—ալսինքն ցոյց տալով—բացաղրէր թէ ինչպէս են գործում հրդեհի ժամանակ այն տնակներն ու ահապին մեքենաները, որոնցից սամն մի փողոցում հանդիպել կարելի էր և որոնց մօտ անդադար պտուս էին գործում հրչէջ զինւորներու:

Հղում էինք զրէթէ վազող ամբոխը. ամենքը շտագում էին. ոչ ոք

չկար որ մտազբազ քալւածք ու խորհող արտավազութիւն չունենար. չէին երեսում երբէք աճնպիսի երջանիկ-ապշագին դէպքեր, որոնք ասիական քաղաքների փողոցների անցորդներն են կազմում և որոնք՝ նման մի լաւ ճաշ արած անասունի, դանդաղ քալւածքով երեսում են ասիական քաղաքների փողոցներում, ապուշ հայեացքով զննում նուն իսկ մի տերենի անկումը ծառից և ձեզ են նալում կատարեալ կոլալին արտավազութեամբ:

Ակստեղ ընդհակառակն, երեսում էր որ երջանիկների աշխարհում չէի. ամեն ոք շտապում է, ամեն ոք մտածում. ժամանակը ոչ թէ արծաթ է, այլ ուղղակի աղամանդ (չէ որ արծաթի գինը ալժմ կոտրւած է)... պէտք է գործել խորհել, առաջ դնալ, վազել...

Որպիսի գործունէութիւն, որպիսի բառաջխաղացութիւն է երեսում այդ քաղաքում. մարդ խղճահարւում է և նոյն իսկ մի անհրաժեշտ հարցումի համար լինի, սիրտ չէ անում կանգնեցնել անցորդներից մէկին և տեղեկութիւններ հարցնել, չնայելով որ ամեն մի անգլիացի սիրալիր է և քաղաքալարի:

Իսկ կառքերը, օմնիբուսները... որոնք միշտ հոսող շղթավի օղերի պէս՝ միմանց ետերց անընդհատ գլորւում են, կրելով լիքը անցորդներ. Անքան շատ են, անքան լիքը նրանք, որ կարծես ամբողջ աշխարհն է որ տեղափոխուամ է, որ հոսում է. Նալում եմ մի կառքի թւահամարին— 14,000 է. մի օմնիբուսինը՝ 15,843...

Որպիսի կոնտրաւու, չէ, երբ մարդ մտաքերում է մեր ասիական նոյն իսկ ամենաքաղմամարդ քաղաքներից մէկը, նրա կառքերի թիւը, նրա փողոցների մէջ եղած դանդաղ, կրիական անցուղարձը, նրա ընակիչների՝ ժամանակ սպանող քալւածքն ու ստամոքսալին, անասնացնող շուպութիւններ մտածող հայեացքը...

Երկար քալելուց իտու օմնիբուս նստանք գնալու համար մինչև լոնդոնի նոր կամուրջը, որի կողքին էր գտնուում լոնդոնի աշտարակը, ձանապարհին բարեկամս մատնացուց արեց մի բարձր կոթող-աշտարակ, որի գլխին կար փշիչոտ ուկեզօծ մի գունդ.

—Խոլերավի վիշտակարան է, ասաց նա.

Մի տեսակ ճնշւած սրտով նակեցի այդ բուրգին. նրա համար արդեօք որ նա վիշտնում էր մարդկալին բազմաթիւ զոներ... Բայց այդ չէր աւելի որ ճնշեց սիրտս, որքան այն միտքը, որ մալ զկութիւնը, մինչն իսկ ամենաքաղաքակիրթ աշխարհում, աճնքան ողորմելի է, որ իր անկարողութեան և անձարակ դրութեան վիշտակարանն է կանգնեցնում՝ ապագայ սերունդին իր վրաէ ծիծաղեցնել տալու համար. Զէ որ մենք ալժմ բաւական ծաղրում ենք մեր թշւառ նախնիքներին, որո՞ք հազարներով կոտորւում էին ծաղիկ հիւանդութիւնից. Բնչ կը լինէր եթէ մենք անցնէինք ալդ հիւանդութեան զոների համար կանգնած մի վիշտակա-

բանի առջեից. կ' ասէինք—«ողորմելիներ, որքան տղէտ էք եղել, որ հազարներով կոտորւում էիք ալդպիսի մի աննշան հրւաճութիւնից...» և կ' անցնեն գուցէ ոչ շատ տարիներ, գուցէ հենց մեր որդիքը, երբ կը տեսնեն խոլերավի վիշտակարաններ՝ կը ծիծաղեն և կ' ասէն «որքան ողորմելի էիք, հայրեր, մի չնչին բացիլի առջեն»:

Այս, մարդկութիւնը գեռ շատ և շատ ողորմելի է ու խղճալի, նազեռ իր մանկութեան մէջն է, նրան դեռ շատ բան և շատ ժամանակ է հարկաւոր որ կարող լինի քաղաքակիրթ բառը գործածել իր համար՝ առանց գոնէ ծիծաղելի գտոնալու ապագալի առջեն:

Խոկ որքան աւելի վայրէնի է եղել նա անցեալում, որի բարբարութեան վիշտակարանի մէջն էր, որ ոտք էինք կոխում մի քանի բոպէ վետոց:

Լոնդոնի աշտարակը հիմնած է 11-րդ դարում (1078թ.) Վիլհէլմ<sup>1</sup> աշխարհակալի (conqueror) ձեռքով։ Անուհետեւ քանի քանի թագաւորներ, մանաւանդ Հենրի VIII-ը, մարդիկ և կանաքը են զիսատել, խեղտել ոչնչացրել ալդ աշտարակի մթին խորչերում կամ նրա միջի լան հրապարակի վրա։ Խրաքանչիւր սենեակը, խրաքանչիւր դուռն ու բազը արիւնոտ է, բոնակալների կրքերի զոհ գնացած անմեղների արիւնով լազեցած։

Եւ այդ, արիւնով ուռնացած աշտարակի մի օննեակում դրւած են թագաւորական սոկեաչ մտկաններ (մէսսեր), թաղեր և ուրիշ ականակուու զարդեր։

Աշտարակը որոշ օրեր բաց է ալցելուների համար։ Կան ուղեցուցներ, կան գրքեր և տեղեկատու մարդիկ։ Մենք մի գիրք առանք և ներս մտանք, Զեմ կանդ առնիլ նկարագրելու ոչ նրա սենեակները և ոչ էլ զարդերն ու զէնքերը։ Մենք արագ մի պտուս արինք և իջանք, մի վայրկեան միաւն կանդ առի քունինուր կոչող աշխարհիս ամենամեծ ադամանդի առջեն։ Նա զրւած էր ոսկեաչ թագերի, ադամանդազարդ շքանշանների մօտ։ չզիտեմ ինչոր, ոչ աշխարհիս ալդ ամենամեծ գոհարը ինձ վրաէ տապաւորութիւն թողեց և ոչ խոկ վանդակապատ շրջանում զտնուղ ու կեաչ թաղերն ու նրանց վրաւի բոցեր արձակող քարերը։ Կարծես պղնձի կտորներ լինէին, ապակիի կտորներով զարդարած։

Ալդպէս էլ էր. ինչ օգուտ մարդկութեան՝ հարսաւութեան ալդ տեսակ անշարժութիւնից, չի որ ալդտեղ միլիօններ կավին, որոնք կարող են հարիւրաւոր թշւառութիւնների առաջն առնել և, աշտարակի շուրջը, անօհարիւրաւոր թշւառութիւններից առաջն առնել և սեռնող եղբակներին փրկել անկումից և մահից։

Մի անշարժ կապիտալ հարսաւութիւն, ոչ միան անօգուտ է, ալդ վնասակար։ Իբր հնութիւն են դիզել ալդ միլիօնները՝ աշտարակի մէջ։ Մարդկութիւնը հնութիւնից անքան չէ օգտում, որքան որ նրա անունով և նրանից՝ վնասում է (՞ Խմբ.):

Քիչ լետու մտանք զինարան, տեսնելու համար այն գործիքները որոնցով մարդիկ հնումն խողիողել են միմեանց. Հսկակ սենեակները շքեղապէս լիքն էին մարդկալին արիւնարբովթեան գործիքներով. բերան առ բերան լցրել էին միջնադարեան և նոր զէնքերով.

Մարդիկ—պարզ երեսում էր—էնց սկզբից էլ այնքան հնարապէտ չեն եղել բնութիւնն ու գաղանները լաղթելու, որքան միմեանց ջարդելու գործում. Ցուց աւելի ինձ, ի միջի ալոց մի գործիք, որը ձգում էին մարդի զլիս. զէնքը իջնում է վզին և բաւական է մի ցնցում՝ կարտելու համար վզի երակները. Այդ գործիքը, սական, այնքան իմ զգւանքը չը շարժում, որքան որ շարժում են հրացանն ու թնդանօթը, չնաելով որ առաջինի մօտ էին ժողովել շատերը և իրենց սարսափն էին արտաքայտում անգլիացիք. իսկ այն թնդանօթին, որ մի հարւածով կտոր-կտոր է անում հարիւրաւորների, ոչ ոք չէր նալում. մինչև իսկ, երբ մօտիցը անցնում էինք, ասում էին շատերը «որքան սիրուն թնդանօթ». Աւ իսկապէս մէկը կար, որ լատկապէս շքեղ քանդակներով գարդարած՝ դրած էր սրահի մէջ տեղում, որպէս զէնք թագաւորի, որպէս արիւնարբուների ամենասոսկալին:

Հեռւից նալում էի արդ գործիքին այնպէս, որպէս մարդ կը նաև աստւածացրած բորինու, պաշտող չարիքի. Ինձ համար մի սուր, մի նիւզակ աւելի պատւաւոր է քան թնդանօթն ու հրացանը, որնք վասի պէս սպանում են, եթէ մի վախկոտի ձեռք անգամ լինին և եթէ զիմացի կուողը ամենաքաջ անձ իսկ լինի. զէնքեր, որոնք ոչնչացնում են անձնապաշտպանութեան ողին. Առաջինները եթէ բնական անգութ ընարականութեան զէնքերի տեղ էին ծառաւում, երկրորդները, որի համար ոչ Փիոդիքական որժ է պէտք և ոչ էլ խելք, ալլահուման են նպաստում (? Խմբ.):

Ազնիւ զդացմունքների սպանիչը եթէ փողն եղաւ, հերառութեան ու քաջութեան լատկութիւնների սպանիչները թնդանօթն ու հրացանը եղան:

Զարդարած թնդանօթը գտնւում էր սրահի կեղրոնում, շրջապատւած ամեն տեսակ՝ զէնքերով, որոնց շարել էին իստ կանոնաւորութեամբ և գեղարւեստապէս:

Նոյն սրահի մէջ, մի փոքրիկ բաց դուռ՝ առաջնորդում էր զէպի մի նորմանդական սարիլով շինւած մասուու. Ամեն մանող զլսարկն էր վերցնում. Խաղաղութեան և եղբայրութեան վարդապետի տաճար էր նա, կանգնեցրած մարդկալին արիւն հոսեցնող զէնքերի թանգարանի կողքին.

Խեղտաւում էինք, ծանր էր սոսկալի աշտարակի օղը. Դուրս գնացինք շունչ առնենլու համար գետափի վրայ:

Եղանակը բաւական զով էր, բայց արել հետզհետէ պարզել էր և նրա ծառագալթները մի զւարթութիւն էին սփոռում լոնդոնի վրայ Փողոցները սովորականից աւելի լիքն էին. հասարակական պարտէզների մէջ բաղմութիւնը ահապին:

Ավգ տեղից մենք գնացինք կենդանաբանական շքեղ և մեծ պարտէզզ:

Այդպէս ահապին, զեղեցիկ և հարուստ՝ կենդանիներով՝ պարտէզզ դըժար թէ լինի աշխարհիս մի որմիցէ ուրիշ քաղաքուս: Ամեն տեսակի թռչուններ, սողուններ և գաղաններ կարելի էր տեսնել ալտեղ:

Հէնց որ ազգին մտանք, մեր ացելութիւնը սկսեցինք կրիաներից: այդտեղ էին հսկայական կրիաներ, որոնք իրենց բարակ վզերը դուրս հանած՝ հազիւ էին շարժում տեղներից: Դրանց կողքին էին դիշատիչ թըռչունների վանդակները: Հիմալայան, Սէլզանի ծովալին արծիւնները, Հընդկաստանի ցին արծիւ, Աֆրիկեան ծովալին, ազաղակող արծւի արուն և ալդ թռչունների թագաւորների կողքին՝ Աֆրիկեան բազէներ, Հնդկական և Եւրոպական փալկոններ... Կատունների բաժնի, ուր կալին բազմաթիւ տեսակներ, ճիշտ դիմացը ոստոստում էին ազաղակ կերպով 5—6 ամերիկական կենգուրուններ: Կատունների սրահի ետեսում գտնուում էին կապիկների վանդակները: Մենք մի քիչ կանգ առինք շիմպանզէի առաջ, որովհետեւ նա խլել էր իրեն պարզած մի գլխարկ և ներսում նրանով օվնքագութիւններ անում առանց ուշադրութիւն դարձնելու իրեն ուղղած սպառնալիքներին կամ աղաչանքներին: Զէր էլ կտրտում գլխարկը: զլիսին էր դնում, ոտներին հագցնում և կամ երեսի տակը գնելով՝ գլուխունծի տալիս լարդի վրա:

Նապիկների մօտից անցանք մենք մի կամուրջի տակից, որի վերսումը մի փողոց էր, և անցանք ազգու երկրորդ մասը: Կմենից առաջ նստեցինք ան մեծ բացօղեակ վանդակների մօտ, որոնցից մէկում զրւած էին երկու առիւծներ, իսկ միւսների մէջ եղող ժայռերի տակ քնել էին կամ վանդակի շուրջը լուսահատ պտուտներ անում՝ բնդալեան կատաղի վագրեր:

Անտահետև միմևանց ետեից ացելեցինք բեեռապին սպիտակ արջերի, տեսանք բիզոններ (որոնք աչմ շատ հազւագիւտ են) և լամաներ: Թըռչունների բաժինում մաանք բազմաթիւ թռւթակների հանած մի դժոխակին ազմուկի միջով: Սքանչելի գոճներով բազմաթիւ մանր ու մեծ թռչուններ—գրախտահաւ, սիրամարդ, ֆազան... լցրել էին մի ամբողջ երկար սրահ:

Սրահի մօտն էր երկու ահապին փղերի բնակարանը: այդ կենդանիներին քիչ լիտու հանել էին զուրա, մանուկների հեծեցրել ման էին ածում: Կալին նաև երկու տեսակ ոնդեղիւրներ և տասնեակ տեսակ անտիլոպներ, որոնք ոստոստում էին իրենց շինութեան մէջ:

Զեռունների բաժինն ևս նոնքան հարուստ էր, որքան միւսները: Հսկայ եղ-գորտեր, երկու բազկաչափ հաստութեամբ և 3—4 արշինաչափ երկարութեամբ բօաներ, աֆրիկական սուլող և ալլ օձեր, որոնք սողում էին իրենց ապակեպատ վանդակների աւազների վրա: Խլեղներ, քամէլիններ, քառթաթողներ,.. անհամար էին, նէնքը ապակիպատ տանիք ու-

Նէր և ներսից միշտ առաքութիւնը պահպանուում էր, որովհետև այնտեղ պահւող կենդանիները բոլորն էլ ալրեցեալ գոտու անասուններ էին: Շիստութեան մէջ տեղի երեք աւազանների Աէջ, որ կիսովին ջրով լիքն էր և ունէր դուրս ցցւած ժայռեր, հանգչում էին 5—6 հատ կոկորդիլուններ, իրենց ձագերով:

Երկար տեսց մեր պտոչտը և սական գեռ շատ քիչ տեսանք. մեր հակեացը թռուցիկ էր և շտապ, արագ անցնում էինք առանց կանգ առնելու, որովհետև կէսօրը անցել էր արդէն:

Լոնգոնի կենդանաբանական պարտէզը մի ամբողջ աշխարհ է, որ բաց է ամեն օր իր հետ ծանօթանալ ուղողների համար, ամեն տեսակ տեղեկատու գրքեր և մարդիկ պատրաստ են այցելովի համար, իսկ կենդանիների վանդակների վրայ գրածներն իսկ բաւական մանրամասն են բացադրութեան համար: Երանի նրան ով մօտ է և կարողանում է դործ նականապէս ուսումնասիրել այն բոլորը, որոնց համար գպրոցներում տարիներով չարչարում են, գրքերի վրայ կռացած...

Պարտէզն ունի ամեն լարմարութիւններ, նստարաններ հանգչելու, ծաղկանցներ, սրճարաններ և ճաշարաններ: իսկ մուտքը մի շիփնդ արժէ միավն:

Կէսօրից լետու օդը աւելի տաք էր, դրա համար էլ բարեկամս առաջարկեց շոգենաւակ նստել և մի թեթե պատու անել թեմզավ վրայ:

Շոգենաւակը լիքն էր, արիշ բնակարաններից դուրս էր հանել բոլոր արարածներին և ես ամբողջ մի քանի ժամ վահելեցի հաշալի գեղեցկութեամբ և ծիրանագոյն մորթով անզլուհիների տեսքը: Որպիսի մարող հմալող աչքեր ունին և որպիսի խոր կապուտակ բիբեր, նուրբ և սքանչելի փափկութեամբ կաշի: Զմաւելի են անզլուհիները, ոչ մի տեղ նւրուպակում ալզքան գողմրիկ և հմաշիչ դէմքեր չեի տեսել, ալզքան սիրուն ուկեգոյն մազեր, կախարդիչ աչքեր և քնչքոչ, վահելու հասակ: Մի բան միավն որ խորթ էր թւաւմ, զա նրանց հագնւելու անշնորհքութիւնն էր: Վերարկուները՝ մի մի տոպրակ, շրջազգեսանները կարւած անճաշակ, հագած անինամ, իսկ զրած գլխարկներն ուղղակի ծիծաղ էին շարժում: Նրանք կամ գերմանացի ուսանողների պէս ցցւում էին զլիսի զագաթին և կամ բեռնաւորւած էին 5—6 թռչունի բոլոր փետուրներով և խոշոր, կեղծ գոյն ունեցող ծաղկիներով... աչդ բոլորը ման գալու ժամանակ՝ ծիծաղելի կնրպով ցնցւում էին:

Անզլիան արդէն իմ աչքիս մի մարմնացած հակասութիւն էր երեսում: Բայց մենք սլանում անցնում էինք հսկաչ կամուրջների տակից: Կամուրջներ, որոնց կարծես տիտաններ էին եղել սիւներ դնող՝ կորզելով

Հեռներ ու ապառաժներ Սկսվիական լեռներից, կոթնեցնելով նրանց Թեմզավի կամուրջներին:

Ինձ վիճակւած էր ազգօր միշտ կոնտրաստների հանդիպել: Առաւօտեան տեսել էինք արխինալի սրահները կից Աստուծոյ տաճարին, անա ալֆմ էլ սլանում էի մի հոկազական հարստութեան ու ողբալի թշւառութեան կոնտրաստի միջով: Մեր աջ կողմում քաղաքն է իր շքեղ մեծ չէնքերով, իսկ ձախ կողմում երկնքի երեսը սեանում է գործարաններից դուրս ժայթքող ծուխով, գործարաններ, որոնց միջից և որոնց մօտ երեսում էին լուսդոնի բնակիչների կենից աւելին՝ մուրի ու ցեխի մէջ թաթախւած, ցնցուիներով ու սե քրտինք թափելիս...

Շոգենաւաւկը անդադար կանգ էր առնում աջ կողմում գտնող նաւահանգիստների մօտ: Խջանք մենք Ուեստմինստրեան կամուրջի վրայ և ավտոելից կամեցանք մի հայեացք նետել քաղաքին: Բարձրացանք կամուրջի վրայ, կողքին շինած մի ապատանդնի վրայ և նախում էինք մշուշապատ լուսով քաղաքին: Մեր կողքին նստել էին շատ ուրիշներ էլ ի թիւս որոց և երեք մանուկներ:

—Գրպանդ լաւ պահիր, ասաց ինձ Փրանսերէն բարեկամու—և կողքիդ մանուկների վրու աչք պահիր:

Ես նախում եմ մանուկներին: Ազգ աստիճան թշւառ խեղճութիւնը ևս ոչ միայն Նւրոպալում, ալ նոյն իսկ Տաճկաստանում և Պարմկաստանում չել տեսել: Քիւրդը աճնքան անխնաց չէ մերկացնում մարդկանց, որքան որ թշւառութիւնը կտշաել, ծւկի ծւկի էր դարձել սրանց շորերը:

Նրեցն էլ նստած խօսակցում էին և ծխում էին գարշահոտ սիգարեներ: Նրանցից իւրաքանչիւրը հազիւ 10—12 տարեկան լինէր: Երեսները և ձեռքերը կեղտոտ, մարմնի մերկ մասերը սեացած, ճակատը կնճռոտ և արտավազութիւնները հասակն առած անձերի արտավազութիւն: Երեսում էր, որ թշւառութիւնը նրանց թաթախել էր ամեն տեսակ տիզմի մէջ ու հանել, բովել էր նրանց կեղտի և անբարուզանութեան փոսի մէջ: Նրանց հայեացքները մեր դրամնի, մեր շորերի, լետով՝ անցնող անգլուհների վրայ նստած պակշոտ ակնարկներն ու ծիծաղները... շատ բան, շատ ձընշող բաներ էին պատմում... մի ամբողջ հասարակութիւն և նրանց նիստա ու կացն մտաբերեցի որ աճնքան ճոխ կերպով նկարագրած է Մաքսիմ դը Կացնի «լուսդոնի թշւառութիւնները» գրքի մէջ:

Խօսում էին նրանք, մէկը պատմում էր, իսկ միւսները լսում էին սիգարը բերանների անկիւններին, ատամններով բռնած: Երբեմն, երբ մի դործաւորունի կամ ուրիշ հասարակ հագուստով կին էր անցնում, նրանցից մէկն ու մէկը սիգարը բերնից հանում էր և լրբենի ժայթքով՝ փողոցավոն սրախօսութիւններ էր ժայթքում գէպի նա:

Ոչ մի ողջ հագուստ չկար նրանց վրայ, աղպէս կեղտոտ և պատը-

տած հագնել կ'ամաչէր նոյն իսկ թաւրիզի ամենաթշւառ մուրացկանը։ Մի կօշիկ, որի ծալրերից ոտի կեղառա մատերն էին երևում. թեի վրայ ամեն կողմից, մերկ մարմինը տեսնում էր... Եւ այդ սոսկալի թշւառու թիւնը իմ աչքի առջնն էր, Աւստմինստրեան, պարլամենտի և ազ հրաշակերտ պալատների առջն, և այդ խեղճութեան մօտից կառքերով անց նում էին միլեարդներ կուտակող և նրանցով ալղալիս թշւառութիւններ դարբնող լորդեր ու բուրժուաներ, որոնք անդլիական արտակեղյունութեան հնազանդ՝ զարդարել էին ոսկով ու արծաթով կառքի ձիերն իսկ։ Ազ հակատութիւնը Անգլիայում, ամենից ճնշողը, ամենից սոսկալին է։ Հազարաւոր մարդիկներ մեռնում են քաղցից, կեղտի և անբարույականութեան մէջ տառապում, ամբողջ թագեր ու քաղաքներ քիչ է մնում, հաց չգտնելու համար, միմեանց մորթեն ուտեն, աւելի տղմու են եղել քան նոյն իսկ խողերը... մինչ բոլորմին մօտ, պերճութիւնն ու շուալութիւնը իրանց լրենի ժայտներով՝ ծիծաղում են այդ տառապանքների վրա։ Ո՞վ չգիտէ այն անիրաւ անհաւասարութիւնը, այն երկու ծալրաց զութիւնները, որոնց կերակուրն է եղել Անգլիան և զլեթէ Նորոպակի կէսն էլ նրա հետ. ով չգիտէ որ անազին հողերից վոնտում են հաց վաստակող թշւառ աշխատաւորներ, որպէս զի հողատէր լորդը կարողանար որս անել և զւարճանալ։ Ո՞վ չգիտէ այն սոսկալի թաղերը Անգոնի մէջ, ուր միլիարդների տէր աւազակները մղել—գոյացրել են անօթիների մի աշխարհ, պատրաստել են նրանց համար տիզմ, պատճառ են եղել որ ազտեղ մարդիկ տղիտութեան, անբարույականութեան և անօթութեան մէջ աւելի փարենի և աւելի թշւառ լինին, քանինչոր ստոր արարած կարելի է երեակակել...

Եւ մետք, այդ թաղը մշտապատել են ոստիկաններով, որպէս զի իրենց պատրաստած զոհերի վայրենութեամբ իրենք էլ զոհ չգնան։ Ազ թաղն է Ուալթ Զափը (White chapel) կոչող քաղաքամասը, որին տեղացիք կոչում են «Ուժրագործների թաղ» անունով։ Ուժրագործ..., ամեն ոք սարսափով է արաւասանում այդ բառը, սոսկումով անցնում այդ մութ ու խուլ փողոցների մօտից, չհամարձակւելով նրանց մէջ մտնել. միմեանց պատճում են այն մարդու մասին, որ 8 հասարակաց կին է խողխողել և դեռ ոստիկանութեան ձեռքը չէ ընկել. շնչալով իրարու լամանում են այդ նեղ կիրճերում գիշերով կատարւող «վեղտերն ու ոճիրները» և ամեն ոք ազդէս, արդիւնքը տեսնում է, նրան սոսկալի գտնում, առանց մի բոպէ հարց տալու պատճառների մասին... Պատճառը, առայ ինձ մի բուրժուաց—բնչ պատճառ կուղէիք լինէր, եթէ ոչ ան, որ այդ մարդիկ ուժրագործների ցեղին են պատկանում. զեռ անսառուն են մնացել և մարդկութեան համար վասակար, պէտք է ոչնչացնել նրանց բոլորին։ Իսկ մի ուրիշը աւելացնում էր որ ազդութեան կուի չղիմացող արարածներ էին

և ոչնչանում էին, որ ազատեռւել են և ատաւիզմի արդիւնք են, որ հարկաւոր էր թողնել նրանց ազնպէս՝ փշանալու և չարժէր նրանց պէս թուզ և փշացած հասարակութեան թողնել աճելուց, Սպիտակի էր հոտում, բուրժուազական ազդ մեծ փիլիստիակի խօսքերն էր կրկնում նա:

Եւ ազդպէս, փազլում է շուակը, անամօթ պերճութիւնը էնտին աստիճանի թշւառութեան կողքին, փազլում է միլիոններով աշխարհն ապականող շնծերը, քաղցածութիւնով ապականւող մանուկի առջելից, անցնում է գրգուիչ ուտելիքներից և խմելիքներից շփացած աղնւական տիկիննը և իւր լորնետով զիտում է այն մանկահասակ կիսամերկ կնոջ, որ մի կտոր հացի կամ մի գիշերւայ պատսպարանքի համար, ինքն իրեն ծախել էր նոյնառեսակ թշւառութիւնների արդիւնք մի զգելի վէրքերով լիքը դորժաւորի:

Գլորւում է նաև հաստափոր կրօնաւորը շքեղ կառքի թաւշեալ բարձերի վրայ ընկողմանած, պարաղիտութեան մէջ նարպացած, ուտելուց լավիրացած... և իրեն նախող տղմաթաթախ ծերունուն բաշխում է համբերութեան խրատներ, աղօթքներ...

Եւ այս կոնտրաստները որքան շեշտւած են, որքան ճնշիչ են...

## ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ԲԱԺԱՆՍՈՐԴԻՆԵՐԻՆ. Խմբագրութիւնս խնդրում է «Մուրճ»-ի բաժանորդներին, ամսագրի որ և է համարը չստանալու դէպքում՝ բաց նամակով անմիջապէս տեղեկացնել խմբագրութեանս:

ՎԵՀ. ԿԱՅՈՂԻԿՈՍԸ ներկաւ օգոստ. 25-ին, ուրբաթ օր, երեկոյեան ժամ 8<sup>1</sup>/<sub>2</sub>. Ա. Էջմիածնից ժամանեց Երևան. 26-ին ալցելեց եկեղեցիները. 27-ին, պատարագի ժամանակ, իջաւ եկեղեցի, ուր քարոզ խօսեց. Առաջ ենք բերում մի քանի քաղաքացներ. Քարոզի մէջ Վեհ. Կաթողիկոսը ղժգոհութիւն չալտնեց երեանցինելից. «Ժողովուրդ տագնապի մէջ է, առաջնորդ, քահանաւ իրենց պաշտօն չնչ ճանչնայ. Կարծես ամենքդ ալ կուսակցութիւն կը սիրէք...»: «Դուք ալ երեւանցիներ, ձեզի զարգացած կը համարէք, մշցումներ կ'ընէք, բայց դեռ տնաւ էք, ոչնչ չգիտէք. ինչ մի երեսելի գործ ունիք արած. «Սասուն իւր կոտորածով անուն ժառանգեց, իսկ ձեր կոտորածը բարողական է, ազգի տունը, ձեր տունը կը քանդէք: Դպրոց սիրէք, ձեր որդւոց կրթութեան վրայ մտածէք, կուսակցութիւնը թողէք, միութիւնը չարգեցէք: Մարդիկ կան որ խելքով կը գործեն, մարդիկ կան ուսումով, մարդիկ ալ կան որ իրենց հարստութեամբ կ'օգնեն ազգակին գործերին. սական դուք կ'ըսէք հարուստներին թէ դրամ տաէք ու մի խօսէք, գործի մէջ մի միջամտէք: Զէ որ փող տւողն պիտի և խօսէ, և գործ պահանջնու—Ապա առաջ բերելով այն առածը թէ ճրագն իւր տակը լուս չի տալ, չալտնեց՝ «Եթէ կ'ուզէք իմանալ իմ զբաղմունքս, համեցէք էջմիածին և կը տեսնէք հազարաւոր աղքատներ, որոնք մերկ ու բոկոտն ձեռքերնին պարզած հաց կը խնդրեն: Առոնք գիտեն թէ Հայրիկ շատ մեղք բերէք իրեն հետ... Հայրիկ չի չոգնէր, կ'ելնի կերթաւ մեղրի փեթակներէն մեղր կը ժողովէ, դարձեալ անոնց կը բաժնէ: «Դպրոց ունիք՝ տղայոց, և աղջիկների. նոցա մէջ ալ կուսակցուկան ոգի մտած է: Միթէ արժէ որ էջմիածնից Ձեր կաթողիկոսը գաւ աչտեղ դպրոցական

հոգսերը հոգալու, որ առանց արդ էլ իմ վիճակներիս կառավարելուն հոգսերը շատ են ծանր, Կը իմնդրէի ձեզ սիրով ապրիք, եթէ դուք ձեզի օգնել կարող չէք՝ իս ալ կ'օգնեմ ձեզ, թէ նիւթապէս և թէ բարուապէս»:

ԱՐԻՍՏԱԿԱՍՆԸ ՍԵԴՐԱԿԵՍՆԸ ԱՐՔԵՓԻՍԿՈՊՈՍ, ՎԵՀԱՓՈԽ կաթողիկոսը արքութիւն է չնորինել Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանին: Դէպի իւր պաշտօնատեղին՝ Առտրախան՝ Արիստակէս արքեպիսկոպոսը կ'ուղերւի սեպտեմբերի կէսին:

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԻ ՓՈԽԱՆՈՐԴ ՎԵհափ. Հալրապետը, նշանակած է Անանիա եպիսկոպոսին, որ առաջ փոխանորդի պաշտօնակատար էր:

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԶ Թենիկ վարդապետը, որը կատարելապէս անհամապատասխան է իւր պաշտօնին և որի զէմ բազմաթիւ գանգատներ են եղած, հեռացնուում է իւր ներկայ պաշտօնից:

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊԲ. ՏԵՍՈՒԶ ընտրաւած է հոգաբարձութեան կողմից և հաստատաւած Վեհ. Կաթողիկոսից իրաւաբանութեան կանդիդատ պ. Տիգրան Յովհաննիսեան: Ալդ պաշտօնի համար ամառաւակ սկիզբները հոգաբարձութեան կողմից հրաւիրւած էին պ. Լեռն Մանուկեանց և պ. Յովհ. Տէր-Միրաքեանց, բայց յետու վրայ հասան խառնակութիւններ դպրանոցի վարչութեան մէջ, որոնցով տեսչի ինդիրը լիտածուեց մինչ օգոստոսի վերջը:

ՑՈՎՀԱՆՆԵԿԻ Տէր-ՄիրԱՔԵԱՆՑ նշանակած է տեսուչ Ալեքսանդրապոլի հալոց եկեղեցական-ծխական գպրոցների, Երեանի թեմական տեսչից անկախ գործելու արտօնութիւնով:

ՀԱՅԱՐԱՄԵԼԱԿ ՏԱԹԵՒԻ ՎԱՂՆԻՔԻ ՆԵՐԿԱՅ տարին լրանում է Տաթեւի վանքի հազարամեակը,

ՍԱԱՍՈՒՆԻ ԿՈՏՈՐԱԾԻ ՏԱՐԵԴԱՐՁԸ կատարեց օգոստոսի 13-ին և ակտ առիթով հոգեհանգիստներ տեղի ունեցան Կ. Պոլսում և Լոնդոնում: Ալդ օրը Գում-Դարուի մայր եկեղեցում պատարագից պատրիարք Իղմիրեան, Գատը գիւղում՝ Ս. Մելքիսեդեկ Մուրագեան, Սկիւտարում՝ ս. Ալէաթիան, Ղալաթիալում՝ Վահան վ. Յակոբեան, Պերալում՝ Ներսէս ծ. վ. Խարախանեան:

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԴՐԱՄԱՐԿԱՆ Մենք ստացել ենք հետեւալը տպագրելու համար:

«Ուսուցչական փոխադարձ օգնութեան դրամարկով իմուղիրը, որ ահա մի քանի տարի խօսակցութեան առարկան է դառել մեր ծխական ուսումնաբանների ուսուցիչների մէջ, որ անցեալ ամառանքան ժողովների ու վիճաբանութիւնների նիւթ տւեց Թիֆլիսում ամառը հաւաքւած դաւառական ուսուցիչներին, ակտ ամառ նոյնպէս

ինքն ըստ ինքեան զարթեց և արեց մի, թէն փոքրիկ, բայց շափելի քավ դէպի առաջ:

«Ոսկորական խօսակցութիւններից ու վիճաբանութիւններից չետոք՝ ընդհանուր համաձայնութեամբ վճռւեց. ալս առաջիկակ ուսումնական տարւակ ընթացքում՝ զանսզան քաղաքներում զտանւող ուսուցչական խմբերը պիտի աշխատեն իրանց մէջ մի. գումար ժողովել, որ ապագայում կազմելիք զրամարկդի հիմքը լինի: Այդ վճիռը մանաւանդ զսրծնական-խելացի բնաւորութիւն ունի, որովհետեւ հաւաքւած գումարը ալսպէս թէ աճնպէս կը խմբէ ուսուցիչներին, և գուցէ միւս ամառ աւելի զգալի կերպով զարգանաչ և առաջադիմէ ուսուցչական զրամարկդի հարցը: Մենք առաջ էլ ասել ենք, դարձեալ ասում ենք—քանի որ հասարակութեան մէջ ոչ ոք չի ուզում մտածել ծխական դպրոցի ուսուցչի կնաճքը ապահովելու մասին, զոնէ թող իրանք, ուսուցիչները, մտածեն իրանց մասին: Գոնէ իրանք ներկայումս կազմելով մի պատկառելի դասակարդ—թող իրանք սեփական միջոցներով ու փոխադարձ օդնութեան պաշտպանութեան ուժով՝ գոնէ չնչին ապահովութիւն ստեղծեն իրանց թշւառ և օգնութեան կարօտ ընկերների համար: Թող ինեղնելը իրանք մտածեն իրանց մասին, թող գոնէ իրանք պաշտպանեն ու հովանաւորեն իրանց կարօտեալ վիճակակից ընկերներին:

Երանեկ Պաղապահանց»:

**ՄՇԱԿԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵՍԱՆ ԿԱՐԳԵՄԸ:** Աեզ հաղորդում են որ «Մշակու-ի վեր ջին համարներից մինում, որ պատեհնութիւն չենք ունեցած ստանալու, գուք մեզ խրատ էք կարդացած թէ ինչ ձեռվ պիտի նաևակ գրէինք ձեզ՝ հասցէի փոփոխութեան մասին: Իբր թէ գուք պահանջում էք որ հասցէ փոխողը անհրաժեշտաբար իւր նախքին հասցէն չափանիք մատնէ, և որ մենք, իբր խմբագիր, այդ կարգը պէտք է դիտենանք: Մենք չիտենք թէ ձեզ մտ ինչպիսի կարգ ու կանոններ են թագաւորում, որ ալլագան դժւարութեամբ էք գտնում հասցէները ան անձերի որոնց «Մշակ» է ուղարկում: Եթէ դուք ունենաք այն կարգ ու կանոնը, որ վայել է մի թերթի խմբագրութեան, գուք ձեր բաժանորդներին աւելի հանգիստ կը թողնէիք: Եւ որովհետեւ ձեր թերթի 22 տարւակ անցեալը, որպէս երեսում է, չի բաւել ձեզ ազդ կարգը սովորեցնելու, մենք ձեզ կը սովորեցնենք: Բաւական է որ դուք, ուրիշ մատեաններից դուրս՝ ունենաք մի մատեան, ուր աչքբենական կարգով գրւած լինեն ազգանունները և անունները բաժանորդների և, նոցա զիմաց՝ նոցա վերջին հասցէն: Եթէ Դուք ունենաք այդ անհրաժեշտ մատեանը՝ ամեններին հարկ չէիք ունենալ անքան զալմաղալներ բարձրացնելու թէ ուր էր առաջ ուղարկում թերթը, դիցուք ուն-

Հազրապետ Կիրակոսեանին, որը ուղարկում է ձեզ նամակ «ալսուհետեւ իւր համարները ուղարկել Բաթումու Արովհետեւ բաւական կը լինէք մատեանի մէջ բաց անել «Է» տառը և մի բոպէում արդէն կը զըսնէիք նշանակւած»:

Կորագուսանու Այրաքետ— Եան, Շեմահինսկայ չ. դ. № ալմինչ:

Եւ ան զուք կը չնջէիք ազդ հասցէն և կը դնէիք նոր ուղարկւած հասցէն: Նոյն պարոնը եթէ ձեղ տարւալ ընթացքում նորից կ'ուղարկի նամակ՝ «ալսուհետեւ համարները ուղարկել Պետրովսկ— ալսինչ հասցէով», եթէ նա դրած էլ չլինի իւր նախկին հասցէն, գուք, փոխանակ նոր զալմաղալներ բարձրացնելու, կը դիմէիք ձեր ազդ մատեանին և ամենազն հեշտութեամբ կ'իմանալիք որ այդ պարոնին համարները դորանից առաջ ուղարկում էին Բաթում, ակմինչ փողոց և ալսինչ առեն:

Ի հարկ է, մեր խորհուրդը Ձեզ համար պարտաւորիչ չէ, և զուք մի մատեան պահելու նեղութեանը կարող էք դերադասել բաժեանորդների հետ հրապարակական աճվերջ կուրսներ մղելու տարօրինակ հաճուքը: Այդ արդէն ձեր բանն է:

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ «ԱԱ.ԽԵԹԻԱՅ»: Նորերս երկրագործական մինիստրը հաստատեց Կախեթիավի ազգեգործների ընկերութեան կանոնադրութիւնը, «Աւախիթիա» Փիրմալով: Ընկերութեան նաբառակին է՝ օգնել իրանց անդամներին ամենաչահաւէտ կերպով վաճառելու խաղողի ալզիների արտադրութիւնները, հազորդելով նոցա անհրաժեշտ տեխնիկական տեղեկութիւններ, տարածելով ամենալաւ տեսակների վազեր, ընդունելով զինվները մշակելու և պահպանելու համար՝ խելացի սարդարական անտեսութեան գործադրութեամբ, և վաճառելով ընդունած զինվները իւր Փիրմալի անունով: Այդ նաբառակով ընկերութիւնը մտադիր է Ռուսաստանում և արտասահմանում շինել պահեստատեղեր, ուարդափներ, խանութներ: Ընկերութեան անդամներին կը տրւին աւանուներ պահ տւած գինու արժողութեան մինչ մի երրորդը: Անդամներ կարող են լինել միան ազգետէրերը Կախեթիավի, այն է՝ Թելափի, Աղնախսի և Թիֆոնէտի գաւառների, բացի այն անձերից, որոնք իրանք զրադառնութեան զինեվաճառումնով: Ընկերութեան կենտրոնը կը լինի Թիֆլիսը: Անդամակցական վճարը սրոշւած է 20 ռուբլի ունիցած վազատունիերի ամեն մի դիսեալինից, եթէ անդամը ունի 5 դեսեատին: Խոլ ամելի ունենալու զէպքում՝ ամեն մի աւելի զեսեատինի համար պիտի վճարուի 10-ական ռուբլի: Բացի այդ՝ անդամները պէտք է ամեն տարի դրամական վճար տան ընդունած զինու արժողութեան 2 տոկոսի չափ:

ԵԵՐԱՄԱԳԱՀՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ է կազմած Քութիսի ու ի նահանգի

շերամապահներից, Նախաճեռնութեամբ տեղական գիւղանահաներից մէկի՝ Ն. Ի. Ցիրնուլիի, Ընկերութիւնը (Վրացիներից բազիացած) շուտով սկսելու է իւր գործողութիւնները. Ներկազումն նա ունի 400.-ից աւելի անդամներ, զիմաւրապէս Քութաւիսի գաւառից. Նոցա մէջ կան նաև շատ գիւղացիք:

**ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՄԸ ԿՈՂԿԱՍՈւմ ԳՈՒՐ-  
ԹԻՒՆ ՈՆԻ ՄԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ, ՈՐԸ ԿՊՀՈՎՈՒՄ է. ՕԲЩԵСՏՎՈ ՅՈՅՏԱՅՈ-  
ՎԼԵԲԻЯ ՈՐՈՅԸ ՁԱՎԱՐԱԿԱՆ ԽՐԿՏՈՒՄ ԽԱՎԱՅԻ ԸՆԿԵՐՈՒ-  
ԹԻՒՆ ԿՈՂԿԱՍՈՎՄ ՈՎՋԱՎԻԱՌ ՔՐԻՍՏՈՆԿՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ  
ՀԱՅՈՒՐ. Ազդ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ հիմնւեց 1860.-ին, Երկրիս անժամանակ-  
աւ փախարքակ իշխան Բարիստանսկու և Վրաստանի էք-  
պարչու Խսիդորի ձեռքալ, այն նպատակով որ ուղղավիառ (ո.ու-  
սաց) կրօն տարածւի Կողկասի լեռնաբնակ ցեղերի մէջ, որոնք պատ-  
մական հանգստամանքների չնորհիւ մահմեղականութիւն են ընդունած։  
Ազդ նպատակով ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ քարոզիչներ է պահում, և կեղեցի-  
ներ է շինում, հինգամական տաճարներ է նորոգում, ծխական  
դպրոցներ է հիմնում, սրբազն գրքեր և կրօնական-բարողագիտա-  
կան գրքեր է տպում ու տարածում։ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ մէջն են եր-  
կրիս բարձրաստիճան անձերը, ունի շատ անդամներ և ստանում է  
տէրութիւնից նշանաւոր նպաստ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ հաշիւը 1892 թա-  
կանի համար այժմ հրատարակած է։ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ իւր բոլոր նպա-  
տակների համար ունէր 148.984 ռուբլի 54 կոպէկ։ Ազդ գումարը կազ-  
մեկ էր ալսպէս՝ նպաստ պետական գանձարանից 19.932 ռ., Վարա-  
կազի կալւածքի տարնեան եկամուտի փոխարէն տէրութեան վճարը  
35.000 ռ., ուլսական օրդէնների կապիտուլից՝ 35.000, անդամագնար-  
ներից 4.500 ռ., մասնաւոր նէրներից 2.478 ռ. 27 կոպ., զրամագլխի  
տոկսներից 2.552 ռ. 90 կ., գանձանակներով ժողոված 20.072 ռ.  
98 կոպ.։ Մսխւած է հոգեորականութեան պահպանելու, դպրոցա-  
կան գործի, եկեղեցիներ նորոգելու և նորերը շինելու վրա և այն  
128.009 ռ. 86 կ., մնացորդ 1-ին լունւ. 1893 թ.՝ 20.974 ռուբլի  
68 կոպ.։ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ունէր իւր վարչութեան ներքու 1892  
թւականին 149 եկեղեցի շտատավիճ, 51 եկեղեցի՝ վերապրած  
(որպուլուսաւաշեան), 3 աղօթարաններ և մի մատուռ։ ԸՆԿԵ-  
ՐՈՒԹԵԱՆ գործերը վարում է խորհուրդը՝ նախագահ ութեամբ Վրաս-  
տանի էքպարիսի։ ԸՆԹԱՑԻԿ գործերի համար խորհուրդը ունիցել էր  
1882 թւին 11 նիստ։ Ազդ 1892 թ-ի լնթացքում այլ կրօններ  
գտանազներից ուլսաց ուղղավառութիւն ընդունողների թիւը  
կողմիասում եղուծ է 448 հոդի։**

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՍԱՐԱԿԱՅ ԴՐԱԴԱՐԱՆԸ, Ազդ անունով Թիֆլիսում կաէ մի

դրադաբան (Յոլովինսկի պրոսպեկտի վրայ, պալատի դիմաց), որը հիմնած է և պահպանում է առևտութեան հաշտութեան կազմութեան կազմական գրքերի կովկասագիտութեան վերաբերեալ Ներկապում նա ունի 18.220 անուն գիրք 33.023 հատորով։ Ասիակամ դարութիւն ունեցող գրադարաններից, որքան մեղ լաւոնի է, ալդ գրադարանը երկրորդն է Կավկաֆավի (Հնդկաստան) գրադարանից քառութեան լուս տեսաւ նորա գրքերի երրորդ գրացուցակը։ Առաջինը տպւեց 1861-ին, ուր մտան 11.655 գիրք 11.655 հատորով։ այնուհետեւ տպւեց նորա առաջին շարունակութիւնը 1866 թ-ին, իսկ երկրորդը՝ 1880-ին, և այժմ երրորդը՝ 1895 ին։ Այդ գրացուցակների չառաջարաններում տրւած է հիմնարկութեան պատմութիւնը և զարգացումը, նորա նպաստակը, բնաւորութիւնը և նորա նշանակութիւնը երկրիս համար։

Յիշեալ գրադարանը արտօնաւած հիմնարկութիւնն է նրանով, որ Կովկասի տպարաններում լուս տեսնող ամեն գրքից և պարբերական հրատարակութիւններից մի-մի օրինակ ձրի ուղարկում է ալդ գրադարանին ի սեփականութիւնն, Կովկասան գրաքննական կոմիտէտի միջոցով։ (Նկատենք, որ Կովկասում լուս տեսնող ամեն գրքից և թերթից գրաքննական կոմիտէտը ձրի վերցնում է 13 օրինակ, մեկը թիֆիխի յիշեալ գրադարանի, մնացածները՝ Ռուսաստանի այլ գրադարանների համար)։

Վերջին տարիներս շատ է խօսւում որ ալդ գրադարանը տէրութիւնը չանձնի քաղաքին։ Դորա փոխարքէն գրադարանի կառավարիչ պ. Մելլէր յառաջարանում նկատում է։ «Եթէ քաղաքը համաձայնէր իւր վրայ առնել միանւագ ծախքերը տեղի ընդարձակելու և մշաճան ծախքեր՝ ծառաւղոնների թիւը աւելցնելու, պարբերական թերթները լրացնելու և մի քանի ալզ տնտեսական կարիքների համար, այն ժամանակ գրադարանը կարող կը լինէր չալսնի չափով յարմարւել քաղաքի բնակիչների պիտոքներին, շարունակելով պահպանել իւր բնաւորութիւնը իբր պահեստ Կովկասի վերաբերեալ տեղեկատու գրքերի»։

**ՄՈՒՂԱՆԻ ԴԱՆՑԸ** հետազոտող խումբը, որ կազմել էր երկրագ. և պետական կալւածների մինիստրութիւնը (խումբը կազմւած էր ինժենէրների նաւազոցիից, զիւղատնետես Սարգ. Մելլիք-Սարգսեանից և երեք տեխնիկուններից) ներկայ տարւազ սկզբից սկսակելով իւր աշխատութիւնները՝ ալժմ արդէն վերջացրել է Արաքսի երկու ափերի տեղագրական (տոպոգրաֆիական) հետազոտութիւնը, բաց է արել Արաքսի վրայ մի քանի ջրաչափական կալարաններ, մի շարք հաշիւներ է արել Քուր և Արաքս գետերի ջրաբաշխութեան մասին Մուզանի

անապատում, հետազօտել է Արաքսի աջ ափի վրայ գտնւող գիւղերի անտեսական դրութիւնը, ուսումնասիրել է Մուղանի բուսականութիւնը և կենդանական աշխարհը (Փլորա և Փառւնա) և մեխանիկական անալիլ է արել Արաքսի ջրից տւած մնացորդների քանակը որոշելու համար Կլիմաչական որպիսութիւնները հետազօտելու համար՝ ներկայ աշխան ենթադրում է օղերնութաբանական կաչարան բաց անելու Մուղանի դաշտում։ Հետազօտող խմբի գիւղատնեսեան անդամը բացումում է մեզ որ Մուղանի հողը զարմանալի արդիւճաբեր է. մինչդեռ, օրինակ Բորչալուում, ութ պուղ ցորենի սերմը տալիս է ամենաշատը 80 պուղ, Մուղանում կարելի է լինում ստանալ 2—300 պուղ։

ԳԱՆԳԱԼԻ նահանգական քաղաքը, որի միջուկ չի անցնում Անդրկովկասեան (Թիֆլիսից Բաքու գնացող) երկաթուղու գիծը, և այդ պատճառով այդ քաղաքը մեծամեծ վնասներ էր կրում, այժմ չորս վեցրու տարածութեան վրայ կապւած է երկաթուղու կալարանի հետ ձիաքարչ երկաթուղիսից որը հասնում է մինչև քաղաքի դիմաւոր հրապարակը։ շուտով գիծ կը դնի մինչև քաղաքի վերին հրապարակն ևս Զիաքարչի գծի գծի կառուցանողն է Թիֆլիսեցի Ալէքսանդր Սովորոնեան Վորդանեան։

Քաղաքում սկզբ բացւած է նաև պահեաս երկրագործական գործիքների, որի տալիք օգուտները անշուշտ մեծ կը լինեն, հեշտացնելով հին, նահապետական գործիքների վորփակութիւնը եւրոպական լուսագոյն զործիքների հետ։

Քաղաքում պատրաստութիւններ են տեսնւում քաղաքացին ինքնավարութեան համար ընտրութիւններ կատարելու։

ԳԻՒՂԱՏԾԱՑԱԿԱՆ ԴՊՐՈՅՑ. Ախալքալակի քաղաքացին զպրոցին կից բացւած է կաթնամնաեսական դպրոց, որի կառավարիչ նշանակւած է ալ. Տիգրան Դիւլալեանց, որ աւագ աւագ ուսուցիչ էր Վերին Ազուլսիր հալոց երկսեռ գպրոցներում։ Ծովովը գաղաքական կրթութեան մինիստրի բարիխօսութեամբ՝ Թիֆլիսի նահանգի տէրունական կալածների կառավարութիւնը բարկացրել է դպրոցին 200 զեսետին հող Տաբիցկուրեան լճի մօտերքում կաթնամնաեսական ագարակ շինելու համար։

ՀԱՐԻՒՐԱՄԵՍԱԿ ԲԵՑԿԻՑԻ ՄԱՀԻԼԱՆ. Ներկայ օդոսոսու 31-ին լրացաւ հարիւր տարին Բեցկիցի մահան օրից Բեցկից (Խեան Խւանովից) դործակիցն էր կալսուհի կատերինէ Մեծին և կարելի է ասել առաջինն էր որ հիմք դրեց Ռուսիակում ընդհանուր կրթութեան և առաջինն էր որ հիմք դրեց Ռուսիակում իգական կրթութեան Նորամանկավարժական ունիորմեների հիմքում դրամ էին Փրանսիական

18-րդ դարի էնցիկլոպեդիստների և Ռուսօֆի գաղափարները։ Նորա գաղափարով հիմնւեց Մոսկվայում Ռուսաստանի առաջին կրթական տունը, Պետերբուրգում բացւեցին՝ առաջին կրթական ընկերութիւնը ազնւական աղջիկների (Սմոլնի ինստիտուտ) և կրթական տուն որբերի համար, Մոսկվայի օրինակով ացիների, պահեստի և փոխատու գանձարաններով։ Բայց ազգ՝ նա եռանդ ցուց տևեց քաղաքային դպրոցներ բանալու համար, որով շատ նպաստեց գրագիտութեան տարածւելուն Ռուսական կատարինէ Մեծը նորա ծառացութիւնների համար նորան դարձրեց իսկական գաղտնի խորհրդական և պարզե տւեց մեծ հարստ ութիւն, որ Բնեցկի գործածնեց բարեգործական նապատակներով և մանաւանդ կրթական հաստատութիւնների ծաւալման համար, որի համար սենատը տևեց նրան ուկէ մէղալ, վրան գրած՝ «աիրու համար առ հայրենիք»։

**ԱՆՏՐԿԱՍՊԵԱՆ** ԵՐԿԱԹՈՒՂԱԾ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ, Ռուսաց «ՊրաՎԻ-  
ՏԵԼՅՍՏՎԵՆНЫЙ ВѢСТВИЕ» («Պետական համբաւաբերը») հազորդեց, մի-  
նիստրների կամիստչի և պետական տնտեսութեան գեպարտամէնտի  
միացած նիստում կալացած և բարձրագոյն հաստատած վճռովը  
իրաւունք է տրւած հաղորդակցութեան ուղիների մինիստրին ձեռ-  
նամուխ լինել անդրկասպեան երկաթուղին շարունակելու Սամար-  
կանդից Գլուխկի, Բեհովատի, Խոջենտի, Կոկանի ու Մարգելանի  
վրացով մինչև անդիման, ճիւղաւորած գծով մինչ Տաշկէնտ, Ուղին  
կառուցանելու միջոցին կարող են փոփոխութիւններ տեղի ունենալ  
մանապարհը կարճացնելու և էժան նստեցնելու համար։ Անցեալ  
տարւակ հետազոտութիւններով՝ Սամարկանդից մինչ Անդիքան գծի  
երկարութիւնն էր 516½, վերասու Գծի կառուցումը Սամարկանդից  
մինչ Անդիքան, ճիւղով մինչ Տաշկէնտ, բնեմերով և շինութիւն-  
ներով, բաց առանց շարժական կազմի (չոգեկառաքեր, վագոններ և  
ալլն) հաշւած էր 25.791.807 ռ., եթէ Տաշկէնտի ճիւղը սկսի Խա-  
ւաստից, և 27.137.603 ռ., եթէ այդ ճիւղը սկսի Բեկովատից, ամ-  
բողջ գիծը կը շինէ 3½, տարում։

**ՌՈՒՍԱՑ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳՐԻՔԻՑ** Կովկասեան պետական  
գպրոցներում աւանդուղ ուսաց աշխարհագրութեան դասագրքում  
Գеոգրաֆիկ Ռուսական կառավագանք և պատմութեան պատմութեան  
մեջ են Ա. Բարանով և Ն. Գորելով (7-րդ տպագրութիւն, Ս. Պե-  
տերբուրգ 1894 թ.) երես 93, § 79 առած է, «Առվկասի արդիւնա-  
գործութիւնը գեռ քիչ է զարդացած... զորա գլխաւոր պատճառը  
Կովկասի բնիկ ժողովրդների անսովորութիւնն է  
դէպի աշխատանքը, ալլնան...»։

† ԵՆԴԵԼՍ (Ֆրիդրիխ), բարոնի սոցիալիստ, վախճանեց 1819

թւականին Գերմանիայի Բարմէն քաղաքում, 1847-ին Լոնդոնում, ապա Բրիտանիկում քարտուղար էր կոմմոնիստների միութեան կենտրոնական մասնաժողովին. 1848-ին Կարլ Մարքսի հետ միասին կազմուց բոլոր երկիրների պրոլետարներին ուղղած «Առմմունիստական մանիֆեստը». Անգլիացից նա նեցուկ եղաւ Մարքսին՝ բանւորական միջազդավին շարժումը կազմակերպելու (Հիմնադրութիւնը «Ոնտերնացիանալ» կոչւած միջազդավին բանւորական ընկերութեան 1864-ին) և սոցիալ-դեմոկրատիկական պրուգանդավի գործում. Նորա գլխաւոր աշխատութիւնն էր «Աշխատաւոր դասակարգերի դրութիւնը Անգլիակում» (Die Lage der arbeitenden Klassen in England)— 1845 թւականին, որ երկրորդ տպագրութեամբ նա լուս ընծանեց 1892 թւականին. 1876-ին նա հրատարակեց «Ընտանիքի, պետութեան և անհատական սեփականութեան ծագումը» և ապա «Դիտական սոցիալիզմը»:

Էնգլիսը առհասարակ նկատւած էր որպէս գլխաւոր գործակից Կարլ Մարքսի, որի հետ նա կապւած էր նաև ընկերական մտերմութեան կապերով. Ազ պատճառով Մարքսը իւր ձեռագիր աշխատութիւնները կատակել էր Էնգլիսին, որը, նշանաւոր տնտէսագիտի մահից վերոց 1883-ին՝ զբաղւած էր նորա «Կապիտալ» խորագրով լայտնի հեղինակութեան լուս չտեսած մասերը հրատարակելու գործով, և հրատարակեց «Կապիտալ» 2-րդ և 3-րդ մասերը. վերջինս 1894 թւականին:

† ԵԽԱՆԳՈՒՅՑԱՆ ԿԱՏԱՐԻՆԵ. Սեպտեմբերի 2-ին շուրջ 42 տարեկան հասակում, երկարաւան հիւանդութիւնից լետով, վախճանեաց տիկին կատարինէ Եւանդուցեանց. Հանդուցեալը մէկն էր այն անդրանիկ հայ կին դործիչներից, որոնց մասին ակնարկ արինք ամսագրիս անցեալ համարում (էջ 1044). Հանդուցեալը, որ դեռ օրիորդ ժամանակ մօտ երկու տարի գործեց Գագկանեան օրիորդաց զպրոցում 1870 թւականի շուրջը, ամուսնանալուց լետով մշտական անդամն էր այն խմբերի, որոնք մասնակցում էին հայոց հասարակաց գործերին. Մանաւանդ աչքի ընկնող ուժ էր նա հայ սիրողների թատրոնական ներկայացումներին. ապա հանդուցեալը մէկն էր 18 2 թ. հաստատւած Թիֆլիսի Հալոհնեաց Բարեգործական ընկերութեան ծրագիր մշակողներից և հիմնադիրներից, ընկերութեան, որի վարչութեան անդամի պաշտօնում շատ տարիներ գործեց. մանաւանդ վաստակ ունեցաւ Ընկերութեան հաշով պահպանւող կար ու ձեի զպրոցի հիմնադրութեան համար.

Հանդուցեալը զուտարին էր հանդուցեալ բժշ. հարաւթիւն Յովհաննիսեանի և ամուսինը պ. Գևորգ Եւանդուցեանին.

## ՆՈՐ ՍՏԱՑԻԱՆ ԴՐՅԵՐ

- 1) ՀԱՄԱՌՈԾ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐԻ գասատուռթեան պատրաստողների համար: Կազմեցին Թիգալի ուսումնարանական ըրջանի փորձնական մասնաժողովի անդամները: Թարգմանեց ռուսերէնից Յ. Սառիկեանց: Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսևանցի, 1895, գինն է 30 կոպէկ:
- 2) ԼԱԶԱՐԵՎՅ, ոլք. յե. ճ.—Причины бедствий армянъ въ Турции и ответственность за разорение Сасуна. Թիֆլիս, տպ. Յ. Մарտիրոսևանցի, 1895, գինն է 40 կոպէկ:  
(Լազարեւ, գնդապետ Յակով Պաւլու Պաւլիստեան.—Թիգրիսի հակերի թշուառթիւնների պատճառները և պատասխանատութիւնը Սասունի կործանման համար: Բրոշիւր 45 երես):
- 3) ՍՈՎԵՏՅ ԸԵՅՅԱ ՆԵՖԵՆՐՈՄՅՇԼԵՆՆԻԿՈՎՅ. Օբзоръ Бакинской Невтюной промышленности въ Америкѣ за 1894 г. Съ приложениемъ 6-ти графическихъ таблицъ и карты. Բաքու տպ. Տէր-Օւանէսովի և տպ. Արօր, 1895, գինն է 3 ռուբլի:  
(Եղորնուրդ նավագործների համաժողովի: Տեսովթին Բաքւայ նաւթափին արդիւնաբերութեան և տեղեկութիւններ նաւթափին արդիւնաբերութեան Ամերիկայում 1894 թ.: 6 դրաֆիկական ցուցակ. ներով և քարտէզով):
- 4) Սովետъ съезда нефтенромышленниковъ. Сравнительные статистические данные о бакинской нефтяной промышленности за 1889—1895 годы: Բաքու, տպարան Արօր, 1895, գինն է 50 կոպ.:  
Council of congress of the russian petroleum producers. Statistics of petroleum industry in Baku. 1889—1895):  
(Եղորնուրդ նավագործների համաժողովի: Համեմատական վլաճակարտական տեղեկութիւններ Բաքւայ նաւթափին արդիւնաբերութեան մասին 1889—1895 թւականների համար):
- 5) ԽԱՆԱԳԵՍԱՆՅՅ, Յովհաննէս.—Գիւղացի Պետօնու ձշգրիտ պատմութիւն, ժողովրդական լեզուով: Երեան, տպ. Ա. Գուլամիրեանց. 1895, գինն է 10 կոպ.
- 6) ԲԱՋՖԻ.—Զահրումար (վէպ, Թիֆլիսի հակերի կեանքից): Հրատ. ալրի Անոն Բաֆֆիի—Թիֆլիս տպ. Յ. Մարտիրոսևանի, 1895, գինն է 2 ռուբլի:

# Ստացւած է եւ վաճառում է ՄԱՏԹԵՈՍ ԱՐՔԵՊ. ԻԶՄԻՐԼԵԱՆԻ

(ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՅ ԿՈՆՍՏԱՆԴԻՆՈՎՈՂ. ՍՈՅ)

ԻՍԿԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԸ

ՃԱՆԱՋԱՆ ԴԻԲՔԵՐՈՎ

Գինս է 30 կ. Մենցեն 1 թ. 50 ԿՈՊ.

Դիմել՝ Տիֆլիս, Михайловск. мостъ, магазинъ С. Матиняцъ.

ԲԺՇԿ. Վ. ԱՐՁՐՈՒԽՈՒ

Հ Ի Պ Ն Ո Տ Ի Ս Ի Մ

ՄԱՍՆ I

Անզգայական քուն, — Քարացումն, — Քնայածութիւն, — Ներշնչումն:  
Թովչութիւն կամ Հրաւոյը:


Գինն է 2.5 կոպ.

ՄԱՍՆ II

Հիւնոտիսմը հին գարերում, — Դիւականութիւն և Կախարդութիւն:  
Սրբակրութիւն (մարգարէներ, քարոզիչներ), — Օրինակումն, — Ամ-  
բոխի հոգեբանութիւն:

Գինն է 1.5 կոպ.

Վաճառուում է Կենդրոնական գրավաճառանոցում:



# ՄՈՒԽՈՃ

ՔԱՂԱՔԱԿԱՆ - ՀԱՍՏԱԿԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ

## Ա. Մ Ս Ա. Գ Բ Ի

ԲԱԺՄՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ 1895 ԹԻՍԿԱՆԻ ՀԱՄԱՐ

ՇԱՐՈՒՆԱԿԻՑԻ Ֆ

ԲԱԺՄՆՈՐԴԱԳԻՆ: «Մուրճի բաժանորդագինն է; **10** ռուբլի: Աւսուցիչները, ուսանողները, որպէս նաև արհեստագորները վայելում են **2** ռուբլու դիջում; վճարելով **8** ռուբլի:

Բաժանորդագինը կարելի է վճարել նաև մաս-մաս, միզբում  
5 (կամ 4) ռուբլի, մնացեալը լրացնելով տռաշին կիսա-  
մետիում:

Բաժանորդ գրւում են, դիմելով՝

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԻ, Թիֆլիս, Վելեմինեան փողոց, տուն № 8:

Տիֆլիս, Въ Редакцію журнала „МОУРЧИ“.

Tiflis. Rédaction de la Revue „MOURTCHI“

և կամ դիմելով հետեւեալ անձերին կամ հիմնարկութիւններին;

Թիֆլիս—  
ԲԱՅՐՈՒ—  
ԲԱՅՐՈՒ—

ԲԱՅՐՈՒ—պ. Սարգիս Մակարեան, Ծովիանեանի բանկ. գրասենեակ:

ԿԱՐՍ—պ. Աբէլ Ասլիքեսեան:

ԱԽԱԼՔԱԼԱՔ—պ. Զալալ Տէր. Գրիգորեան:

ՆՈՒԻԻ—պ.պ. Աբրահամ Բունիածեանց և Խաչատուր Խոջամիրեանց:

ԱԳՈՒԻ.ԻՍ—պ. պ. Ստեփան Արամիանեանց և Աւետիս Գալ թեանց:

ՆԱԽԻՋԵՒԱՆ (հին) —Արսէն վարդապետ Պլաճեանց:

ՂՋԱՄՐ—պ. պ. Հմայեակ Մաժինեան և Կոստ. Գիւլիագարեան:

ԵԿԱՏԵՐԻՆՈՐԴԱՐ—պ. Արամ Շապովալեան:

ՄՈՍԿՎԻԱ—պ. Ալեքսանդր Ծառուրեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐՓ—պ. Քր. Բաշինջաղեանին (Гостин. дворъ № 7):